




ՄԻՈՒՆ
Կրօնական Գրական
Բանասիրական



ՊԱՇՏՏՈՂԱԿԱՆ ՀՐԱՏ. ԵՐՈՒՍԱԼԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ՀՈՐ
ԵՐԶԱՆ 1958

ԼԲ.
ՏԱՐԻ

«سِيُون» مجلة أرمنية شهرية. أدبية. ثقافية. للغة والبيان

"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

— Կանոնական իրաւասութեանց խնդիրներ

Երես

1

ԿՐՕՆԱԿԱՆ

— Խրատ սիրոյ մասին՝ երանելի Յովնանէս Վարդապետի կողմէ տուած

6

— Արդարք եւ արմաւենին

ԳՐ. Ա. ԽԱՐԱՅԵԱՆ

7

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

— Նարեկացու սեղծագործութիւնք

Մ. ՄԿՐԵԱՆ

11

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

— Կաղնի ու եղեգ

ԼԱՅՑՆԹԷՆ

5

— Սիւմանքօ եւ Խնէ - Զարէ

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

16

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

— Պապ Աբգակունի

ՀՐԱՆԴ. Ք. ԱՐՄԷՆ

19

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

— Ս. Յակոբ եւ Վասիկան

25

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

— (Խել) Յովնանէս Թլկուրանցի

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

26

ՄԵՐ ԹԵՄԵՐԷՆ

— Համացոյց պատկեր Իսթանպուլի

ՎԱՐՒԱՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ

31

ԳՐԱԽՅԱԿԱՆ

— «Խիջնաբերդ»

ԳԷՈՐԳ. Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ

33

Գլուխ Կիւլպենկեան Հիմնադրութեան Նախագահ Տօք. Ժօզէ Ազրէսօ

Բերտիկաս կը ստանայ Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա. կարգի շքանշան՝

Ն. Ս. Ս. Ս. Վազգէն Ա. Կարօյիկոսի կողմէ

35

Պատշոնական Հաղորդագրութիւն Ս. Աթոռոյ Դիւանէն

36

ՆՇՈՒՄՆԵՐ

— Հայ եկեղեցւոյ եպիսկ. Ժողովներ

Ք.

40

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

— Հեռագիրներ

42

— Եկեղեցական - Բեմական

45

— Պատշոնական

46

ՍԻՈՆ-ի Տարեկան բաժնեգինն է՝
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Նիւիմ 20

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

—≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Բ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1958

◀ ՅՈՒՆՈՒՆԱՐ - ՓԵՏՐՈՒՆԱՐ ▶

ԹԻԻ 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՍՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐ

Ամաազրիս անցեալ տարուան Հոկտ. - Նոյեմբերի միացեալ թիւին մէջ խմբագրականով մը անդրադարձած էինք Եկեղեցւոյ սրբութեան և միութեան հիմնական ստորոգելիներուն: Այս խնդիրներուն շուրջ՝ զրած չէինք պարզապէս աստուածաբանական տեսութիւն մը ներկայացուցած ըլլալու նպատակաւ, այլ զրած էինք տեսական հիմունքները դնելու համար այն ուղիւ կեցուածքին, զոր ամէն հայ պէտք է ունենայ ի տես այն համատարած և խոր տալանապին, որուն մէջէն կ'անցնի մեր Սուրբ Եկեղեցին ներկայ ժամանակներուն: Գործնական քայլեր չենք կրնար առնել և իրայնական (ռէալիստիկ) ծրագիրներ չենք կրնար կազմել այնքան ատեն որ տեսական ամուր զեանի վրայ չենք կեցած:

Վերոյիշեալ յօդուածին մէջ երկու բան ուզած էինք հաստատել.

ա) Թէ Հայ Եկեղեցւոյ միութեան պահպանումը կենսական և անհրաժեշտ է թէ՛ կրօնական և հոգեւոր պատճառներով և թէ՛ հայութեան ազգային շարժման աշխարհի մէջ ամուր պահելու նպատակաւ:

բ) Թէ անհրաժեշտ է, Եկեղեցական-վարչական տեսակէտէ, հնար եղած չափով պահել իրաց նախկին վիճակը և զգուշանալ, ներկայիս մանաւանդ, Հայ Եկեղեցւոյ վարչական դրութեան մէջ արմատական փոփոխութիւններ մտնելու փորձերէն:

Ճիշդ է որ Առաջին Աշխարհամարտին հետեւանքով արմատական փոփոխութիւններ առաջ եկան Հայ Եկեղեցւոյ ընդհանուր վարչական կազմաւորման մէջ: Պոլիսը զադրեցաւ ազգային-Եկեղեցական կեդրոն ըլլալէ: Պոլսէն իրան ջնջուեցաւ: Հայ Ժողովուրդը աշխարհի զանազան երկիրներուն մէջ մեծ կամ փոքր նոր համախմբումներ կազմեց: Այս «զապոյթները», ինչպէս սովոր ենք ըսել, իրենց տեղական պայմաններուն համաձայն հաւաքական կեանքի կերպ մը գտան, և բոլորուած Եկեղեցիներու և երբեմն նաեւ զպրօքներու և մշակութային կազմակերպութիւններու շուրջ՝ կ'ապրին հաւատարիմ իրենց ինքնութեան:

Մօտաւորապէս քառասուն տարիներէ ի վեր բնական եղանակով մը քիչ շատ մնայուն և զործնական հաւնի մէջ մասած այս կապութիւնը ներկայիս որոշ

4729

170-98

19369ահ

Հափով զոհացուցիչ հանգամանք մը ստացած է տուեալ պայմաններու մէջ։ Նոր փոփոխութիւններու ստիպողականութիւնը և հնարաւորութիւնը կարելի չէ տեսնել ներկայ իրադրութեան մէջ։ Թերեւս յառաջիկային մեր ազգային-եկեղեցական կեանքը, դէպքերու ներքին տրամաբանութեան զարգացումով, պահանջներ զնէ նոր փոփոխութիւններու։ Սակայն առ այժմ այսպիսի պահանջներ իրենք զիրենք չեն պարտադրեր։ Մեր ազգային-եկեղեցական կեանքին ներկայ տիրական պահանջն այն է որ զանազան երկիրներու մէջ հաստատուած մեծ կամ փոքր հայ հասարակութիւնները իրենց ուշադրութիւնը կեդրոնացնեն կարելի եղած Հափով իրենց զոյութեան կուսանը ամրացնելու գործին վրայ։ Իրաց ընթացքը այս կը թելադրէ մեզի։


Արդ, մեր վերոյիշեալ խմբագրականով անդրադառնալէ ետք մեր եկեղեցւոյ միութիւնը ամուր պահելու անհրաժեշտութեան, ներկայ խմբագրականով կ'ոգեմք անդրադառնալ մեր եկեղեցւոյ վարչական բաժնուածութեան ինդրին, նկատի առնելով համառօտ կերպով այս բաժնուածութեան բնոյթն ու հիմունքները։

Հայ եկեղեցին մէկ է իր հաւատքով, ծէսով, կանոններով և նուիրապետական դրութեամբ։ Սակայն անիկա մէկ չէ իր վարչութեամբ։ Այսպէս, ունինք չորս նուիրապետական ինքնավար Աթոռներ սրոնցմէ խրաքանչիւրը ունի տարբեր վարչական դրութիւն և լիակատար վարչական իրաւասութիւն իր սահմաններէն ներս։

Երուսաղէմի Աթոռը, իր յատուկ և բացառիկ դիրքին և նկարագրին պատճառաւ, կը կառավարուի վանական կանոնադրութեամբ մը և վերին վարչական իշխանութիւնը ամբողջապէս հոգեւորականներու ձեռքն է։ Կուստանդնուպոլսոյ Աթոռը իր ներկայ սահմանափակ շրջանակին մէջ կը կառավարուի առաջնորդուած Ազգային Սահմանադրութեան ոգիով, բայց առանց պաշտօնական հաստատեալ կանոնադրութիւն մը ունենալու։ Կիլիկեան Աթոռը կը կառավարուի ձեւափոխուած Ազգային Սահմանադրութեամբ, յարմարցուած տեղական պայմաններու։ Այս յարմարեցումով կանոնականացուած է Կիլիկեան Աթոռին ամբողջական խզումը Կուստանդնուպոլսոյ Աթոռէն։

Իսկ Ս. Էջմիածնի նախամեծար Աթոռին իրաւասութեան ներքեւ եղող թեմերը կը կառավարուին աւելի պէսպիսուն և աւելի զանազանեալ վարչական պատկեր մը ներկայացնող կանոնադրութիւններով։ Սովետական Միութեան սահմաններէն ներս յատուկ և կանոնաւորեալ եկեղեցական վարչակարգ մը տակաւին զոյութիւն չունի։ Այնտեղ եկեղեցական-վարչական կեանքը, տիրող դժուարին պայմաններու հետեւանքով, տակաւին նոր իր կազմաւորութեան շրջանին մէջ մտնելու նշաններ ցոյց կուտայ։

Միւս կողմէն՝ Ս. Էջմիածնի արտասահմանեան թեմերուն մէջ կը տիրէ վարչական արտասովոր և, պէտք է ըսենք, դժբախտ աշխատանքութիւն մը։ Իւրաքանչիւր թեմ ինքնազուլի կերպով կազմած է իրեն յատուկ թեմական կանոնադրութիւն մը, որով լաւ կամ զէշ կը կառավարուի։ Այսպէս՝ Իրանի, Իւրաքի, Եգիպտոսի, Ֆրանսայի, Հիւսիսային և Հարաւային Ամերիկաներու թեմերը կը կառավարուին իրարմէ տարբեր, իրարու բոլորովին աննման կանոնադրութիւններով։



Հայ եկեղեցւոյ վարչական այս բաժնուածութիւնը ունի իր հասկնալի պատճառներն ու հիմունքները: Որքան ալ նուիրապետական Աթոռներու և անոնց թեմերուն վարչական դրութեանց տարբերութիւնները ըստ բախտի և ըստ դիպաց և սխալ մտայնութեանց հետեւանքով առաջ եկած և կազմաւորուած ըլլան, այնուհանդերձ այդ զանազանութիւնները և տարբերութիւնները իրենց յատուկ հիմունքներն ունին և տուեալ տեղական պայմաններու և տիրող ընթացիկ զապառնալիքներու հետեւանք են: Այսպէս, օրինակի համար, Ամերիկայի պէս երկրի մը մէջ, ուր եկեղեցին պետութենէն բոլորովին անջատուած է, կարելի չէ նոյն թեմական կանոնադրութիւնը ունենալ ինչ որ, օրինակի համար, կարելի է ունենալ և ունինք Իրաքի մէջ, ուր եկեղեցին կը ճանչցուի կէս-պետական մարմին մը և ուր Առաջնորդին ընտրութիւնը կը վաւերացուի արքայական պերաթով և ուր Արքայութեան նախարարը կրնայ արտասովոր միջամտութիւններ ընել Հայ եկեղեցւոյ վարչական գործերուն մէջ: Անցողակի յիշենք թէ Իրաքի կանոնադրութեան մէջ յիշուած անգամ չէ թեմէն դուրս ունէ եկեղեցական իշխանութիւն, և հազիւ կարելի է գուշակել, հիմնուելով այդ կանոնադրութեան վրայ, թէ Իրաքեան թեմը Հայ եկեղեցւոյ մէկ մասը կը կազմէ: Կարելի չէ ունենալ, դարձեալ, նոյն թեմական կանոնադրութիւնը, զոր օրինակ, Ֆրանսայի և Եգիպտոսի մէջ, վասնզի Ֆրանսայի մէջ Հայ եկեղեցին պէտք է հետեւի կրօնական ընկերակցութիւններու պետական օրէնքին, հաստատուած 1904էն ի վեր, մինչ անդին Եգիպտոսի մէջ եկեղեցին պէտք է ինքզինք պատշաճեցնէ Իսլամութիւնը իրեն պաշտօնական կրօն ճանչցող պետական դրութեան մը պահանջումներուն: Այսպէս և այլքն ըստ կարգի:

Այս բոլորէն կը հետևի որ Հայոց մի և ամբողջական եկեղեցին իր ընդհանրական հանդամանք ունեցող օրկաններով իր վերին իշխանութիւնը կրնայ տարածել միայն այն կալուածին վրայ, որ իր միութեան գետինը և խարխիւրը կը կազմէ: Այդ կալուածէն դուրս, այսինքն վարչական գետնի վրայ, Հայ եկեղեցւոյ կազմակերպական միութիւնը ներկայիս կարելի չէ:

Ըսինք թէ եկեղեցւոյ միութիւնը կը կայանայ իր դաւանական, ծիսական, կանոնական, նուիրապետական և որոշ չափով մշակութային միութեան մէջ: Որքան ատեն որ այս գետնի վրայ միութիւնը կը պահուի՝ անկէ դուրս վարչական գետնի վրայ եկեղեցւոյ միութեան սկզբունքը տարածելու ջանքը, ներկայ պայմաններուն մէջ, կարելի չէ և ապարդիւն է: Վարչական հարցերու մէջ, ինչպէս օրինակ՝ ընտրութեանց, ընկերային և քաղաքական յարաբերութեանց, կրթական դրութեան և նման խնդիրներու մէջ, որոշուողութիւնը ամբողջապէս կը վերաբերի իւրաքանչիւր եկեղեցական-վարչական շրջանի սահմաններուն մէջ ապրող ու գործող եկեղեցական մարմիններու դատման և ողջմտութեան: Այս պատճառաւ ալ թէ՛ Հայ եկեղեցին և թէ՛ ուրիշ Արեւելեան եկեղեցիներ պատմութեան ընթացքին, գէպքերու և տիրող քաղաքական և ընկերային պայմաններու բերումով, բաժնուած են վարչականօրէն իրարմէ անկախ ինքնավար կեդրոններու՝ իրենց յատուկ եկեղեցական իշխանութեամբ և իրաւասու մարմիններով:

Տուեալ շրջանի մը եկեղեցիին վարչական ինքնավարութիւնը երբեմն լիակատար է և երբեմն սահմանափակ: Վերջին պարագային թեմին կամ շրջա-

նին կանոնադրութիւնը կ'որոշէ այն իրաւասութիւնները զորս եկեղեցիին վերին կամ ընդհանրական իշխանութիւնը ունի ստորագաս իշխանութեան վրայ: Այստեղ չենք ուզեր մտնել այն հարցին մէջ թէ տուեալ ստորագաս եկեղեցական իշխանութիւն մը նուազագոյն ո՛րքան և ի՛նչ կէտերու մէջ կախում պէտք է ունենայ իրմէ վեր եզով եկեղեցական իշխանութենէն՝ որուն իրաւասութեան ներքեւ կը գտնուի: Մեր նպատակն է նկատի առնել միայն տիրող կացութիւնը այնպէս ինչպէս որ է, լաւ կամ գէշ: Այսպէս՝ Ամերիկայի մէջ Հայ եկեղեցւոյ թեմական կանոնադրութիւնը կը տրամադրէ որ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը վաւերացնէ կամ մերժէ Առաջնորդի ընտրութիւնը, և կամ վաւերացնէ կամ մերժէ թեմական կանոնադրութիւնը կամ անոր բարեփոխութիւնները, երբ ասոնք արդէն քուէարկուած են թեմական Պատգամաւորական Ժողովին կողմէ: Մինչդեռ անգլին կան թեմեր, որոնց կանոնադրութեան մէջ եկեղեցական վերին իշխանութեան կամ մարմնի կամ ընդհանրական նկարագիրը ունեցող Ժողովի հեռուէն ակնարկութիւն անգամ չկայ: Իրաքի թեմական կանոնադրութիւնը, ինչպէս վերև յիշեցինք, այս տեսակէտէն ամենէն ակնբախներէն մէկն է: Իսկ Յունաստանի թեմը ցարդ չէ կրցած անգամ իրեն յատուկ կանոնադրութիւն մը կազմել:

Կասկած չկայ որ մեր ներկայ եկեղեցական-կանոնական անկերպարան վիճակը յոյժ ցաւալի երևոյթ մը կը պարզէ: Ընդհանուր եկեղեցւոյ Տիեզերական Ժողովներու կանոններուն, ինչպէս նաև Ազգային եկեղեցական Ժողովներու կանոններուն զրեթէ բոլորովին անտեսումը ի հիմանէ խախտած է մեր եկեղեցական-վարչական կարգ ու սարքը: Իրողութիւն է որ Տիեզերական Ժողովներու և մեր Ազգային եկեղեցական Ժողովներու կանոնները պարունակող կանոնադիրք մը վաւերական հանգամանքով և պաշտօնապէս հրատարակուած անգամ չէ ցարդ^(*): Եւ ինչ որ աւելի մտահոգիչ է՝ այն է թէ ներկայիս հաւաքաւորութիւնն ալ չունինք մեր եկեղեցւոյ տունը կարգի դնելու՝ եկեղեցւոյ զանազան մասերու ինչպէս նաև վերագաս և ստորագաս իշխանութեանց իրարու նկատմամբ ունեցած իրաւական պարտաւորութիւններն և իրաւունքները ճշդորոշող կանոններու հաստատումով:

Այսպիսի եկեղեցական ընդհանուր սահմանադրութեան մը չգոյութիւնը աւելի ևս պատճառ մըն է որ զգոյշ ըլլանք և առանց յստակ կանոնական հիմունքներու՝ անհաստատ և անորոշ իրաւունքներ կիրարկելու չհետամտինք, մինչև որ այս իրաւանց ընդունելութեան համար առհասարակ մտքերը պատշաճաբար և տրամադրութիւնները շինուած ըլլան նպաստաւոր պայմաններու ստեղծումով:

Պէտք է համակերպինք, հետեւաբար, ներկայիս տիրող կացութեան, ըստ որում մեր եկեղեցւոյ ինքնավար կեդրոնները անկախօրէն կը ղեկավարեն իրենց ներքին գործերը, լաւ կամ գէշ, համաձայն իրենց վարչական կանոններուն: Պէտք է համակերպինք որ այս ինքնավար շրջաններն և կէս-ինքնավար թեմերը անկախօրէն կարգադրեն կամ չկարգադրեն իրենց ներքին վէճերն ու

(*) Ն. Եպս. Մելիք - Թանգեանի «Հայոց Եկեղեցու Իրաւունքը» աշխատութիւնը անհատական և թերի գործ մըն է:

կուրսները, անհամաձայնություններն ու ըմբոստությունները: Վասնզի պէտք է զիտնանք թէ շրջանի մը մէջ յառաջ եկած երկպառակությունները, ընտրական խնդիրներու շուրջ անհամաձայնությունները, քաղաքական կամ կէս քաղաքական հակամարտությունները և նման երևոյթներ կը վերաբերին նոյն շրջանին վարչական ներքին խնդիրներու կարգին և դուրս կը մնան եկեղեցւոյ ընդհանրական մարմիններու կանոնական իրաւասութենէն:

Առաւելագոյնը զոր եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնը կրնայ ընել տուեալ պայմաններու մէջ այն է՝ որ նոյն իշխանութիւնը առաջարկէ իր բարի միջնորդութիւնը, հակամարտութեանց պարագային համեմաշխուսթիւն զոյացնելու կամ վէճի առարկայ խնդիր մը կարգադրելու համար, զործածելով իր բարոյական հեղինակութիւնը: Միայն թէ այսպիսի միջնորդութիւններ, որպէսզի իրենց նպատակին ծառայեն, պէտք է ի յառաջագունէ ընդունելի ըլլան պայքարող կողմերուն համար:

Կ Ա Ղ Ն Ի Ո Ւ Ե Ղ Ե Գ

Օր մ'եղեգին
Կ'ըսէ Կաղնին.
«Բնութենէ

Որքան գանգսիս՝ իրաւ տեղն է.

Ամենամանր

Թռչուն մը քեզ քեւ մըն է ծանր.

Հով մը տկար՝ ուր հազիւ քէ

Ջրի երես կը փոքիքէ կը սնուի քեզ

Գլուխ ծռել նկուն ու հեզ.

Մինչդեռ գազարն իմ վեհապանծ

Նման անեղ Կովկաս լեռանց՝

Ձէ քէ միայն արեգական

Ճանաչներու կ'ըլլայ խափան՝

Այլ եւ մրկին

Վանէ նիգերը մոլեգին:

Ամէն հովեր՝ քեզ փոքորիկ,

Իսկ ինձ համար զեփիւռ քաղցրիկ.

Սաղարթներու տակով զոնէ,

Դուն բուսնէիր, ա՛՛ քիստոնէ,

Որոնցմով եւ վեհազօրէն

Կը պահպանեմ մօտ գտնուող բոյսեր ամէն.

Այնման երկիւղ չէիր կրեր,

Քեզ կ'ըլլայի պաշտպան եւ տէր:

Սակայն կ'երբաս դուն կը բուսնիս,

Ո՛ր խեղճ քիւսկ,

Խոնարհ ասիանց վրայ հովքիւսկ.

Բնութիւնը ստուգապէս

Անիրաւած է, եղէ՛ց, քեզ:»

— «Կարեկցութիւնդ, եղեգ, բնաւ,

է՛ հետեւանք բնոյթիդ լաւ.

Այլ ինձ համար

Հոգ մի՛ տանիր դուն վայրապար.

Դուն աւելի, Կաղնի՛, բան գիտ

Վաւանգներէ երկիւղ աւելիս:

Ես կը ծուլմ, այլ չեմ կոտորի,

Դուն մերկիցարդ քաջապէս դիմադրեցիր,

Այլ վերջ տեսնե՛նք. ամէն բանի,

Կ'ըսեն, վախճանն է զովելի:»

Մինչդեռ եղեգ զայս կը խօսէ՝

Հով մոլեգին

Փրքի ծայրէ հորիզոնին,

Ահեղագոյն զաւակը՝ զոր

Հիւսիսի ծոցն կրածէր լլար

Մինչեւ այն օր: Ա՛յնքան ուժով

Քուռն ճիգերն սասկացուց հով՝

Որ վերջապէս նետեց գետին այն սեգ Կաղնին՝

Որա գլուխ կը բարձրանար մինչեւ երկին,

Եւ ոյր ոտներ դժբախտ խոր կը հասնէին:

Լ.Ս.ՅՈՒՐԵՆ

Մարտի

Թրգմ. Մ. Ն.

ԿՐՕՆԵԿԱՆ

ԽՐԱՏ ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ

ԵՐԱՆԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԿՈՂՄԷ ՏՐՈՒԱԾ

(Կը կարգացուի Աւագ Հինգշաբթի, Ոսնալուայի ընթացքին)

Աստուած սէր է, կ'ըսէ Որոտման որդին՝ Քրիստոսի սիրելի աշակերտը Յովհաննէս, և ով որ սէր ունի՝ Աստուած անոր մէջ կը բնակի ու ինք՝ Աստուծոյ մէջ։ Արդ, եղբայրներ, լսեցէք և ըմբռնեցէք սիրոյ ճառին իմաստը։ Ով որ կը սիրէ զԱստուած, կը սիրէ նաև իր եղբայրը։ Վասնզի Աստուծոյ սէրը եղբորը հանդէպ եղած սիրով կը յայտնուի։ Եթէ մէկը չի սիրեր իր եղբայրը զոր կը տեսնէ, զԱստուած՝ զոր չի տեսներ՝ ինչպէս կրնայ սիրել։ զԱստուած սիրելն յայտնի կ'ըլլայ անով՝ երբ սիրենք մեր եղբայրը հոգևոր և ո՛չ թէ մարմնաւոր սիրով։ Վասնզի հոգևոր և մարմնաւոր սէրերը կը տարբերին իրարմէ, ինչպէս պիտի տեսնենք քիչ մը անդին։ Արդ, այն որ կը սիրէ՝ կը ճանչցուի Աստուծմէ և ինք կը ճանչնայ զԱստուած, ու այն որ իր եղբայրը չի սիրեր ցաւակցաբար՝ օտար է Աստուծմէ ու չի կրնար ընդունիլ աստուածային շնորհները։ Այն որ իր եղբայրը սուրբ սիրտով կը սիրէ՝ բնակարան կ'ըլլայ Աստուծոյ, ու իր մէջ կը բնակի Աստուած։ Վասնզի նոյն ինքն՝ Տէրը սիրեց զմեզ, ու ճշմարտութեան հոգին զրկեց բնակելու համար մեր մէջ, որպէսզի մեր իմանալի հոգին Աստուծոյ անիմանալի Հոգիին հետ լծորդուի սիրով։ Ու ինչպէս անիկա սիրեց զմեզ, նոյնպէս կը պահանջէ որ մենք ալ սէր ունենանք իրարու հանդէպ։ — Տե՛ս թէ ո՛րքան համարձակութիւն կուտայ սէրը Աստուծոյ մօտ որ Աստուծոյ նման կ'ընէ մարդը, ինչպէս որ Աստուած իր սիրովը մարդոց նմանեցաւ, և ցոյց տուաւ թէ մարդիկ ալ սիրով Աստուծոյ նման պիտի ըլլան։ Վասնզի Աստուած այնքան սիրեց աշխարհս, որ մինչև իսկ իր միամիտ որդին զրկեց աշխարհի փրկութեան համար։ Ու մենք ալ

եթէ սիրենք զիրար, ինչպէս Աստուած սիրեց զմեզ, այն ատեն գոյութիւն չունենար սէրը խափանող չարը։ Սիրող անձը յայտնի կ'ըլլայ մարդոց առջև ու կը ճանչցուի մարդոցմէ։ — Այնպիսին մահացումեղքէ չի վախնար, այլ Աստուծոյ սիրով զինուած՝ կը զիմագրաւէ բոլոր ահաւոր վտանգներուն։ Ուր որ սէր կայ՝ այնտեղ երկիւղը գոյութիւն չունի։ Ինչպէս Յովհաննէս կ'ըսէ՝ երկիւղ չկայ սիրոյ մէջ, այլ կատարեալ սէրը հեռու կը վանէ երկիւղը, վասնզի տանջանքն է որ երկիւղ կ'ազդէ, իսկ սէրը՝ համարձակութիւն, և սիրով կը հաւածուի երկիւղը։ Ուր որ կը բացակայ սէրը, հոն ներկայ է երկիւղը և մեծ ու ահաւոր դատաստանին օրը կ'որոշուի վախը։ Իսկ սէրը աներկիւղ կ'ընէ մարդը ամէն տանջանքներէ։ Սէր անոր կ'ըսեմ որ բոլորովին հեռու է երկմտութենէ, ինչու որ երկմտութիւն և սէր միասին չեն կրնար բնակիլ։ Ու հարկ է զիտնալ թէ սէրը ոչ միայն յաւիտենական կեանքին համար իր խաղաղութեան պտուղը կուտայ, այլ այս աշխարհիս վրայ ալ հեռու կը հաւածէ ամէն թշնամութիւնները՝ նախանձն ու ատելութիւնը, ոխակալութիւնն ու չարութիւնը, չարախօսութիւնը և հայհուցութիւնը, տըրտուեջն ու բամբասանքը, հպարտութիւնն ու ամբարտաւանութիւնը, ու մանաւանդ ամէն չարիքներու մայրը եղող արծաթօրութիւնն ու ագահութիւնը։ Արդ, ո՛վ որ սէր ունի, հեռու կը կենայ այս ամէն չարիքներէն, և երկնային ապահով ու խաղաղաւէտ նաւահանգիստը կը հասնի բարեաւ։ Ի՞նչ քան աւելի խաղաղական է քան սէրը, որ կ'ազատէ մարդը ամէն խռովութենէ ու աստուածահաճոյ գործեր կատարել կուտայ անոր։ Սէրը բանալին է եր-

ԱՐԴԱՐԸ ԵՒ ԱՐՄԱԻՆՆԻՆ

«Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեցին»

(ՍԱՆՄՈՍ, ՂԲ. 13):

Արմաւենին հին ատեն Սեմական ցեղերու համար նուիրական ծառ մը կը համարուէր: Բարեւոյցներ, Ասորիստանցիներ, Սիւրիացիներ, Արաբներ և Հրեաներ կը յարգէին զայն մեծապէս: Այս ծառը կ'աճի շատ մը երկիրներու, ինչպէս նաև Սեմական ցեղերու բնակավայրերուն՝ Եգիպտոսի, Պաղեստինի, Սիւրիոյ, Միջագետքի և Արաբիոյ մէջ: Ըստ Բարեւոյնի հին սովորութեան, տուներու վարձքը կը վճարուէր արմաւի բերքով, նոյնպէս աղքատներ ատով կը հատուցանէին իրենց պարտքը:

Հրեաներ Տաղաւարահարաց տօնին առթիւ ասոր տերեւները կը գործածէին իբր նշան ուրախութեան (Ղևտ. ԻԳ. 40), Նէեմիա, Ը. 15): Տաճարին և սինակոկներու պատերուն վրայ արմաւի ծառին պատկերները կը գծէին: Հրէից զրաֆներուն վրայ ալ նոյնիսկ այս ծառին պատկերը կը գրտնւէր: Յոյներ և Հռովմէացիներ յաղթութեան իբր նշան կը գործածէին այս ծառին ոստերն ու տերեւները: Մակարայեցիներու օրով Հրեաները նաև սկսան գործածել զայն իբր նշան յաղթութեան:

Ծաղկազարդի օրը, երբ Յիսուս պաշտօնապէս Երուսաղէմ կը մտնէր, ժամանակի սովորութեան համեմատ, զինքը արմաւենիի ոստերով զիմաւորեցին (Յովհ.

ԺԲ. 13): Յայտնութեան գիրքին մէջ արդարեւ երկինք կը մտնեն իրենց ձեռքին մէջ արմաւենիի ճիւղեր բռնած (Յայտ. Է. 9): Երիքով Յիսուսի ժամանակ արմաւենիաց քաղաք կը կոչուէր, քանզի արմաւի շատ ծառեր կային իր շուրջը (Բ. Օրինաց, ԼԳ. 3, Բ. Միաց., ԻԸ. 15): Ըստ Հրեայ պատմիչ Յովսէփոսի, Երիքովի մէջ իր օրով արմաւեն տեսակ մը մեղր կը պատրաստուէր իբր անուշիղէն:

Մահմետականութիւնը Սեմական ծագում ունի և այս իսկ պատճառաւ կը յարգէ այս ծառը: Բայց մահմետականները այս ծառին ճիւղերն ու տերեւները հին ատեն կը գործածէին ոչ թէ ուրախութեան կամ յաղթութեան նշան իբրեւ, այլ սուգի արտայայտութիւն: Յուդարկաւորութեան ատեն զայն կը գործածէին, գերեզմաններու վրայ կը դնէին և գերեզմանաքարերու վրայ ալ երբեմն անոր պատկերը կը գծէին:

Սաղմոսեղբուն, արմաւենիի և արդար մարդու յատկանիշներուն միջև իրարու նմանութիւններ գտած ըլլալուն՝ կ'արտայայտուի ու կ'ըսէ. «Արդարեւ արմաւենի պէս պիտի ծաղկին»: Յիւրաւի արմաւենին ունի կարգ մը յատկանիշներ՝ որոնք արդար մարդոց կեանքը կը պատկերացնեն:

Ա. Արմաւի ծառը բարձրահասակ է. — Այս ծառին համար յուշարէն Ֆօնիքս բառը կը գործածուի՝ որ կը նշանակէ յարութիւն առնել, վեր ելլել, բարձրանալ, իսկ երբայերէնի մէջ ասոր համապատասխանող դամար բառը կայ որ բարձրաբերձ իմաստը ունի: Իսկապէս արմաւենին բարձր է, նոյն իսկ հարիւր ոտք բարձրութիւն ունեցող

կինքի արքայութեան ու ճամբան է յաւիտեանական կեանքին: Սէրը Աստուծոյ որդիներ կ'ընէ մարդիկը ու ժառանգորդներ երկինքի արքայութեան: Սէրը մեր ապականացու բնութիւնը անապական կ'ընէ և մահկանացուները անմահութեան կը փոխէ: Սէրը երկրաւորները երկնային կ'ընէ և հողիդէնները հրեղէն կը կազմէ: Արդ, ո՞վ կրնայ պատմել սիրոյ անչափելի մեծութիւնը, վասնզի անճառելի ու անպատմելի է սէրը. և ինչպէս անքննելի է Աստուծոյ անստեղծ բնութիւնը, նոյնպէս է նաև սի-

րոյ բնութիւնը: Ու ինչպէս որ անբաւ է Աստուած, բայց նոյն ատեն մօտ է ամենուն, ու կը բնակի հեղեղու և խոնարհներու մէջ և անոնց մէջ որոնք կը դողան իր խօսքերէն, այնպէս ալ սէրը մօտ է ամէն անոնց՝ որ կ'ուզեն զայն, և կուգայ ու կը բնակի զինքը խնդրողներուն մէջ: Վասնզի սէրը կը սիրէ իր սիրելիները ու կ'ատէ իր ատելիները: Որոնք որ կը խնդրեն զայն՝ մօտ է անոնց աստուածապէս, ինչու որ Աստուած սէր է և կամեցող սիրոյ սուրբ սրտով և անկեղծ հաւատքով:

արմատենիներ տեսնուած են: Ամէն ծառերի իր համեմատական բարձրութիւնը, բայց արմաւի ծառին հասակը աչքի գարնելու աստիճան բարձր է: Ընդդ նոյն ձևով արդար մարդիկ ալ զգալիօրէն բարոյական բարձր մակարդակի վրայ են միշտ, իրենց խորհուրդներով, զգացումներով, երեւակայութեամբ, սրտով, հոգիով և իրենց քրիստոնէական ազնիւ նկարագրով:

Երբ ծառ մը բարձր է, կ'ունենայ աւելի լայն հորիզոն, աւելի վեհութիւն և հմայք: Նմանապէս արդար մարդիկ իրենց նկարագրի վեհութեամբ ու բարոյական հմայքով կը տարբերին հասարակ մարդոցմէ: Անիրաւ մարդիկ, բարոյապէս սրպէս գաճաճներ, իրենց անձին մէջ ամփոփուած, կ'ապրին այս աշխարհի մէջ լոկ իրենց անձնական շահուն համար: Իրենց աշխարհը միայն իրենց անձն է, իրենց հորիզոնը նիւթական շահու չորս պատն է, անկէ դուրս որեւէ բան չեն տեսներ այս կեանքին մէջ, կ'ապրին ու կը գործեն միմիայն իրենց անձը հաճոյացնելու համար:

Արդար մարդիկ սակայն բոլորովին տարբեր են: Անոնք իրենց շահը կը փնտռեն ուրիշները բարձրացնելու մէջ, և անձնական կիրքերէ ազատագրուած կ'ապրին աւելի լայն հորիզոն մը ունենալով իրենց առջև: Լայնասիրտութիւնն ու լայնասրտութիւնը իրենց համար աչքառու յատկանիշներ են: Իրենց սիրտը այնքան լայն է որ հոն չի պակսիր համակրանք, սէր և կարեկցութիւն որեւէ մարդու հանդէպ: Արդարը իր շահը կը նոյնացնէ իր ազգին և մարդկութեան շահուն հետ, և կ'ապրի այս աշխարհին մէջ ոչ միայն իր անձին, այլև իր ազգին, հայրենիքին և մարդկութեան բարեւաւութեան համար:

Երբ երկու մարդիկ իրերը զիտեն, մէկը հինգ ոտք, իսկ միւսը հազար ոտք բարձրութեան վրայ կեցած, առաջինը երբ վար նայի՝ ամէն խորտուրտ իր աչքին կը զարնէ և կը փորձուի անոնցմով հետաքրքրուիլ ու զբաղիլ: Բայց հազար կամ հինգ հազար ոտք և կամ աւելի բարձրութենէն վար դիտող մը այլևս աշխարհի մանր խորտ ու բորտութիւնները չի տեսներ, անոնցմով չի զբաղիր, իր զբաղին հետ չի կուտիր, չնչին բանի մը համար փոթորիկ չի յարուցաներ, անձնական ոչինչ չա-

հու համար հրապարակը չ'ազմկեր, այլ իրերուն վրայ վերէն նայելով՝ կը զբաղի միայն այն բաներով որոնք բարձրացուցիչ են, շինիչ և օգտակար:

Անիրաւ մարդը իրերը կը զիտէ լոկ շահու ակնոցով, իսկ արդարը ամէն բանի վրայ վերէն կը նայի, ամէն ինչ Աստուծոյ ակնոցով կը զիտէ և հետեւաբար փոխանակ իր անձնական կիրքերուն ետէն վազելու, գրամի, փառքի ու պատիւի գերի դառնալու, կը զբաղի միշտ բարձրացուցիչ գաղափարներով, ազնուացուցիչ արարքներով, յաւիտենական սկզբունքներով և միայն արժէքներով: Արդարն Մատեանը կ'ըսէ. «Վերի բաները մտածեցէք, և ոչ թէ այս երկրի վրայիները» (Կող. Գ. 2): Արդարը կը հետևի այս պատուէրին:

Բ. Արմաւի ծառը ուղիղ է. — Ծառեր կան որոնք առաւել կամ նուազ չափով կը ծոին, իսկ արմաւի ծառը ընդհանրապէս ուղիղ է: Արմաւենիին ուղղահայեաց զիրքը երեմիա մարդարէին ուշադրութիւնը այնքան գրաւած էր որ կ'ըսէ. «Անոնք արմաւենիի պէս շիտակ են» (Երեմ. Ժ. 5): Արդարը ուղիղ է նաև իր առօրեայ ապրելակերպով: Ամէն ատեն ու ամէն պարագայի ներքե նա ուղիղ կը զգայ, ուղիղ կը մտածէ, ուղիղ կը դատէ, ուղիղ կը խօսի և ուղիղ կ'ապրի թէ՛ Աստուծոյ և թէ՛ մարդոց հետ իր բոլոր յարաբերութիւններուն մէջ: Եթէ մէկը Աստուծոյ հանդէպ ուղիղ զիրքի մը մէջ չէ, մարդոց հետ իր յարաբերութիւններն ալ նոյն համեմատութեամբ սխալ կ'ընթանան:

Արդարամտութիւնէ զուրկ մէկը կրնայ իր առեւտուրին մէջ օտել, խաբել, խարդախութիւններ ընել, ուղղամտութիւնէ չեղիլ, ճշմարտութիւնէ հեռանալ և ծուռ միջոցներու դիմել՝ աւելի զբաւ շահելու համար: Արդարը սակայն չի կրնար շեղիլ իր սկզբունքէն: Սպանխացի վիպասան ու մեծ հեղինակ՝ Սերվանդէս կ'ըսէ. «Ուղղամտութիւնը լաւագոյն քաղաքականութիւնն է»: Ասիկա արդար մարդու սկզբունքն է: Արդարը իր գործին մէջ սկիզբը թէն դժուարութիւններ կ'ունենայ, բայց երբոր մարդիկ անգամ մը զինքը ճանչնան, անկէ վերջը իր մէկ խօսքը աւելի արժէք ու կշիռ կ'ունենայ քան թէ անիրաւ մարդու մը

տասը մուրհակը: «Ուղղամտութիւնը, ինչպէս կօշիւներ կը յայտարարէ, ոչ միայն լաւագոյն քաղաքականութիւնն է, այլ նաեւ գերագոյն իմաստութիւնն է: Իսկ Պօլիսն ունի ուրիշ հեղինակ մը կը յաւելու ու կ'ըսէ. «Ուղղամտութիւնը ոչ միայն անհատը մեծութեան կ'առաջնորդէ, այլ նաեւ մեծութիւնն է ինքնին»:

Կողմնացոյցը ո՛ր կողմը որ դարձնես, կրկին շիտակ կողմը կը հակի: Արդարն ալ այսպէս է. աշխարհի ո՛ր երկրին մէջ ալ բնակի, ինչ պայմաններու ու պարագաներու ներքեւ ալ գտնուի, միշտ միեւնոյն շիտակ ճամբուն կը հետեւի: Յիշաբլին օր մը ըսաւ. «Ուղղամտութիւնը քու հոգիիդ շունչը ըլլայ»:

Գ. Արմաւենից մեզապալար է. — Սաղմոսերգուն արդարներու մասին խօսած ատեն կ'ըսէ. անոնք՝ «Ծերութեան ատեն ալ պտուղ պիտի տան, պարարտ ու կանաչ պիտի մնան» (Սաղ. ԴԲ. 14): Մշտապէս կանաչութիւնը արմաւենիին կարեւոր մէկ յատկանիւնն է: Ծառեր կան որոնք տարուան որոշ եղանակներուն մէջ միայն կանաչ են, թարմութիւն և տեսակ մը հմայք ունին, սակայն ձմեռուան եղանակին կը մերկանան իրենց գեղեցկութիւնէն: Արմաւի ծառը դալար է միշտ և տարուան ամէն եղանակին մէջ ալ ցոյց կուտայ միեւնոյն թարմութիւնը, հմայքն ու գեղեցկութիւնը:

Նմանապէս արդարը նոյնն է ամէն ատեն ու ամենուրեք. հայրենիքի թէ օտարութեան մէջ, յաղորդութեան թէ ձախողութեան շրջանին, հանգստութեան կամ հիւանդութեան անկողնին մէջ, կը հետեւի միշտ նոյն սկզբունքներուն, կը հետապնդէ նոյն խեղճները և կ'ապրի միեւնոյն վեհանձն ու աստուածահաճոյ կեանքը: Սուրբ Պօղոս նոյնն էր ամէն պարագայի ներքեւ. երբ բանտարկուեցաւ՝ բանտի ծանր շղթաներուն տակ ալ հետեցեալ միեւնոյն սկզբունքներուն: Լուսաւորիչ, Մեծն Ներսէս, Սահակ—Մեսրոպ, Քաջն Վարդան, Դեոնդերէց, Նարեկացի, Ներսէս Շնորհալի, Տաթևացի և մեր ցիղի կրօնական բոլոր հերոսները նոյն արահետի վրայէն քալեցին: Մարդահաճոյ չեղան՝ այլ աստուածահաճոյ կեանք վարեցին:

Գամիլիոն կոչուած կենդանի մը կայ

որ զուրկ է որոշ գոյնէ. սե հոգի վրայ սե է գոյնը, իսկ կարմիր հոգի վրայ՝ կարմիր, և ճերմակ հոգի վրայ ալ ճերմակ կ'երևի: Արդարութեան զգացումէ զուրկ անհատներ ալ նոյնպէս անգոյն են և անկարագիր: Անհաւատին հետ անհաւատ են, հաւատացեալին քով հաւատքի արտօնան կը հանդիսանան, չար մարդոց հետ չար են, բարի մարդոց ընկերակցութեան մէջ իրենք զիրենք բարի կը ձեռնեն, և այսպէս տեղւոյն համեմատ գոյն կ'առնեն: Այսօր մարդ մը կը հալածուի, իրենք ալ կը հալածեն, ուրիշ մը կը գովուի, իրենք ալ կը գովեն և անոր փառքով փառաւորուելու կը ջանան: Այսօր ոգստանաներով մէկը երկինք կը բարձրացնեն, բայց շարժ մը չանցած ս'ի խաչ հան զդա՝ կը պոռան:

Այս տեսակ մարդոց ո՛չ խօսքին, ո՛չ խոստումին, ո՛չ պայմանագրութեան և ո՛չ ալ նկարագրին կը վստահուի: Անոնք ցանկապատին վրայ են միշտ, ո՛ր կողմը զօրաւոր է և կամ շահաբեր է իրենց՝ իսկոյն այդ կողմը կ'անցնին: Արդարները օսկայն այսպէս չեն, ո՛չ մարդ կը գովեն և ո՛չ ալ մարդ կը վարկաբեկեն: Եթէ մէկը սխալ մը գործած է, կը քննադատեն քաղաքովարդի ուղով, կարեկից ու շինարար մեթոտով, իսկ եթէ մէկը գովելի արարք մը ունի, ոչ թէ մարդը կը գովեն ու կը շփացնեն, այլ այդ գովելի արարքը կը գնահատեն ու կը ծանօթացնեն: Զափաւորութիւն, անկողմնակալութիւն, անաչառութիւն, ճշգրտութիւն ու ճշգրտագնութիւն և իրերը ուղիղ գտնելու կշռել՝ արդար մարդոց մնայուն յատկանիւններն են: Այս գեղեցիկ յատկանիւնները արդար մարդոց նկարագրին վրայ ամէն ատեն ու ամէն տեղ ի յայտ կուգան:

Արդարակորով մարդոց այս հաստատուն նկարագիրը արժանի է ամէն գնահատութեան: Վիկտոր Զիւկօ ըսաւ. «Հաստատուն կեցիր և ահա լաւագոյն բախտը քեզի կը սպասէ»: Յաջողութիւնը, ըսած է Նափուլէոն, վերապահուած է անոր՝ որ ամենէն շատ յարատեւութիւն ցոյց կուտայ»: Աշխարհի վրայ հսկայ գործունէութիւններ ոչ թէ զրամով, խելքով ու զօրութեամբ միայն յառաջ կը բերուին, այլ նաեւ յարատեւութեամբ: Թովմաս Քարալլ կ'ըսէ. «Այն կրանիթէ քարը որ զիւրափոփոխ մարդու ճամբուն վրայ խոչընդոտ մըն է, յարատեւ-

և ող անհատին բարձրացման իրր սանդուղ կը ծառայէս :

Դ. Արմաւենիին օգտաւէս է. — Բազմաթիւ են արմաւի ծառին օգուտները : Անոր տերեւներէն կողով կը շինուի, կեղաններէն չուան կը պատրաստուի, ծառը իրր ատաղձ կը գործածուի, պտուղը կ'ուտուի, կուտը կ'աղան և կենդանիներուն կը կերցնեն, արմաւին ջուրը կը քամեն և անկէ տեսակ մը օշարակ կը շինեն, և այլն :

Արդարեան ալ, որպէս արմաւենի, ունին բազմաթիւ օգտակարութիւններ իրենց ազգին, հայրենիքին և ընդհանուր մարդկութեան : Արդար մարդուն հարստութիւնը, դաստիարակութիւնը, ընկերական դիրքը, խմացական ու բարոյական բոլոր առաւելութիւններն ու առաքինութիւնները օգտագործելի պատրաստ ոյժեր են, ինպատ մարդկային ընկերութեան բարեխառութեան : Մարդկութիւնը ինչ յառաջդիմութիւն որ ունեցած է ընկերային, տնտեսական, քաղաքական, ազգային, կրթական և կրօնական մարդերուն մէջ, կը պարտի զանոնք արդար ու բարի մարդոց բոլորանուէր զօհողութեանց :

Եթէ աշխարհի մէջ բարի մարդիկ չըլլային, և ամէն մարդ իր եսին մէջ ամփոփուած՝ ապրէր միմիայն իր անձին համար, հիւանդանոցներ այսօր իրենց դռները բաց պիտի չպահէին աղքատ հիւանդներու համար : Որբանոցներ, պատսպարաններ, անկեւանոցներ, բարեսիրական ու մարդասիրական ձեռնարկներ իրենց գործունէութիւնները պիտի դադարեցնէին խափառ : Սակայն շնորհիւ արդարամիտ ու զոհաբերող մարդոց աշխատանքներուն և անոնց ըրած թանկագին ու օգտաշատ ծառայութեանց, աշխարհի մէջ ամէն տեղ այժմ յառաջ կը տարուին շինարար գործունէութիւններ, մարդասիրական ազգօգուտ գործեր և մարդկային ընկերութեան յառաջդիմութեան նպատող այլևայլ ձեռնարկներ :

Արմաւենիին տեսակները շատ են. արքներ անոնց թիւը կը հասցնեն մինչև երեք հարիւր վաթսուհի, բայց ամենուն ալ պտուղները քաղցրահամ են և անոյշ : Նմանապէս արդարեան ալ կը բաղկանան տարբեր տարբեր ազգերէ, ցեղերէ, գոյներէ, լեզուներէ ու խանութածքներէ, բայց

և այնպէս ամէնն ալ ունին իրենց յատուկ բուրմունքը, գեղեցկութիւնն ու քաղցրութիւնը : Բոլորն ալ բարի, վեհանձն ու ազնիւ են, և հետեաքար օգտակար՝ իրենց ապրած միջավայրին համար :

Մարդիկ կան այսօր օրոնք արմաւի ծառին չափ ալ օգտակարութիւն չունին ո՛չ իրենց ազգին և ո՛չ ալ մարդկութեան : Աշխարհ կուգան ու կ'երթան, առանց սակայն որեւէ օգտակարութիւն ունենալու : Մարդկութիւնը իրենցմէ ոչ միայն չ'օգտուիր, այլ նաև կը վնասուի շատ անգամ : Այս տեսակ կեանքը չ'ապրիլ աւելի լաւ է քան թէ ապրիլ և ժամավաճառ ըլլալ :

Իսկ արդարեան հասցէին ոչ ոք նմանօրինակ արտայայտութիւն մը կ'ընէ : Քանզի արդարեան լոյսն են աշխարհի, ուր որ կ'ապրին կը լուսաւորեն իրենց շուրջը պատած խաւարը : Անոնք աշխարհի աղն են, ուր որ կը գտնուին կը համեմեն իրենց միջավայրը և կը ստեղծեն քաղցր մթնոլորտ իրենց շուրջը : Վերջապէս, արդարեան կը նմանին ծառի մը, որուն հովանիին ներքե յոգնած ու պարտաւոր մարդիկ ապաստան կը գտնեն, որուն ճիւղերուն վրայ թռչուններ կը թռչին ու կը հանգստանան և որուն քաղցրահամ պտուղները սնունդ ու կեանք կուտան մարդոց : Ի մի խօսք, արդարեան պարծանքն են աշխարհի և միանգամայն օրհնութիւն մը մարդկային ցեղին համար :

Երբ մեր կեանքի առաջնորդին՝ Յիսուսի կեանքը ուսումնասիրենք, ի մտի ունենալով վերոյիշեալ խորհրդածութիւնները, որոշապէս կը տեսնենք Իր վրայ հետեւալ չորս յատկանիւնները : Ան բարոյապէս բարձրահասակ էր, ուղիղ, մօտաւար եւ օգտաւէս : Ան իրր մեծագոյն Արդարը, լաւագոյն օրինակ մը կը հանգիստանայ մեզի և արդարութիւնը սիրող բոլոր հաւատացեալներուն :

Խնչ է Արմաւենիի յաջողութեան գաղտնիքը : Ուրիշ բան չէ բայց եթէ ջուրերուն քով գտնուիր, Իսրայելացիք երբոր անպատի մէջ կը ճամբորդէին եղիմ եկան, և հոն եթանասուն հատ արմաւի ծառերուն հանդիպեցան (Ելից, Ժե. 27) : Այս ծառերը աճած ու մեծցած էին տասներկու ջուրի ազրիւրներուն քով, ուր վարը կար պարարտ հող և վերը արևու ճառագայթներ : Այսպէս մէկ կողմէն առատ ջուրը, իսկ միւս կող-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ա) — ՆԵՐՔՈՂՆԵՐ ԵՒ ՏԱՂԵՐ

I

Ընդունուած է Նարեկացու առաջին գործը 977 թուին գրուած Սողոմոնի «Երգ երգոցի մեկնութիւնը» համարել, որը սակայն ժանրով գեղարուեստական ստեղծագործութիւն չէ. բայց ինչպէս այս, այնպէս էլ նրա միւս գործերը, որոնք ուղղակի գեղարուեստական ստեղծագործութեան տեսակներին չեն վերաբերում, բանաստեղծի դէմքի ամբողջական պատկերը կազմելու համար մեծ կարեւորութիւն ունեն։

Շատ անցեալում ստեղծուած սիրային լիրիկայի ամենագեղեցիկ նմուշներից մէկը՝ «Երգ երգոց»ը առաջին անգամ կրօնական մեկնութեան է ենթարկել Կ. դարու եկեղեցական յայտնի գրող Իպոլիտը։ Ըստ բանասիրական տուեալների, այս մեկնութեան լրիւ տեքստը պահպանուել է միայն վրացերէն լեզուով, որը թարգմանուել է Թ. դարում հայերէնից։ Եթէ Թ. դարում, գուցէ և աւելի վաղ, Իպոլիտի այդ գործը արդէն թարգմանուած էր հայերէն, հաւանաբար Նարեկացիին ծանօթ է եղել դրա հետ։ Սակայն նա իր մեկնութեան ներա-

ծականում իրրեւ այդպիսի մի աշխատանքի հեղինակի յիշատակում է միայն Գրիգոր Նիւսացու անունը։

Նարեկացին իր մեկնութեանը ձեռնարկել է Անձեացեաց Գուրգէն թագաւորի հրամանով։ Թագաւորին ուղղուած ներածականում նա նախ՝ համեստօրէն նկատում է, որ ինքը չունի Գրիգոր Նիւսացու կատարեալ գիտնականութիւնը, ուստի իր համար չափազանց դժուար է սողոմոնեան հոգին թափանցել և մտքերին հետեւել, ապա՝ բացատրում է հանգամանօրէն «Երգ երգոց»ը մեկնելու անհրաժեշտութիւնը։ Նարեկացու այդ բացատրութիւնը մեզ համար չափազանց հետաքրքրական է իր ժամանակաշրջանի մարդկանց որոշ հակումները ճանաչելու տեսակէտից։ Պարզուում է հետեւեալը։

Ժ. դարում հասարակութեան մէջ նոր տրամադրութիւնների առաջացման հետեւանքով, ըստ երևոյթին, առանձին հետաքրքրութիւն է ստեղծուել Աստուածաշնչու չում գտնուող այդ լիրիկական սիրային բանաստեղծութեան նկատմամբ։ «Երգ երգոց»ը մարդիկ հասկացել են, կամ ուղեցել են հասկանալ այնպէս, ինչպէս նա կայ բառացի, առանց կրօնական այլաբանութիւն համարելու այն։ Նարեկացին իր մեկնութիւն գրելու շարժառիթը հէնց այս բանն է համարում. նա թէպէտ թագաւորին ուղղուած ներածականում զանգատուում է գործի դժուարութիւններից, բայց և իր մեծ ուրախութիւնն է յայտնում թագաւորի մտա-

մէն բարեբեր հոգն ու արեւու կենսաբաշխ ճառագայթները իրարու հետ միանալով աճեցուցած էին այդ ծառերը՝ որոնք Խորայէլի յոգնած ու ընկճուած ժողովուրդին ապաստանարան մը եղան։

Հոգեւոր կեանքի մէջ ալ այդպէս է։ Արդարութիւնը ինքնաբերաբար չ'աճիր, այլ պէտք ունի կենսասու ջուրի, սննդաբար երկնաւոր հացի և հոգեւոր լոյսի։ Ասոնք կը գտնուին Յիսուս Բրիտոսի քով միայն։ Վասնզի Ան է կենդանի ջուրին յաւիտեանական ակնադրւելը (Յովհ. է. 37-38), Ինքն է այն հացն կենսաբար՝ որ երկինքէն իջած

է (Յովհ. Զ. 35), նոյնպէս Ինքն է հոգեւոր լոյսի կեդրոնը (Յովհ. Ա. 9)։

Երկու հազար տարիներէ ի վեր որքան բիւրաւոր մարդիկ Անոր զիւմած և Անկէ գոհացում գտած են։ Անոր միջոցաւ կրցած են իրենց սրտի արդարութեան խորունկ ծարաւը յագեցնել և ապրիլ քրիստոնէական բարձր կենցաղը՝ Անոր արդարութեան ճառագայթներովը լուսաւորուած։ Ինչպէս Ս. Ներսէս Շնորհալին՝ ունենալով միևնոյն փորձառութիւնը, երգած է. «Առաւօտ լուսոյ, արեգակն արգա՛ր, առ ին լոյս ծագեա՛»։

յղացման և իրեն այդ աշխատանքը յանձնարարելու համար. «Արդ նախ առաջին՝ խնդացի ընդ այս, որ այսպիսի միտք երեւեցուցեր առ ի քննել զգիրս, և հոգ տանել ուսմանց, որ է գուշակ երկիրդ Տիտոն, և օտարանալոյ ի պիղծ հոգւոց և ի վայրապար քննութեանց ի մեղասէր բարուց, և այնմ երանութեանց մօտաւորիլ, որ մարգարէն ասէ, թէ «Երանեալ է այլ՝ որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց»⁽¹⁾։ Աւելի հանգամանօրէն և պարզ այս բանը բացատրում է նոյն աշխատութեան յիշատակարանում. «Ի Նիջ թուականութեանս Հայոց հարկեցայ ես Գրիգոր քահանայ ի նարեկայ . . . ի Դուրգէնայ աստուածասէր քրիստոսապսակեալ արքայէ . . . առ ի մեկնութիւնս ահաւոր բանիցն Սողոմոնի, և բացայայտեալ զխորին ծածուկսն որ ի նոսա, որ են քաղցր առ ի լսել, Վասնզի զփեսայէ և զհարսնէ ասէ, որ և զստեանց և զկարմրացեալ շրթանց և զայտից գեղեցկութենէ և զաչաց ցանկալեաց և զքեռ և զեղբորորդւոյ և զօրիորդաց՝ և զայլն ամենայն այսպիսեաց բանից տոփականաց և սրտից խողտանաց սեռն սիրոյ չաղկապ միաւորութեան. զոր լուեալ մարդկան անխնայիւ օքմոք մոտք յայլ և յայլ իրս իմանային»⁽²⁾։

Աւերմն «Երգ երգոց»ը «անհասկացող» մարդկանց համար զգայացունց և լսելիքին «քաղցր» է եղել, մի բան, որ կրօնական տեսակէտից շատ անցանկալի էր, ուստի կարիք է զգացւում մեկնութեան։ Ամենակարճ սահմանումով՝ նարեկացին «Երգ երգոց»ում երգուած հարսի և փեսայի (սիրուհու և սիրեկանի) սէրը համարում է եկեղեցու և Քրիստոսի աշխարհութիւն։ Իսկ այն հարցին, թէ ինչո՞ւ Սողոմոնը դիմել է այդպիսի աշխարհութեան, ինչո՞ւ աստուածային խորհուրդը մարմնական ցանկութեան և սիրոյ անտի օրինակով է նա պատկերել՝ պատասխանում է. որովհետեւ «նախ արժան է զցանկասէր բարս մեր աւաղել, որ այնչափ օտարացեալ եմք յԱստուծոյ խորհրդոցն, որ այս անասնական ցանկութեամբ հարկեցաւ Հոգին Սուրբ ի ձեռն Սողոմոնի պատմել մեզ զանտանե-

լիս»⁽¹⁾։ Թէպէտ, աւելացնում է նարեկացին, կնոջ նկատմամբ մաքուր ամուսնութեան նպատակով տաժաժ սէրը սուրբ է, բայց դրանից շատ առաւել է առ Աստուած ունեցած սէրը, ուստի ով ցանկանում է Գիրքը կարդալ, նա պէտք է իր միտքն ու խորհուրդները ի սպաս մաքրէ մարմնաւոր ամուսնական մտածութիւններից։ Իր կատարած աշխատանքի առթիւ հեղինակի այս բոլոր խորհրդածութիւնները պարզ ցոյց են տալիս ժամանակաշրջանի մարդկանց մէջ նոր արժէք ստացած յոյդերն ու սկեպտիկ վերաբերմունքը զէպի եկեղեցական դրականութիւնը։

Նարեկացու այս գործը, ճանաչողական արժէք ունենալով հանդերձ, վերջ ի վերջոյ դեռ սխալաստիկային է վերաբերում։ Չնայած այս հանգամանքին, նա կարողացել է ինքնուրոյնութիւն հանդէս բերել և նախորդ մեկնիչներից սիրոյ երգի՝ կրօնական «բովանդակաւորման» արուեստով և աստուածաբանական խորութեամբ ու բազմազանութեամբ գերազանցել։ Եթէ նարեկացուն համեմատենք ամենահին ու բաւական հաշակուած մեկնիչ Իպոլիտի հետ, իսկոյն կ'երեւայ վերջինիս աշխատանքի շարունակ և ամենաակնյայտ բունազրօսիկութիւնը։ Իպոլիտի կարծիքով Սողոմոնը Աստուծոյ շնորհած մեծ իմաստութեամբ աշխարհում երեք գիրք է յօրինել, որոնցից առաջինի՝ «Առականքի» մէջ արտայայտուած է «Հայրը», երկրորդի՝ «Ժողովուրդ»ի մէջ՝ «Սիրդին», իսկ երրորդի՝ «Երգ երգոց»ի մէջ՝ «Սուրբ Հոգին»։ Իսկ այնուհետեւ, երբ նա սկսում է այդ բանաստեղծութիւնը տող առ տող մեկնութեան ենթարկել, ամէն մի տողի «իմաստը» կապում է Քրիստոսի «գեանքի» որեւէ զրուագի հետ, ըստ որում ամէն կերպ աշխատելով այնպէս ներկայացնել այդ, որ ստացուի աւետարանին համապատասխան Քրիստոսի «գեանքի» զէպքերի յաջորդական ընթացքը։ Այսպիսով Իպոլիտի մեկնութիւնը փաստօրէն դադարում է մեկնութիւն լինելուց, որովհետեւ աւետարանի բովանդակութիւնն իմացող ընթերցողը բանաստեղծութեան մի քանի տողերի մեկնութիւնը կարդալուց յետոյ հնչողութեամբ կոահում է, թէ յաջորդ տողերի բովան-

(1) Գր. Նարեկացի, Մատենադրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 271։

(2) Նոյն, էջ 367։

(1) Նոյն, էջ 274։

դաժնութեան մասին ինչ պէտք է ասուի:

«Երգ երգոց»-ի մեկնութիւնը նարեկացու ստեղծագործութիւնների շարքում նաեւ այն հետաքրքրութիւնն ունի, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս միատիկական աշխարհայեացքի սաղմեր նրա մօտ գոյութիւն են ունեցել գրական գործունէութեան հէնց սկզբնական շրջանում իսկ: Սրինակ՝ «Երգ երգոց»-ի այս տողը. «Յանկողնի իմում ի գիշերի խնդրեցի, զոր սիրեաց անձն իմ, խնդրեցի զնա և ոչ գտի. կոչեցի զնա, և ոչ ետ ինձ ձայն» (որ Իպոլիտը գտնում է, թէ այստեղ Մարիամ Մագլթաղեանային է փնտռում մեռած Քրիստոսին, բայց չի գտնում, որովհետեւ նա արդէն գերեզմանում չէր, այլ երկնքում), նարեկացին մեկնում է այսպէս. «Այսինքն թէ որչափ և խնդրեմ զԱստուծոյ գորութիւնն կամ գտնութիւն փառացն կամ դանուանն մեծութիւն կամ զպարգեսն որ արգարոցն է պատրաստեալ և որ սոցին նման, օտաւրացեալ գտանիմ»⁽¹⁾: Սա կարելի է նրա կեանքի վերջում գրած «Ողբերգութեան մատենան»-ի միատիկյգմի ամենասեղմ և ամենապարզ սահմանումը համարել:

Նարեկացու առաջին գրութեան քը, չնայած խմատային որոշ առանձնայատկութիւններին, տեսակով վերաբերում է պաշտօնական եկեղեցական գրականութեան: Բայց հետզհետեւ նրա գործերը բովանդակութեամբ և ձևով հեռանում են ընդունուած պաշտօնական գրականութիւնից և վերջապէս դուրս են գալիս նրա սահմաններից՝ իբրեւ զարագույն բացող նոր և ինքնատիպ ստեղծագործութիւններ: Բանաստեղծի գրական գործունէութեան զարգացման այս ընթացքը արդէն պարզորոշ կերպով զգացւում է «Ապարանից խաչի պատմութեան» մէջ և նրան յաջորդող ներքողներում:

«Ապարանից խաչի պատմութիւնը» և նրան կից խաչին և Աստուածածնին («Գումարք խմբից . . .») նուիրուած ներքողները նարեկացին գրել է Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսի խնդրանքով, որի մասին յիշատակարանում ասել է. «Շնորհակիր էին և հոգւոյ նորա ընդունակ, ընտրեալդ և ներանձնացեալդ այցելու. ըստ հայցման հա-

ճութեան բարեսէր կամաց երջանկիդ, և գրութեան նամակի ձերում պատճէնի, յօրինեալ շարագրեցի զպատմութեանն գովեստ, և զճառքս ներքողների: Նկարեալ հոտատեալ ի գեղ պատկերի զիմաց սփեատի ոպիտակափայլ լուսափառ դաշտի քարտնիդ. մտրակեալ յընթացս սորա ասպարիսի զշրթունս գրչիս, անշունչ խօսողիս, անքայլ ընթացողիս, անձայն հնչողի, անդուլ պատմողի, և անսայթաքիլի քարոզչի: Եւ արձանացուցի ոմին անջինջ յիշատակ զանուն տննչալի ձերումդ կոչման, տէր Ստեփանոս՝ Լեւրնդ Մոկաց հօգոր գիտապետ»⁽¹⁾: Նարեկացու մասին խօսող շատ բանասէրներ «Ապարանից խաչի պատմութիւնը» և ընդհանրապէս ներքողները չեն համարել գեղարուեստական ստեղծագործութիւններ, այլ գտել են, որ դրանք աստուածաբանական գործեր են: Այս կարծիքը միայն մասամբ է ճիշդ: Այսինքն, թէպէտ նարեկացու այդ գործերի մէջ սխալատիկային վերաբերող շատ բան կայ, բայց և կան նորութիւններ ու գեղարուեստականութեան աստիճանին հասնող հատուածներ: Վերեւում՝ յիշատակարանից բերուած հատուածից անպամ յորդում է բանաստեղծական ուժեղ շունչ:

«Ապարանից խաչի պատմութիւնը» իբրեւ պատմագրութեան նմուշ մի զարմանալի նորութիւն է իր սճով և բոլորովին նման չէ մեր միւս պատմիչների գործերին: Պատմութեան նիւթը հետեւեալն է. Վասիլ և Կոստանդ եղբայրների կայսրութեան ժամանակ Մոկաց աշխարհից մի աղնուական գնում է նրանց մօտ և զինուորական ծառայութեան մտնում: Այդ աղնուականը՝ իբրեւ սուրբ հռչակուած Մոկաց Դաւիթ եպիսկոպոսի եղբորորդին էր և նրա տապանի հողից մի կտոր տարել էր իր հետ Բիւզանդիա, որից իբր թէ հրաշքներ էին լինում: Կայսրները այդ բանը խմանալով աւելի են սիրում և պատուում նրան, ու լսելով, որ նրա քեռորդին Ստեփանոսը նստել է Դաւթի ավետին, ցանկանում են Դաւթի գերեզմանին ընձաններ ուղարկել: Մոկացի աղնուականը կայսրներից խնդրում է, որ յարգեն իր հայրենակիցների փափաքը և ուղարկեն նրանց «կենաց փայտից» մի կտոր:

(¹) Նոյն, էջ 266:

(¹) Նոյն, էջ 422:

այդ իդձը կատարում է։ Քաղաքային մի կտոր և շատ ուրիշ մասունքներ այդ ազնւականը անձամբ բերում է Մոկայ գաւառը և յանձնում Ստեփանոսին։ Բերում և պարգևները զանազան վայրերում պահելուց յետոյ՝ ի վերջոյ մեծ շուքով ու հանդէսով, որին մասնակցում են և Արմուշի թագաւորներ՝ Աշոտ, Սենեքերիմ և Գուրգէն եղբայրները, տեղափոխում են Աստուածամօր եկեղեցին։ Վերջին գէպքը, որ կատարում է 983 թուին, առաւել մանրամասնութեամբ և պաթոսով է նկարագրւած Նարեկացու պատմութեան մէջ։

Այլիշանը օկպարանից խաչի պատմութեանն աշակերտի որակում է տուել. «Սա գերաթոռաց պատմութեան է, կարծես թէ ոչ միայն մտքն (խմստութեան), այլև շարաքանութեամբն թուի, և անկարելի կ'ընէ ըզկարգն և թարգմանել հաւասար բարձրութեամբ և խորութեամբ. հարկ է ընթերցողին անոր գծած օգային ճամբուն մէջէն նոյնպէս թռչտելով հետեւի որչափ կարենա»⁽¹⁾։ Զարմանալի նուրբ գիտողութիւն է այս, խկապէս այնքան ուժեղ է բանաստեղծի հետադարձութեան թափը, այնքան շատ են պատկերաւոր արտայայտութիւնները, գունագեղ նորաստեղծ բառերը, այնքան ուժեղ ռիթմ ու գինամիկ կայ նրա լեզուի մէջ, որ իրօք ընթերցողը պատմութեան ընթացքին կարող է շատ գիտարութեամբ հետեւել և տեղ տեղ էլ նարատրութիւնները սպասելով յետ մնալ կամ կանգ առնել շնչակտուր։

Նկարչական տեսողութիւնը և խօսքի երաժշտականութիւնը Նարեկացու բնական տարերքն են. նա մեր Ե. դարի պատմիչներից շատ աւելի մեծ չափերով օգտագործում է լեզուի ընձեռած միջոցներն ու հնարքները, անգամ պատմական մի շատ սովորական անցքի մասին արած նկարագրութիւնը վերածելու նկարչական և երաժշտական մի բազմերանգ ներդաշնակութեան, որով Պատմութիւնը տեղ-տեղ փաստօրէն վերածւում է բանաստեղծութեան։ Օրինակ՝ թեկուզ նրա Պատմութեան սկիզբը. «Ընդ աւուրս ժամանակաց բազմավրդով սասանութեանց, որ ի կայս և ի կոյս կող-

մանցն Յունաց հարապատութեան արեան զարմիկ ետաւայ, և որդւոցն մտիցն արեւու, որ յաւարտումն Եւրոպէի և ի ծագ գլխաւորութեան մասին Ասիայ, յարեալ և յարմարեալ ի հրախոյ լիբիայ, խառն և խիտ ընդ ծիրանածաւալ ծովային ծոցոյն ասպարէզ . . . Ի սոյն երկաքանչիւր բանականաբոյս բազմածին լերանց հզօրաց և բարձրագունից՝ խիտ և հատու հակառակութեանց, որք կառուցան կազմեցան կարգեցան կանգնեցան կացին ի կիցս կայից խարխաց բարձից սանդուղցն ոտից, իբր նախ քան զսոյն Սէիր և Հագար, ընդդիմահարք միմեանց և ներհակակիրք»⁽¹⁾։ Ահա և մի ուրիշ հատուած. «Եւ հետս շաւղաց երթեալութեանց փայտակերտ աստաց՝ անխարխալ հարկաց և անշունչ կառաց՝ գերագոյն դիմաց՝ երկնագոյն զաշտաց՝ լուծական լերանց՝ անկայուն յատակաց՝ ի կոյտս կոհակաց՝ կապոյտ կուտակաց, իբր ի թուիչս օդոց ի թեւ թեթեւ և յարազընթացս ամպաշու թռչնոյ երկթեան կենդանւոյ զամենեքումք անցեալ արեցին»⁽²⁾։ Այս հատուածներից պարզ երևում է Նարեկացու լեզուի ոճի այն առանձնայատկութիւնները, որոնք յետոյ իրենց կլասիկ կատարելութեամբ երևան են գալիս «Պղբերգութեան մատեան»ում։ Այդ առանձնայատկութիւններից ամենից ակնառուն հանդիսութեամբ խօսքի ռիթմը ուժեղացնելու բուն հակումն է, մանաւանդ՝ բազմաայնների հանդիսութեամբ, որի ամենամեծ վարպետն է նա մեր գրականութեան մէջ։ Այնքան բարձր է նրա գրելու կարողութիւնը, այնքան հարուստ է նրա բառապաշարը, որ թուում է, թէ ամէն քայլափոխին հանդիպող հանդիսութիւնները դրանց բնական բխումն են և անկանխելի արդիւնք. «ինչպէս՝ ձերանածաւալ ծովային ծոցոյն ասպարէզ», «. . . կանգնեցան կացին ի կիցս կայից . . .» (այն էլ միանգամից երկու՝ կ և ց բաղաձայններով), «. . . ի թուիչս օդոց ի թեւ թեթեւ», և այսպէս անընդհատ։ Նարեկացին բանաստեղծ է բոլոր գէպքերում. անգամ երբ նրա հիմնական մտադրութիւնն է ճարտարախօսական պատմական

(1) Ղ. Այլիշան, Հայագատում, Վենետիկ, 1901, էջ 88.

(1) Գ. Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 371.

(2) Նոյն, էջ 373.

մի երկ գրել, միևնույն է, հոեոորական ար-
ուեստը նրա մօտ վերածուեմ է բանաստեղ-
ծական արուեստի։ Այս բանի աւելի քան
ցայտուն ապացոյցներ են «Ապարանից խա-
չի պատմութեան» յաջորդող ներքողները։

Ներքողի ժանրը մինչև նարեկացին
գոյութիւն ունէր և բաւական զարգացած
էր, բայց նարեկացու ներքողները իրենց
ընդմով աչքի ընկնող նորութիւններ էին։
Օրինակի համար «Սաչի ներքողը», որը
կրօնա-փիլիսոփայական բովանդակութիւն
ունի, այնուամենայնիւ շատ քիչ նմանու-
թիւն ունի այլ կրօնական ներքողներին։

Բանն այն է, որ նարեկացին երբեք
չի սահմանափակուեմ եկեղեցական գրքե-
րից վերցրած տասնեակ անգամների գոր-
ծածուած զարծուած քննրով, խորհրդածու-
թիւններով, գործածութիւնից մաշուած
էպիտէտներով և մտքերի ֆորմալ ու քա-
րացած դասաւորութեամբ։ Ի հակէ, նա իր
այդպիսի գրուած քննրում կրօնական դոգ-
մաներից պաշտօնապէս չի հրաժարուեմ,
բայց այդ դոգմաները, միևնույն է, կոր-
չուեմ, փոշիանուեմ են նրա նուրբ և հարուստ
անձնական խոհերի և արտայայտչական
միջոցների ահագին բազմազանութեան մէջ։

Նրա համար գոյութիւն չունեն երեա-
կայութեան թոխքի դաւանաբանական կաշ-
կանդութիւններ։ Նա միշտ էլ որեւէ բան ար-
տայայտուեմ է իր սիրած ձեւերով՝ պաշտօ-
նական ընդթ ընդունած ֆրազաբանութիւն-
ները մի կողմ նետելով, նա ստեղծուեմ է
անվերջ նմանաձայն բառերի կուտակուեմ-
ներ, ըստ որում այդ բառերի մի աչքի
ընկնող մասն էլ ինքն է նոր կազմուեմ։
Ահա «Սաչի ներքողի» այդպիսի հատուած-
ներից մէկը. «Գրուածեալ ես սուրբ պան-
ծալի նշան հրաշագան Սաչիդ, որ ի գրու-
թիւն դիմական քառակուսան լծորդան,
զուգակչիս հետեմամբ, անկարօտաճեմ
ճախրանք բազմատեսող յօքնաչեալ քրով-
րէանիւթ ձեացեալ կոռացն, սէրարփին
սիրասուր սլացմամբ սխրասարստ սուառն-
մամբ, անսպախական գնացիւք զքոյդ
ճշմարտէր սքանչելատեսիլ երեւում կա-
նուս յայտնութեամբ»⁽¹⁾։

Ինչ վերաբրուեմ է Աստուածածնին
նուիրուած («Գուեմարք խմբից») ներքողին,

զա արդէն մի լիովին գեղարուեստական
ստեղծագործութիւն է. թէպէտ յայտնի է,
թէ սա տաղերից առաջ է գրուած թէ յե-
տոյ, միևնույն է, տաղերի հետ միասին իր
վրայ կրուեմ է «Ողբերգութեան մատանը»
գրելուց առաջ հեղինակի ունեցած ծիծաղ-
կոտ և առոյգ, անվշտ ու անթախիծ ոգին։
Նախորդ գործերում նարեկացու ոճի նկատ-
ուող առանձնայատկութիւններն այս ներ-
քողում այնպիսի որակի են հասնուեմ, որ
արդէն կարելի է խօսել նրանց՝ վերածնու-
թեան արտայայտութիւններ լինելու մասին։
Իրօք նարեկացու լեզուն և ոճը յիշեցնուեմ
են իր ժամանակի ճարտարապետական հրա-
շակերտների մանուածոյ զարգաքանդակ-
ները, այդ մանուածոների հիւսուածքի
ապշեցուցիչ սրամտութիւնները և գուար-
թացնող, ոչ յոգնեցնող բարդութիւնները։
Այս լեզուն ու ոճն է, որ յետոյ կատարե-
լութեան հասնելով «Ողբերգութեան մատ-
եան» մէջ, գերազանցեց ճարտարապետ-
ների պլաստիկ երեակայութեան բոլոր ան-
սպասելիութիւններին միասին վերցրած։

«Գուեմարք խմբից»-ում նարեկացին
Աստուածածնին ներքողելիս այնքան շատ
ու բազմազան պատկերաւոր համեմատու-
թիւններ է անուեմ և էպիտէտներ գործա-
ծուեմ, որ զժուար թէ նախորդ զարեւում
գրուած բոլոր շարականներում միասին
վերցրած այդքան լինեն։ Բացի սրանից,
որ աւելի կարեւորն է, այստեղ զգացուեմ
է արդէն, թէ ինչպէս Աստուածածնին
տուած բանաստեղծ իրականութիւնից շատերը
ընթերցողի ուշադրութիւնը հոգեոր գեղեց-
կութիւնների պատկերացումից մասամբ
արդէն տանուեմ են դէպի մարմնական գե-
ղեցկութիւնների պատկերներ։ Օրինակ.

Ի մարգկային զարմե հեեցակ երկնային,
Յեղմականաց սեպիցս անման սերովբէ...
Ի ծովային բերմանց ընդհալոյս մարգարիս,
Ի յետեանց բուսոյ բազրապսուղ ծաղիկ,
Ի յաւուրց նախեացն ճիւղ օրհնութեան,
Յօղոյն հանգարիս ամպ անձեւեմածի,
Արեւուն ծագման ակն արփափալ,
Մերկացելոյ այդոյն անսղ առաւօտի,
Գիւեբային մրոյն խօսնակ բերկրանց,
Օրինի սուրբին տառ ճեմարսանառ⁽²⁾։

Մ. ՄԿՐԵԱՆ

(1) Նոյն, էջ 398. (2) Նոյն, էջ 414-415.

(Ճարտնակելի՜ Յ)

ՍԻԱՄԱՆԹՕ ԵՒ ԽՃԷ-ԶԱՐԷ

(Սիրավեպ)

Ա.

I

Նոր կ'արթընար, խորունկ քունէն ծովը Վանայ,
 Օրօրելով, ծոցին մէջ, Սարը Սիփանայ.
 Սիամանթօն կը նըւագէր ... ու սըրինգէն
 Կը հօսէր վար սիրտը, կարծես, իր շըրթունքէն,
 Եւ նըւագով իր կարօտին տըւած ան թեւ,
 Լերան լանջէն կը փըռէր գայն ծովուն վերեւ,
 Կը տարածէր Սիփանն ի վեր, մինչեւ հեռուն,
 Մինչեւ անոր երկնակարկառ կատարներուն:
 «Լօ՛, լօ՛, լօ՛, լօ՛» ու սըրինգը կը հառաչէր ...
 Սիամանթօն երբեմն ալ ծայնը կը ձըգէր.
 «Ի՞նչ ընեմ, մարէ, ի՞նչ փընտռեմ ես գայն.
 «Երազն ոչի՞նչ է, աշխարհը ունա՞յն ...
 «Սա սիրտը հիմա ի՞նչպէս զսպեմ ա՛լ,
 «Անվերջ կ'օրօրեմ, բայց չի՞քընանար:
 «Սիրտ իմ քընացիր, ի՛նչ կ'որոնես դուն,
 «Սուտ է երազը, ու սիրտը մարդուն
 «Պէտք չէ առագաստ բանայ իր հովին,
 «Ընկըզմի, օր մ'ալ, մէջ անգոյ ծովին:»
 Յաւը գըրկած, բարձրացած էր Սիփան ի վեր,
 Ժայռի մ'յննած, երազ-աղջիկը կը կանչէր:

II

Հեռուն Վանը, ծառերուն մէջ, խորհուրդ մը խոր,
 Անոր ետեւ Վարազն որպէս պաշտպան հըզօր ...
 (Ո՞ր պըջրուհին է հոն կէս մը դէմքը պահած ...)
 Ու Հայոց Զորն ... ու Ռըշտունիք ... բարձրահայեաց
 Եղերովը յաւերժածին, գըլուխը վեր,
 Պահակ կանգնած, հարաւի դուռը կը պահէր.
 Ու վարն, անհոգ, երկընցած էր Ծովը Վանայ,
 Զերթ գեղունի մ'որ ծոցը բաց նոր կ'արթընայ:

III

Կ'ելլէ Արեւը Վարագէն ու կը նայի
 Ծուրջը ... կարծես պահ մը ապշած կը հըմայտի.
 Այս ի՛նչ աշխարհ, ա՛հ, այս որբան գոյն ու երանգ,
 Կապոյտ, կանաչ, նարնջագոյն, կարմիր, ճերմակ ...
 Հոն Այգեւստանն է զարդարուեր հարսի մը պէս,
 Ասդին Ծուշանց, բացուած ճերմակ շուշան մ'ինչպէս.
 Վարն Արտամետն է ծովուն հետ սիրաբանող.
 Գիւղեր իրար հետ պար քըռնած մինչ՝ Կապոյտկող ...
 Անդին Թիմար, կանաչի ծով լայնատարած,
 Հարիւրաւոր շէն ու աւան կըրծքին շարած ...

Երկիր է այս թէ անսահման բուրմունքի ծով,
Ո՞վ է տեսեր ծիածանի եօթը գոյնով
Այսպէս աշխարհ ... ո՛չ, իրական աշխարհ չէ այս,
Հէքիաթ է այս ... աննիւթացած վրսեմ երազ:
Շուրջը լեռներ, գրուիւնները ամպերէն վեր,
Կատարներէն որոնց կրնայ մէկն աստղ քաղել:

IV

Գիշերն հապա, գիշերները երազային,
Երկիր - երկինք իրար՝ սիրով կը հըմայուին ...
Վանայ Ծովուն մէջ լողանքի կ'իջնէ լուսին,
Ծափ կը զարնեն ալիքները ... արշալոյսին
էն զեղեցիկը աստղերուն մէկ ոստումով,
Վարագէն վար կը ցատկէ ու կը մտնէ ծով:
Ամէն ալիք աստղ մ'առած է իր գիրկին՝
Ու կը պարեն ու կ'օրօրուին կարօտագին ...
Ու զեփիւռը ծառին - ծաղկին ականջն ի վար
Կը փըսփըսայ սիրոյ խօսքեր, կը դառնայ պար ...
Արեւելքը արգէն գոյնի բոցերուն մէջ ...
Եւ կ'արթընայ կեանքը հիմա, գիշերէն վերջ.
Ու կ'արթընայ Սիամանթօն, սարի լանջին.
Սիրտը յանձնած, թախիծով լի, սիրոյ կանչին:

V

Սիամանթօն տեսած էր իր երազին մէջ
Խրճէ - Զարէն ... ու սիրտն հիմա հնոց մ'էր անշէջ.
Երազին մէջ մատանի էր փոխանակած
Խրճէին հետ, որ իր մատին էր անկասկած,
Ու երբ բըռնել եւ համբուրել ուզած էր զայն,
Անոր ըստուերը զըտած էր գիրկին միայն:
Եղնիկ դարձած Խրճէն փախեր սարերն ի վեր,
Սիամանթօն ամբողջ օրը հետեւէր էր
Անոր հետքին ... ու երբ գիշերն իջեր խաւար,
Ինքն ու եղնիկն ինկեր էին անդունդ մ'ի վար:
Արթընցիկ էր Սիամանթօն սիրտը խրճով,
Արթընցիկ էր Սիամանթօն սիրոյ բեռով.
Ու Խրճէի մատանին էր մատին գրտած
Եւ երկիւղած սիրով շրթներն անոր դրած.
Ամէն վայրկեան հիմա տըղուն աչքն էր մատին,
Սիրտը վախի մէջ որ յանկարծ ան կ'անհետի:
Մէկ օրուայ մէջ շուրջը աշխարհն ի՞նչպէս փոխուած,
Անհոգ պառկած գիշեր մ'առաջ, հիմա խոցուած
Սիրոյ նետով ... ելած էր ան Ախիանն ի վեր,
Սիրոյ կրրակը Սիփանի հովին տըւեր.
Հովէն սակայն սիրտին հուրը չէր մեղմացած,
Ե՞րբ է արգէն բորբ կրրակը հովէն մարած ...
Աղեղ ու նետ հետը առած էր թէեւ ան,
Բայց մոռցած էր որան ու աշխարհն եւ ամէն բան.



Երազ աղջիկն էր զինք կանչող, ամէն տեղէն,
 Ծաղիկներէն ու ծառերէն, բարէն, հողէն,
 Եւ աղբիւրի մ'ծայնով հասնող իր ականջին.
 Եւ կոչնակի մ'ծայնով վանքէ մ'լերան լանջին...
 Վանայ Ծովը անոր ծոցն էր կարծես անբիծ,
 Ու զեփիւռը կը ցնէին շունչն բուրումնալից:
 Ամենուրեք ան իր կարօտը տարածեր,
 Հագար ծելով, հագար լեզուով զինք կը կանչէր:
 Բայց ոչ մէկ տեղ Սիամանթօն կը գրտնէր զայն,
 Երազ - աղջիկը կը մընար անիրական:
 Տըղուն ցաւը սրբինգը լոկ կը հասկընար,
 Հիմա սիրտը անոր միայն կըրնար բանալ.

Քեզի կը յանձնեմ սիրտըս, իմ սրբինգ,
 Ուրիշ ոչ ոքի կընամ զայն բանալ.
 Տես, իր կարօտով երկիրն ու երկինք
 Լեցուն է հիմա... ծաղիկ, թուփ ու ծառ.

Աչքով ու ձեռքով ինծի կը կանչեն.
 Ու ծովն ալ վարէն, նազով հեւալէն...
 Տես, կը ցնէն է որ ամենուն մէջէն
 Ինծի կը կանչէ... երկնի կամարէն

Գիշերը անվերջ, աստղերու աչքով
 Սիրտիս հետ խաղաց... մօտեցաւ, փախաւ,
 Եւ ամէն անգամ որ հասայ իր քով
 Ու գըրկեցի զայն, ան ըստուեր եղաւ:

Փընտռէ, գրտիր զայն ուր ալ որ ըլլայ,
 Ցաւակից ընկեր, կարօտս տար իրեն.
 Ըսէ սրտիս մէջ իր սէրը կ'եռայ,
 Ըսէ եկեր ես Սիփանայ սարէն:

VI

Ու վար իջաւ Սիամանթօն Սիփան սարէն
 Առանց որսի... մայրը, աչքերն ուռած լալէն,
 Վագեց տըղան դիմաւորել. «Ո՞ր մընացիր,
 Մարէն մեռնի քու արեւուն» ըսաւ «գացիր
 Առանց լուրի, աչքըս մընաց ճամբաներուն,
 Եւ օրն ի բուն, գիշերն ի բուն, տանիքներուն,
 Դրրան սեմին ըսպասեցի, եւ անցնողին,
 Թռչուններուն լուր հարցուցի... հեղ մ'անկողին
 Չըմըտայ ես գիշերն ամբողջ... քու արեւուն
 Մարէն մեռնի, աչքըս մընաց ճամբաներուն:»
 — Մարէ, ամբողջ օր ու գիշեր ետեւն ինկայ
 Եղնիկի մը, անոր հասնիլ բայց չըկըրցայ:
 Չը հասկըցայ իրաւ էր ան թէ երազ էր.
 Վերջին անգամ երբ ըրոնեցի, ինչպէս ըստուեր,
 Եղնիկն ու ես գըլորեցանք անդունդն ի վար.
 Մարէ ըսէ, Սիամանթօն քու միևնույնար
 Այժմ ի՞նչ անէ... Մարէ, նայէ սա մատնիկին,
 Դուն կը ճանչնաս այս պատկերը անոր ալին:

Շարունակիկ

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՊԱՏՄԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ՊԱՊ ԱՐԾԱԿՈՒՆԻ**

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԴԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

•

Ամմիանոս պատմիչը, որ անձամբ ծանօթ էր այս կոմսին, քանի մը տողով մեզի կը ներկայացնէ զինք. «Մարդ մը, որ խոնարհ ձեւեր առած կը քալէր և շարունակ տխուր արտայայտութիւն մը ունէր դէմքին վրայ, սակայն իր կեանքի բոլոր օրերուն եռանդուն զրդող մըն էր վէճերու»⁽⁹⁾։

«Տերենտիոս դաւադրական խմբակ մը կազմեց քանի մը հեթանոսներով» (խմհայերով)։ Մուշեղ պատմեց կոմսին Պապի ըրածներու մասին։ Տերենտիոս՝ Վաղէս կայսեր գրած նամակին մէջ կրկնեց հայ սպարապետին ըսածները։

Ան կայսեր կը տեղեկացնէր թէ Պապը ամբարտաւան արարքներու տուած էր ինքզինքը, թէ ան իր հպատակներու հանդէպ շատ անգույշ վերաբերում ցոյց կուտար, թէ Պապ սկսած էր պարսկական քաղաքականութիւն մշակել, և ատոր ապացոյցն ալ, անոր հրամանով Պղակ և Արարան իշխաններու սպանումն էր։ Եւ թէ եթէ անմիջական քայլեր չառնուէին Պապը հայ գահէն վար առնելու, ապահովաբար Հայաստան պիտի իյնար պարսիկ զերիշխանութեան տակ։

Վաղէս կայսրը զիւրահաւան, ամէն ըսի-ըսաւի հաւատք ընծայող, «ամօթալի տկարութիւն մը, որմէ նոյնիսկ մեր ասորեայ կեանքին մէջ մարդ պէտք է խուսափի»⁽¹⁰⁾, անմիջապէս Պապը ձեռք ձգելու միջոցներու մասին սկսաւ խօսել։ Կամ աւելի ճիշդը, միջոցը արդէն Տերենտիոս կամար թելադրած ըլլալու էր, որով կայսրը հրամա-

յեց զօրծաղրել այդ՝ առանց ժամանակ կորսնցնելու։

Տերենտիոս ներկայացաւ Պապ թագաւորին, և քաղաքավար ականածանքով, ինչպէս պարտ ու պատշաճ է երբ արքայի մը կը ներկայանան, յայտնեց թէ Վաղէս կայսրը ներկայ քաղաքական կացութեան մասին անմիջական խորհրդակցութեան համար կը խնդրէր որ Հայոց թագաւորը շտապէր Կիլիկիա գալու, և կայսրն ալ Անտիոքէն պիտի երթար Տարսոն, ուր երկու վեհապետներու տեսակցութիւնը տեղի պիտի ունենար։

Պապ թագաւոր, ընդունելով կայսեր հրաւերը, 300 ընտրեալ ծիաւորներով ճամբայ ելաւ Տարսոն։

Քաղաք հասնելուն, Բիւզանդական զօրքերու պատուոյ գումարտակ մը Պապի տրամադրութեան տակ զրուեցաւ։ Բայց շատ չանցած Հայերը զգացին թէ պատուոյ պահակը աւելի հակիչ խումբ մըն էր, կարծես հայ թագաւորը կասկածելի մէկը ըլլար, որը պէտք է միշտ հսկողութեան տակ ըլլայ։

Օրեր կ'անցնէին։ Պապի հարցումներուն թէ ի՞նչ էր ստիպողական պատճառը իր հոն գալուն, և երբ կայսեր հետ պիտի տեսնուէր, անորոշ պատասխաններով կը ձգձգէին։ Պապ քանի տարիէ ի վեր Վաղէս կայսրը չէր տեսած, այդ միջահատակ թխաղէմ, մէկ աչքը ազատած (կ'երեւի հիւանդութենէ), մեծափոր և ծուռ ծնկերով մարդը⁽¹¹⁾, և կը դարմանար թէ արդեօք ի՞նչ կենսական հարց էր որ ան պիտի խորհրդակցէր հետը։

(9) Ammianus, XXX, 1, 2։

(10) Ammianus, XXXI, 14, 6։

(11) Ammianus, XXXI, 14, 7։

Միաժամանակ Հայաստանի մէջ, Մուշեղ և իր արքանեակները, արդէն Պապի հետանալուն մասին չուզեցին կը տարածէին ժողովուրդի մէջ, զգացնելով թէ շատ չանցած նոր և աւելի լաւ թագաւոր մը պիտի գար:

Եւ այդ ուղիով թեմաք ալ անոնք կը շտապեցնէին Տերենտիոս կոմսը, որ կայսեր գրեց ըսելով թէ անհրաժեշտ էր որ առանց ժամանակ վատնելու, Պոլիս գտնուող Արշակունի իշխաններէն մէկը Հայաստան պէտք է զրկեր որպէս թագաւոր, եթէ չէր ուղիւ որ հայ աշխարհը պարսիկներուն զիրկը իշխայ⁽¹²⁾:

Պապ այլևս չափազանց զգուշութեամբ և շրջահայեցութեամբ կը վարէր ինքզինքը: Կասկածը սկսած էր մտառանջիլ զինք թէ այս ամէնը թերեւ ծուղակ մըն էր իրեն դէմ:

Բախտի բերումով, երկուստեք թագաւորին գաղտնապէս մէկը հաղորդեց Տերենտիոսի վերջին նամակի մասին, որով ան Վաղէսէն նոր թագաւոր մը կ'ուզէր Հայոց համար:

Այլ տարակոյտ չէր մնար Պապի մտքին մէջ թէ իրեն կը սպասէր զժողով վարձան մը: Տարտոն թակարդ մըն էր, թերեւ ալ գերեզման մը:

Պապի արթնամտութիւնը թեւեր առաւ: Փրկութեան միակ միջոցը փութով և յանկարծական փախուստի մէջ կը կայանար: Անմիջապէս Պապ իր մտերիմ խորհրդակիցներուն հետ միասին ծրագրեցին պարսպապատ քաղաքէն փախչել:

Մեծ գաղտնապահութեամբ Պապի հետեորդներուն հրահանգուեցաւ իրենց ձիերը հեծած, երեկոյեան մօտ, այսինչ ժամուն, մօտենալ քաղաքի դռներէն որոշ մէկուն, և տրուած նշանի վրայ ամէնքն ալ, համախումբ կազմով, քառամբակ դուրս խոյանալ:

Դրան պահակները, յանկարծակիի եկած, սուբաքող գրոհը չկրցան արգելել, և հայ ձիւորները յաջողութեամբ թոան դուրս:

Պահակապետէն լուր ստանալուն, նահանգի կառավարիչը ահապարեց Պապի ետեւէն, և անոր հասնելուն, աղաչեց որ վերադառնայ: Մերժուեցաւ, և վախճած՝ ետ գնաց:

Անմիջապէս լեզուն մը գինուոր վաղեցին փախչողներու ետեւէն: Երբ մօտեցան չուղ հայերուն, Պապ իր ամենաքաջ ընկերներով դարձաւ յարձակելու, և սոսկալի նետածգութեամբ այնքան լեղապատառ ըրաւ զինք բռնելու եկողները, որ «հազարապետը և ամբողջ լեզունը ա'լ աւելի որքնթաց վերադարձան պարսիկները քան անկէ մեկնած էին»⁽¹³⁾:

Երկրի ճամբաներուն անձանթով, Պապ և իր հետեորդները երկու օր երկու զիշեր երկար ուղորդուած ճամբորդութենէ վերջ եփրատի եզերքը հասան: Դեռ հոն խիստ յարձանուտ էր և խոր: Պահ մը շուտաւ մնացին: Մեծամասնութիւնը լողալ չէին գիտեր: Նաւակներ չկային: Միաժամանակ ալ վախ կար թէ, իրենք այնքան դարձգարձիկ ճամբաներէ եկած էին, որ զիտ զիրենք հալածողները կրնային հասնիլ, եթէ իրենք չկարենային գետը անցնիլ:

Երջապատը ագարակապաններու տունի կային, և շատ այգիներ: Ամէն մարդ խորհուրդ մը կուտար թագաւորին, գետը ապահով անցնելու մեթոտի մասին:

Պապ հետեւալ միջոցի գիմեց: Ագարակապաններէն հաւաքել տուաւ տիկեր, ուրնք կը գործածուէին զինիի համար, ինչպէս նաեւ անկողիններ:

Ուռած տիկերու վրայ ամբացուցին անկողինները: Այսպիսով յարմարեցուած «լատ» երէն տաղինի վրայ նստաւ Պապ, յետոյ իր աւագանիին զխաւորները, ձիերնին քաշելով իրենց ետեւէն: Իսկ մնացածները քշեցին իրենց ձիերը ջուրը, և մեծ վտանգներ զրմագրաւելէ վերջ, անմիաս բայց շնչառապա կրցան իյնալ միւս ափը:

Հանգստանալու համար կարճ զտղարէ յետոյ, խումբը դարձեալ ճամբայ ինկաւ:

Երբ Պապի փախուստը Վաղէս կայսեր հաղորդուեցաւ, իր մտահոգութիւնը ա'լ աւելի մեծ էր քան իր բարկութիւնը: Ան վախճաւ թէ, Պապ իր հայրենիքը հասնելուն, ալ բոլորովին երես պիտի դարձնէ Բիւզանդիոնէն, ու միանայ ատար թշնամիին:

Պապ Հայաստան հասնելու չէր: Վաղէս անմիջապէս հրամայեց որ 1,000 փորձառու աղեղնաձիգներ վազեն հայերու ետեւէն:

(12) Ammianus, XXX, 1, 4:

(13) Ammianus, XXX, 1, 5-7:

Անոնց հրամանատար կարգեց երկու հոգի, Դանիելյոս և Բարդիմեոս, որոնք քաջա-
ծանօթ էին երկրի ծակ ու ծուկին: Եւ
չնորհւեալ այդ ծանօթութեան, շուտընդփոխ
եփրատը անցնելով, հասան վայր մը ուր
Հայաստան տանող երկու ճամբաներ իրարմէ
կը զտուէին միմիայն երեք մզոն հեռա-
ւորութեամբ:

Բիւզանդացի զօրապետները իրենց գու-
մարտակը երկու մասի բաժնեցին: 500 հոգի
մէկ ճանապարհը բռնեց, 500 հոգի միւսը:

Ուրախ էին: Ծուղակը լարուած էր, և
Պապը որ մէկ ճամբան ընտրէր, պիտի իշ-
նար մէջը:

Այս երկու ճամբաներուն միջև, ան-
տառի մը մէջ, հայերը դադար առած էին
հանգչելու համար: Երբ ճամբորդութիւնը
վերսկսէին, պիտի իշնային երկու ճամբա-
ներէն մէկը կամ միւսը, ուսկից քիչ մը
յառաջանալէ վերջ, պիտի հանդիպէին ի-
րենց հալածիչներուն:

Սովորական աննշան պատահար մը Պա-
պի օգնութեան հասաւ:

Ճամբորդ մը, որ կ'աճապարէր եփրատի
ափը հասնիլ, կը տեսնէ զառիվերը զինուոր-
ներով կը վիտայ: Վախցած անոնց հանդի-
պելէ, կը ձգէ ճամբան և նեղլիկ արահետի
մը հետեւելով, որ երկու ճամբաներու միջև
կը գտնուէր, կը մտնէ անտառ:

Քիչ մը յառաջանալէ վերջ, կը հան-
դիպի հայերու, որոնք զինք կը տանին
Պապի առաջ:

Պապը առանձնակի հարցաքննեց մար-
դը, և անկէ իմացաւ թշնամի զօրքերու
ներկայութիւնը:

Թագաւորը ճամբորդը իր մօտ պահեց
և վատահեղուց զինքը թէ իր անձին ունէ
վտանգ չկար:

Յետոյ Պապ, առանց մէկուն բան մը
յայտնելու, որպէսզի չվախնան, իր մօտ
կանչեց հայ ձիաւոր մը և ապապրեց որ ան-
միջապէս աջ կողմի ճամբան երթայ, և ա-
ռաջին գիւղը հասնելուն, թագաւորի և իր
խումբին համար կերակուր և պատուպարան
ճարելու կարգադրութիւն ընէ:

Ապա թագաւորը երկրորդ ձիաւոր մը
կանչեց և զրկեց ձախ կողմի ճամբան, միև-
նոյն յանձնարարութեամբ, առանց մէկը
միւսին հրահանգէն լուր ունենալու:

Երկու ձիաւորներու մեկնելէն վերջ,

Պապը, ճամբորդը որպէս առաջնորդ ունե-
նալով, մացառուտի մէջ կորսուած արա-
հետէն ինք և իրենները անցան, և շատ
չանցած իրենց ետեւ ձգեցին Բիւզանդական
երկու խումբերը, որոնցմէ իւրաքանչիւ-
րը հայ ձիաւորը ձերբակալած, ալ ուրախ
դուարթ կը սպասէր իրենց ուղած մարդուն:

Երբ Հայաստան հասան, և իմացուեցաւ
որ Պապ թագաւոր ողջ առողջ իր երկիրը
եկած է, ժողովուրդը ամենուրեք խանդա-
վառ ուրախութեամբ ողջունեց զինք⁽¹⁴⁾:

Բիւզանդական երկու հրամանատարներ
բոլորովին շուարած, ձեռնունայն ետ դար-
ձան: Պապի դէմ իրենց կատաղութիւնը
չափ ու սահման չունէր, որ այսպէս անի-
մանալի կերպով իրենց մատերու արանքէն
փախեր էր: Պարտկելու համար իրենց ան-
ճարակութիւնը, անոնք երգում պատառ
եղան համոզելու վաղէս կայսրը, որ Պապ
կախարդական գաղտնածածուկ միջոցներով
պահ մը կուրցուցած էր Բիւզանդացիները,
խակ իր և իր հետեւորդ հայերուն ալ ձեւերը
փոխելով, իրենց շարքերու մէջէն անցեր
էին առանց տեսնուելու: Այս տեսակ վտան-
գաւոր կախարդի մը հետ էր կայսեր գործը,
և եթէ վաղէս չուտով անոր հաշիւը չմաք-
րէր, աւելի աղէտալի դէպքեր կրնային
պատահիլ այդ չարագործի երեսէն⁽¹⁵⁾:

Վաղէս ատամները կըճտնէ:

Որսը փախած էր, և որսորդը պարապ
թակարդի մօտ նստած:

Բայց որսորդը կ'որոճար:

3. ՄԵԾ ՈՃԻՐԸ

Հայաստան վերադառնալուն, Պապ թա-
գաւոր ունէ վրէժխնդրական քայլ չառաւ, և
շարունակեց իշխել կարծես արտասովոր բան
մը պատահած չըլլար, «լուութեամբ կրելով
իրեն դէմ կատարուած սխալները»⁽¹⁶⁾:

Ան ունէ կասկած չունեցաւ Մուշեղէն:
Պապի աչքին զլխաւոր չարագործը Տերեն-
տիոս կոմսն էր, այդ խոնարհ երեւոյթով
դաւադիրը, մոլեռանդ Ուղղափառեան, որ
Պապի դէմ իր սադրանքը հիւսած կրնար
ըլլալ՝ իրեն հիացող Բարսեղ եպիսկոպո-

(14) Ammianus, XXX, 1, 8-15:

(15) Ammianus, XXXI, 1, 17:

(16) Ammianus, XXXI, 1, 15:

սապետի դրդումով, Բարսեղ, որ Պապը ատելու անքան սուր և ցաւառիթ պատճառ ունէր, և որ կը սքանչանար Տերինտիոսին, զինք «ամենաքանչիւ կոմս» կոչելու աստիճան:

Այո՛, այս անուր դաւը Հայոց թագաւորի դէմ ծնունդ առած էր Տերինտիոսի գլխին մէջ:

Մուշեղ Մամիկոնեան, սակայն, ահաբեկեցաւ իրենց դաւի այս կերպ ձախողութենէն: Ոչ մինակ Պապ թագաւոր յետ այնու աւելի հաստատամտութեամբ իր հակաբնական քաղաքականութիւնը շարունակէր և Մուշեղը բողոքովին չէզոքացնէր պետական կեանքի մէջ, այլ, աւելի սարսափելին, եթէ Պապ կերպով մը իմանար Մուշեղի մեղսակցութիւնը իրեն դէմ ի գործ դրուած ոճրապարտ դաւադրութեան, Մուշեղին կը սպասէր միևնոյն սեբախտը որ բաժին ինկաւ Գղակ Մարգպետին: Պիտի գլխատուէր, և գլուխը նիզակի զարնուած, արքունական հրապարակի վրայ պիտի ցուցադրուէր:

Աղէտաւոր ճամբէն որ Մուշեղ ընտրած էր, և կ'ընթանար, այլևս ետ դառնալ կարելի չէր: Այդ կ'առաջնորդէր զինք ահռելի հանգրուանը, Պապ թագաւորի սպանութիւնը⁽¹⁷⁾:

Եւ ոճիրն ալ պէտք է գործուէր Բիւզանդացիներու ձեռքով:

Մուշեղի չափ աճապարանքի մէջ էր նաև Վաղէս կայսրը: Նոր ծրագիր մշակուեցաւ Պապ արքան կարելի եղածին չափ շուտ մէջտեղէն վերցնելու:

Տերինտիոս ետ կանչուեցաւ Հայաստանէն, զգացնելու Հայ թագաւորին թէ Տարսոնի անախորժ միջադէպը բացարձակապէս Տերինտիոսի չար մտքին պտուղն էր, թէ Վաղէս կայսրը բնաւ լուր չունէր, և զոհ դարձած էր նենգամիտ Տերինտիոսի դաւին, այնքան որքան ինքը Պապ: Եւ մինակ բանը որ կայսրը կրնար ընել, կերպով մը Պապ թագաւորին սիրտը առնելու, էր պաշտօնանկ ընել Տերինտիոս կոմսը և աւոր տեղ զրկել Հայոց թագաւորին հրացող հրամանատար մը:

(17) Որքան պարզամիտ անմեղութեամբ Մեսրոպ երէց կը գրէ. «Իբրև տեսին նախարարքն Հայոց (Պապի վարմունքը) խորհեցան սպանանել զՊապ, և թագաւորեցնել զբաջն Մուշեղ» (116):

Այս նորեկը Տրայանոս զօրապետն էր: Ան Վաղէս կայսեր այցելած էր Անտիոք, և երկուքը մէկ երկար խորհրդակցեցին Հայոց թագաւորը սպաննելու յարմարագոյն մեթոտի մասին:

Տրայանոս ալ, Տերինտիոսի նման, մուշեղեան Ուղղափառեան էր, այնքան մոլի, որ երբ քանի մը տարի առաջ, Գոթերու դէմ մղած պատերազմին պարտուեցաւ, և Վաղէս զինք կշտամբեց, Տրայանոս, առանց բռնելը ծամմեղու յանգգնութեամբ պատասխանեց թէ, իր պարտութեան պատճառը ոչ թէ իր ապիկարութիւնն էր, այլ Վաղէսի Արիոսեան ըլլալը, որով Աստուած կայսեր դէմ կ'իլլէր⁽¹⁸⁾:

Բաղդատմամբ անժպիտ և սակաւաստ խռովարար Տերինտիոսի, Տրայանոս յայտնուեցաւ անկեղծ բարեկամութեան տաքարիւն և շատաստ մարմնացում: Խնդումներն, լեզուն մեղր ու շաքար, և շողօքութութեան արուեստը հասցուցած այնպիսի կատարելութեան որմէ համակ անկեղծութիւն կը հոսի:

Երիտասարդ արքայի վստահութիւնը շահելու համար ամէն հնարաւոր մեթոտ ի գործ դրաւ՝ տաղանդաւոր գերասանի ճշունութեամբ և արուեստով: Յարգալիր մտերմական շեշտ մը, որ կասկածը կը փարատէ, Բիւզանդական զօրապետի խօսքերը քաղցրացուց և վարմունքը հաճելի դարձուց:

Ամէն անգամ որ Պապ թագաւոր խնձոյք մը կուտար, Տրայանոս, առանց հրաւիրուած ըլլալու, կը վազէր կուգար, իր գովասանքը շաշուելու տրքային: Որպէս թէ Պապ թագաւոր իր գաղտնակիցը եղած ըլլար, անոր կը կարգար Վաղէս կայսեր անձնական նամակները — դիտումաւոր կերպով գրուած, Պապի կարգացուելու —, ուր կայսրը բարեկամական անկեղծ բռնելով կ'արտայայտուէր Հայ թագաւորին մասին⁽¹⁹⁾:

Վերջապէս Տրայանոս շահեցաւ Պապի վստահութիւնը: Անշուշտ իր հայ դաւակցներն ալ իրենց գերը կատարեցին այդ յաջողութեան մէջ:

Օր մը Տրայանոս Պապ թագաւորը ճաշի հրաւիրեց:

Հրաւերը ընդունուեցաւ առանց ամենադոյզն կասկածի:

(18) Theodoret, IV, 30:

(19) Ammianus, XXXI, 1, 19:

Թերեւս եթէ մէկը պատահարաւ արքային յիշէր թէ գրեթէ տարի մը առաջ, եւրոպայի մէջ, Քատի ցիլի թագաւորը Գապրիելոս ճաշի հրաւիրուեցաւ Հռոմայեցի զօրապետի մը կողմէ և վայրագարաւ ըստանուեցաւ, Պապ ուսերը թօթուեր՝ մեղմ քմծիծաղով մը: Ի՞նչպէս կարելի էր նման քստմեղի բան անկեղծութեան տիպար իր մտերիմ Տրայանոսէն:

Իսկ ընդունելութիւնը սր Տրայանոս սարքած էր Հայ արքային, անտարակոյս Պապին պատճառած ըլլալու էր ինքնագոհ ժպիտ մը: Եւ այդ մասին թագաւորը թեւեւ համակրական ակնարկութիւն ալ ըրած ըլլալու էր իր բարեկամ Գնել Անձեացի իշխանին, որ Պապին կ'ընկերանար:

Մեծահոգակ վեհապետի մը վայել տալիճանի փառաւոր ցոյցով կ'ողջունէր Տրայանոս իր Արչակունի հիւրը:

Ասպարակի լիզէնականներու չքախուժք մը պատուոյ պահակ կեցած էր սրահի պատերուն երկայնքը, և դուրսը: Լարային և փողաւոր նուագարաններ, երգիչներ: Արծաթ և ոսկի սպասներու փալիւրն ճոխութիւն: Խորտիկներու հագուազիւտ տեսակներ: Ամէն բան ցոյց կուտար թէ Տրայանոս ոչ մէկ նեղութեան առջև կանգ առած էր փառահեղ և յիշատակելի սարքուածքով ողջունելու իր մտերիմ Պապ թագաւորը:

Պապ գրաւեց պատուոյ աթոռը, և երբ գլինի առաջին բաժակը մատուցին իրեն, փող, քնար, սրինգ և թմբուկ միանուագ հնչեցին, սրահը լեցնելով արտոժաւուր եւրաշտութեամբ: Երգ ու նուագ շարունակեցին: Գլինին շրջանը կ'ընէր սեղանին, և սեղանակիցներու ուրախ տրամագրութիւնը կը բարձրանար:

Պապ թագաւոր իր ձախ ձեռքին բռնած ոսկի բաժակ և աջ ձեռքը ծունկին յինած մինչ անհոգ կը դիտէր նուագողները, Տրայանոս դուրս ելաւ սրահէն, իր թէ բնական պէտքի համար:

Վայրկեան մը վերջ, հսկայակազմ բարբարոս զինուոր մը, զմէնտեսիլ, աչքերուն մէջ վայրագ փայլով, և ձեռքը մերկացած սուր մը բռնած ներս մտաւ և ուղղուեցաւ դէպի Պապ արքան:

Պապ այդ մէկ երկվայրկեանի մէջ յիշած ըլլալու էր իր թագունին Զարման

դուխտ, դեռ աղջիկ, հագու քսան տարեկան, յիշած ըլլալու էր երկու փոքրիկ մանչ զաւակները, Արչակ և Վաղարշակ: Անմիջական ազէտի տեսքէն ծնած յուսահատ քաջութեամբ ան խկոյն իր դաշոյնը քաշեց, ոտքի ցատկելով ինքզինքը պաշտպանելու:

Իր ետեւը, իր թէ պատուոյ պահակ կեցած զինուորներ, իրենց սակագորտ վահաններով արգիլեցին արքային փախուստը:

Պապ հագու ոտքի ելլելու փորձ ըրաւ, երբ բարբարոսի ափէնի սուրը մոկեցնող հարուածներով իջաւ երկտասարգ թագաւորի կրծքին, վզին և երեսին: Պապ ինկաւ սեղանի վրայ, և իր արքայական արիւնը, շրջուած ոսկի և արծաթ բաժակներու գլինին խառնուած սեղանի նրբահիւս սփռոցը ներկեց:

Գնել Անձեացին նստած տեղէն վեր ցատկած, խոյացաւ Պապի մօտ և գլինք արգիլել ուզող զինուորներէն մին տեղն ու տեղը սպաննեց: Բայց Տրայանոս, որ բարբարոսի ետեւէն ներս եկած էր, իր սուրը իջեցուց Գնելի գլինին և սպաննեց զայն⁽²⁰⁾:

Ո՞ւր էր Մուշեղ սպարապետը: Փառստոս, որ կատարուած ոճիրի մանրամասն նկարագրութիւնը կ'ընէ, Մուշեղի մասին յիշատակութիւն չունի: Եթէ ան ներկայ էր ճաշասրահին մէջ, անտարակոյս հանդիսատեսի դեր կատարած էր, և աւելի գոհ Ֆեացած երբ տեսաւ թէ Գնելն ալ մէջտեղէն վերցաւ:

Ի՞նչ արդար զայրոյթով Ամմիանոս Մարկելինոսի բառերը կը դողան երբ ան իր գաղափարը կը յայտնէ այս սարսափելի ոճիրի մասին:

«Ահա՛ այս տեսակ դաւաճանութեամբ մը, կը գրէ ան, դիւրահաւանութիւնը անարգօրէն խաբուեցաւ, և այդ ալ ճաշկերոյթի մը ատեն, որ յարգուելու է նոյնիսկ Սե ծովու վայրի շրջապատին մէջ, Հիւրասիրութեան աստուծոյ աչքերուն առջև օտարականի մը արիւնը թափուեցաւ: Եթէ մեռելները ցաւ կրնան զգալ, համբաւաւոր Թաբրիկիոս Լուսինոսը կսկծալի հոնդին արձակած ըլլալու էր այս ամբարտաւան ոճիրին ի լուր, յիշելով իր պարագան, երբ

(20) Ammianus, XXXI, 1, 20, 21. Փառստոս, Ե. 32:

կը կոռէր իր հայրենիքի թշնամի Պիրոս թագաւորին դէմ, որ Բտալիան հուր ու կրակի մատնած էր: Երբ գաղտնաբար Պիրոսի թիկնապահը Ֆաբրիկիոսին առաջարկեց սպաննել իր տէրը անոր բաժակին մէջ թոյն խառնելով, ինչպիսի՜ վեհանձնութեամբ Ֆաբրիկիոս մերժեց թիկնապահին առաջարկը, և Պիրոսին նամակ գրելով զգուշացուց զայն իր անմիջական սպասաւորներէն:

«Ոմանք ուզեցին արդարացնել այս արտասովոր և ամօթալի արարքը, յիշելով օրինակը Սերտերիոսի սպանման (ճաշկերոյթի ատեն): Բայց այդ շողոքորթները չեն գիտեր թէ, ոչ մէկ արարք, որ օրէնքի դէմ է, կրնայ արդարացուիլ ըսելով թէ անոր նման ուրիշ ոճիր մըն ալ գործուած էր, կամ անպատիժ մնացած, ինչպէս կ'ըսէ Յունաստանի յաւիտենական փառք Տեմոսթենէս»⁽²¹⁾:

Պապ թագաւոր հազիւ քսաներեք տարեկան էր, երբ սրախողխող զուլսը կ'իշնար ճաշասեղանի սպասներուն մէջ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մուշեղ Մամիկոնեան այժմ կրնար տնօրինել Հայաստանի գործերը իր ուզածին պէս: Ինք և իր արքանեակները կացութեան տէրն էին:

Փառատենչիկ սպարապետը տեսակ մը զինուորական տիրապետութիւն կը հաստատէր, որ Բիւզանդական ուժի կրթնած, պիտի ապահովէր իր բարձր դիրքը: Թէև Պապ թագաւորի վայրագ սպանութեան մէջ իր մեղսակցութիւնը այլևս գաղտնիք մը չէր, և շատեր իմացած էին, բայց Մուշեղ մեծ երկիւղ մը չէր զգար, քանզի իր յաղթութիւնը կատարեալ կը համարէր:

Ան այս անգամ լուրջ պատճառ մը պիտի չունենար մտահոգուելէ նոր Արշակունի թագաւորէն, որովհետև ան ո՞վ ալ ըլլար, Վաղէս կայսեր կողմէ պիտի զրկուէր, և կայսրը իր գասը սովորած, զգուշութեամբ պիտի ընտրէր հայ գահի թեկնածուն՝ Պոլիս գլխունող Արշակունի իշխաններէն:

Վաղէս Հայաստան զրկեց Վարազդատ անունով Արշակունի երիտասարդ իշխան մը⁽¹⁾: Այն իրողութիւնը թէ ատենօք Վարազդատ Շապուհ թագաւորի մօտէն փախուստ տալով ապաստանած էր Պոլիս⁽²⁾, վստահութիւն ներշնչած ըլլալու էր կայսեր թէ Վարազդատ հաւատարիմ պիտի մնար Բիւզանդական արքունիքին, և Հայաստան հասնելուն գործակցէր երգուեալ Բիւզանդասէր Մուշեղի և անկէ ուղղութիւն առնէր:

Այդպէս պիտի չըլլար:

Ի սկզբան, ինչպէս Պապի պարագային, Վարազդատ թագաւոր հուր հետեւեցաւ տիրող կուսակցութեան իշխաններու ցուցմունքին, մինչև կացութեան ընտելանալը:

Հետզհետէ Վարազդատ իր շուրջը բուրեց Պապ թագաւորի երիտասարդ խորհրդականները: Ասոնց կը միանային Մուշեղի թշնամիները, Պարսկական կուսակցութեան մնացած իշխաններէն, մանաւանդ Սահառունեաց տոհմի նահապետ Բատ իշխանը:

Վարազդատ սկսաւ, Պապի նման, Շապուհի հետ բանակցութիւններ վարել: Ան ալ դժգոհ էր Մուշեղի տիկտատորական յաւակնութիւններէն: Բայց ալ աւելի վրդովուած էր իր ազգական Պապ թագաւորի եղբրական սպանման մէջ Մուշեղ Մամիկոնեանի գլխաւոր պատասխանատուութեան համար:

Վարազդատին պատմած էին ամբողջ դժնդակ մանրամասնութիւնները այդ չարամիտ դաւադրութեան:

Թագաւորը որոշեց Պապին վրէժը լուծել: Եւ կարծես իր ընկիւթին ալ գաժան նրբութիւն մը տալու համար, Վարազդատ իւրացուց Տրայանոս զօրավարի ծրագիրը:

Արքան մեծ ճաշկերոյթ մը սարքեց, ուր հրաւիրեց աւագանին և Մուշեղ Մամիկոնեանը: Նուագ, զինի, համադամ կեւրակուրներ: Ամէնքը տեղին, ինչպէս նաև Վարազդատէ գաղտնի հրահանգ ստացած տասներկու ուժեղ անձեր, որոնք սրահի մէջ յարմար դիրք բռնեցին Մուշեղի նրստած տեղին մօտ:

Գինին առատօրէն շրջանը ըրաւ սեղանին, թէև արքան ինքը խմելէ զգուշացաւ:

(21) Ammianus, XXXI, 1, 22, 23:

(1) Փաւստոս, Ե. 34: (2) Խորենացի, Գ. 40:

ԵՐԵՍՈՒՆ ՏՄԵՐԻ ԱՌԱՋ

Ս. ՅԱԿՈԲ ԵՒ ՎԱՏԻԿԱՆ

Վատիկանի Մատենադարանին Արևելեան Բաժնին Մատենադարանապետը՝ Մոնսինյոր Թիսերան 1923ի Յուլիոսին այցելած էր Ամեն. Ս. Պատրիարք Հօր և այդ առթիւ հետաքրքրուած էր տեսնել Ս. Յակոբի տպարանը և Ձեռագրաց Մատենադարանը, որ հաստատուած է Ս. Թորոս եկեղեցւոյն մէջ, հուրի և ջուրի անթափանցելի ապահով շէնք մը:

Յարգելի Մատենադարանապետը հիացած է Հայ Ձեռագիրներու այս ճոխ հաւաքածուն վրայ, և միւս կողմէն փափաք յայտնած է գնել Ս. Յակոբի Տպարանէն լոյս տեսած գիրքերէն Վատիկանի Մատենադարանին համար: Ս. Պատրիարք Հայրը իմանալով ասիկա, ուզուած հատորները նուիրած է Վատիկանի Մատենադարանին:

Մօնսինյոր Թիսերան, Հռոմ վերադարձին, Երուսաղէմի Հայոց Պատրիարքին այս նուիրատուութիւնը կը տեղեկացնէ Սրբազան Քահանայապետին, որ ի նշան իր գոհունակութեան Ս. Յակոբի Մատենադարանին կը նուիրէ լուսատիպ օրինակը այն յունարէն Յայտմաւորքին, որ յատկապէս գրչագրուած է Բիւզանդիոնի Հայազգի Վասիլ Բ. Կայսեր (976 - 1025) համար^(*):

Մօնսինյոր Թիսերան իր տեսակցու-

թեան պահուն յայտնած է Ս. Պատրիարք Հօր թէ սկսած է կազմել Վատիկանի Մատենադարանին մէջ գտնուող Հայերէն Ձեռագիրներուն Մայր Յուցակը:

Յարգելի Մատենադարանապետին այդ գործը, լատիներէնով, լոյս տեսած է Վատիկանի տպարանէն. հոյակապ հրատարակութիւն մը, շքեղ տպագրութեամբ, որմէ օրինակ մը նուէր զբկած է Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Երուսաղէմի Դամիսկեան գիտուն Միաբանութենէն Հայր Աթիլի ձեռքով, իմացնելով միանգամայն թէ այս գործին առաջին երկու օրինակներէն մին Ս. Պապին ներկայացուցած է, իսկ միւսն ալ Դուրեան Ս. Պատրիարքին:

Ն. Ամեն. Սրբազնութիւնը պաշտօնադիրով մը իր շնորհակալութիւնը յայտնած է Մօնսինյոր Թիսերանին:

Մանօք. — Այս ստոյգ տեղեկութիւններով ինքնին կ'ուղղուին վերջիս Հայ թերթերու մէջ Ս. Յակոբի և Վատիկանի յարաբերութեանց մասին տեսնուած ալընդալոյ լուրերը:

(Սիոն, 1928 Փետրուար, էջ 64):

(*) Ինչպէս որ այս Ձեռագրին բնագիրը գլուխ գործոցն է յոյն գրչագրութեան և մանրակարգութեան, նոյնպէս այս լուսատիպն ալ գլուխ գործոց մըն է գեղարուեստական տպագրութեան: Գործին իտալերէն վերնագիրն է Il Menologio di Basilico I I (Cod Vaticanum Greco 1613), տպագր. Torino, Fratelli Bocca - Editioni, MdeceVII. Այս օրինակը կը կրէ 116 թիւը:

Տրամագրութիւնները բարձրացան, և ուրախութեան ալիքը ծփաց շքեղ սրահին մէջ:

Վարազդատ ոտքի ելաւ գոյուր երթալու, իբր թէ բնական պէտքի համար:

Սա կանխաւ որոշուած գաղտնի նշանն էր:

Տառներկու մարդիկ ինկան Մուշեղի վրայ, և անոր թևերը բռնելով զինք անշարժութեան մատնեցին:

Մուշեղ զայրացած, ոտքի վրայ կեցող թագաւորին հարցուց. «Այս ինչո՞ւ համար է»:

Վարազդատ՝ դէպի գուռը յառաջանալով, պատասխանեց անգոսանօք. «Գնա Պապ թագաւորի մօտ, անոր հարցուր և կ'իմանաս թէ ինչո՞ւ համար է»⁽³⁾:

Մուշեղ Մամիկոնեան իր գլխովը վճարեց Պապ Արչակունքին ունեցած պարտքը:

Մինչ տառներկու հոգի Մուշեղի թևերը գամուած պահեցին, Բատ Սահառունին սուրը հանեց և անոր գլուխը կտրեց:

(29)

ՀՐԱՆԴ Բ. ԱՐՄԷՆ

(Վ Ե Ր Ձ)

(3) Փառաոս, Ե. 35: Մեսրոպ երէց՝ Վարազդատ թագաւորին Մուշեղի ըսած բառերը կուտայ այս կերպ. «... Եւ Վարազդատ ասէ, գնա՛, դու հարց ցՊապ, թէ զնա վասն է՞ր ետուր ի ձեռս սպանողացն» (118):

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(ԽԵԻ) ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

ՃԻ.

Մատոյց պատարագ Աբէլ, եւ եղեւ Տեառն ընդունական,
մատոյց եւ Կայէն ոչ լաւ, եւ չեղեւ այն հաճոյական:

ՃԻԱ.

Աբէլ ի գառանց զընտիրն, եւ յօժար մըտօք կամական,
իսկ Կայէն զանարգն յարդեանց՝ անիպէտօ անպատշաճական:

ՃԻԲ.

Յորժամ չընկալաւ Աստուած, հեռացաւ յեղբայրսիրութեան,
ասէր, սա ի դրախտն երթայ, ւ ես լինիմ արտաքս մնացական,

ՃԻԳ.

Եաւթըն մեղք արար Կայէն, եւ պատիժըն նոյն թրւական,
զընծայն որ անարգ մատոյց եւ նախանծ ընդ եղբայրութեան:

ՃԻԴ.

Արիւնն որ անպարտ հեղեաց, մեղքըն նոր անաստուածական,
ւ արեամբ շաղախեաց զերկիր, սուգ ծնողացն եթող տրտմական:

ՃԻԵ.

Լըրբութեամբ պատասխանին՝ միթէ ես իցեմ պահապան,
զի Տէր հարցանէր զըթով, ի պատճառս ապաշխարութեան:

ՃԻԶ.

Ասաց Աստուած ընդ Կայէն, թէ անգօր մընաս կայական,
հեծաս ւ երերաս դողաս, գարշելի ի ազգըս մարդկան:

ՃԻԷ.

Բոլոր մարմնովդ բորոտիս, եւ չինի բեզ տեղ հանգստեան,
եղջերբ բուսանին ի գլուխդ, գայ Կայէն լինի ձայնական:

ՃԻԸ.

Եւ որ սպանանէ զԿայէն՝ եօթն եօթեանց պատիժ կըրէ այն,
զոր ջըրհեղեղաւ կորեան, Կայենի ազինքն ամենայն:

ՃԻԹ.

Եւ Կայէն զենովք ծընաւ, եւ որդիք մարդկան կոչեցան,
ենովք ըզԴայիրիդադ, նա զՄաղաղիէլ չարութեան:

ՃԻԱ. — 1. — զընտիրսն, Ժ:

2. — այն ի պէտս, Խ:

ՃԻԲ. — 1. — Կհեղ, ԷԽ:

2. — եթով, արար, ԺԽ:

ՃԻԵ. — 1. — պատասխանէր, Է:

ՃԻԶ. — 1. — անգօր, զօրն, Ժ: . . . ԹԻ:

Յեա՛ սպայական, Զ:

2. — . . . ի ազգըս մարդկան, Ժ. Դու որդոց մարդկան, ԷԽ. ազգիս մարդկան, Ը:

ՃԻԷ. — 1. — բոլորտիս, Ը: ւ ոչ լինի,

ՃԼ.

Մաղաղիէլ զՄաթուսաղայ, ազգ եօթն, ազինք կայինեան,
Ղամէք երկու կին ունէր, սընուցիչ մեղաց չարութեան:

ՃԼԱ.

Ղամէք ընդ կանայսն ասէր՝ խախտեցէք զուխտն Աստուածութեան,
շնացէք ընդ ազգին Սէթայ, որ որդիք Տեառն անուանեցան:

ՃԼԲ.

Ի յԱդայ ծընաւ զՈւբալ՝ երաժիշտ եղեւ նա գուսան,
և ի Սեւլայ ծընաւ Թորէլ, որ արար զգործ դարբընութեան:

ՃԼԳ.

Առին սընկոյր եւ ծարուր՝ ուսուցիչ կանայք չարութեան,
անկան ընդ ազգին Սէթայ, եւ եղեւ զինչ որ կամեցան:

ՃԼԴ.

Իսկ Կայէն լալով ասէր, արարիչ Աստուած պետական,
սաս գազանացըն քոց զի տացեն ինձ աւր մահըւան:

ՃԼԵ.

Այս Ղամէք եսպան զԿայէն, ոչ թէ սայ է թոռն Ենովքեան,
եւ խոստովանէր կանանցն, որ չըկրէր զպատիժ Կայինեան:

ՃԼԶ.

Դարձցուք մեք յազգըն Սէթայ, ի յԱդամ ի նախնին Եւայն,
վաթսուն ուստր եւ դուստր ունէր, որ անուանքըն չեն յերեւան:

ՃԼԷ.

Իսկ Ադամ ըզՍէթ ծընաւ, որ ծնողացն եղեւ սփոփարան,
և ի Սէթայ ծընաւ Ենովս, մարդ բարի արմատ բարութեան:

ՃԼԸ.

Նայ որ յուսացաւ յԱստուած, թէ խնամող եւ Հայր զըթական,
նայ ոչ մոռանայ ըզմեզ, այց առնէ յաւուրն յարութեան:

ՃԼԹ.

Զփրչումն որ մերկեաց Ադամ, զնոյն Ենովս և Ենովք ընկալան,
սորա արարին ըզգիրս, էական գոյից ցուցական:

ՃԼԱ.

Հոգւոյ եւ մըտաց է հաշ, իմաստնոցն է գործիական,
որպէս զԱստուած է տեսող, բարձրութեան խորոց գիտական:

ՃԼԱԱ.

Քան զոսկի ընտիր է սա, քան զարծաթ եւ այլ պիտեւան,
քան զականս է պատուական, եւ ալբեր սա անմահութեան:

ՃԼԳ. — 1. — ծարուր, Ժ:

ՃԼԵ. — 1. — Ենովքայն, Ի:

2. — Կայինայն, Թ:

ՃԼԶ. — 2. — ունեւ, Երեւ, Ժ:

ՃԼԸ. — 2. — ... աւուր գալտեան, Խ: Կան, Խ:

ՃԼԹ. — 1. — զնոյն, զայն, Ժ:

ՃԼԱ. — 2. — որպէս զԱստուած է բար-

ձանց տեսող, և ի խոր խորոց ... Խ:

ՃԼԱԱ. — 1. — սա, զիր, ... պիտուա-

ՃԽԵ.

Յինն հարիւր եւ յերեսուն ամին Սղամայ ար մեռելութեան,
ի նոյն եւ ի տասն ամին, եւ Սէթայ եհաս վաղըման:

ՃԽԴ.

Հարիւր եւ իննըսուն ամաց էր ենովս ծընաւ ըզկայնան,
ենովսայ նովին թըւով ժամանեաց արըն մահրւան:

ՃԽԵ.

Կայնան զՄաղաղիէլ ծընաւ, նա զՅարէդ զհայրն ենովքեան,
Իսկ Յարէդ ծընաւ զԵնովք՝ պարզամիտ եւ աստուածազան:

ՃԽԶ.

Ենովք յՍղամայ լըւաւ, թէ մեղքն է պատճառ մահրւան,
ծընաւ ըզՄաթուսաղայ, սկիզբն արար ապաշխարութեան:

ՃԽԷ.

Ոչ միս եւ ոչ պըտուղ եկեր, բայց միայն ըզխոտ բուսական,
եւ չափ եղ ի գլուխն, ասէ՝ չեմ արժան երկնից տեսութեան:

ՃԽԸ.

Սա ասաց զօրն յարութեան, զսոսկալի առեան գալըստեան,
գայցէ Տէր բիւրուք զօրօք, բանակօքըն հրեշտակական:

ՃԽԹ.

Փոխեաց Տէր Աստուած ըզնա ի դըրախտն որ անմահական,
զի մի սպանանէ Ղամէք՝ չարագործ մարմնով սատանայն:

ՃԽԺ.

Յեաւթըն օր հանգեաւ Աստուած, սա եղեւ հանգիստ եւ աւթեման,
թէպէտ մեղքն յաղթեաց կենաց, սա բարեօք յաղթեաց մահրւան:

ՃԻ.

Եղիայ եւս ընդ նըմա՝ փոխանակ երկուցն որ ելան,
ի յամաւթ հերժուածողացն, որ անմահ մնալոյն չհաւատան:

ՃԻԱ.

Յետ փոխելոյն Ենովքա երկերիւր անծինք հաճեցան,
ի լեառն Ահերմոն ելան, ճըզնէին վասն անմահութեան:

ՃԻԲ.

Ի ծայր ճըզնութեան չելին, այլ իջին եւ աղտեղացան,
անկան ընդ դըստերս մարդկան, վավաշոտութեամբ շընացան:

ՃԻԳ.

Երկիր էր ապականեալ, եւ չըմնաց ոք ազնւական,
բսան այր ընդ մին կին շընայր, եւ չլինէր հեղեղ սերըման:

ՃԽԲ. — 2. — . . . եհաս ար վաղիս-
ճան, Ի:

ՃԽԴ. — 1. — Ենովքայն, ԹԻԽ:

2. — աստուածածան, ԶԽ:

ՃԽԶ. — 2. — և չափ ի գլուխն եղիր,
չեմ արժան երկնից տեսութեան, ԹԻԶ:

կապիճ ի գլուխն եղիր ասէ . . . Խ:

ՃԽԸ. — 1. — . . . անմահութեան, Ժ:

ՃԻԲ. — 2. — շընացան, ԺԽ. շըրջե-
ցան, ԸԶ:

ՃԻԳ. — 2. — և լինէր, ԶԹԻԶ:

ՃԾԴ.

Այլ ծնանէր բարձրը հասակ, հերձույր մայրն ի յօր ծընընդեան,
լինէին հրակայք ստուարք, քառասուն կանկուն ի երկայն:

ՃԾԵ.

Դիւաշունչը աստուածամարտք, մարդակերք անճոռնի գազան,
չըմնաց սուրբ եւ ոչ արդար, բայց միայն Նոյ ազնււական:

ՃԾԶ.

Մաթուսաղայ պարզամիտ էր անինչք եւ անքնակարան,
սա է որ զԴամէք ծընաւ, Դամէք զՆոյ զթագն արքունական:

ՃԾԷ.

Որ էր կատարեալ արդար, քան զնախնի իւր ազգն ամենայն,
չինգ հարիւր ամօք եւ սա նրգնագգեաց մընայր կուսութեամբ:

ՃԾԸ.

Ի լերինս եւ յանապատս, ի մարմնի վարք հրեշտակական,
հաճոյ եղեւ Աստուծոյ, քան զքօլոր որդիս աղամեան:

ՃԾԹ.

Ընդ Նոյ խօսեցաւ Աստուած, եւ ասաց թէ գործեա տապան,
կին արա, որդի ստացիր, նոր երկրի պատճառ ծընընդեան:

ՃԿ.

Ծընաւ Նոյ երիս որդիս՝ զՍեմ, ըզՔամ, զԱբեղ սիրական,
առին եւ նոքա կանայս, բայց եւ Քամ յազգէն Կայենեան:

ՃԿԱ.

Այնպէս բարեգործ էր Նոյ, զի զհարիւր ամն իսկ ի լըման,
երեք ուսոր միայն ծընաւ, զի գարշէր ի խառնակութեան:

ՃԿԲ.

Երեք հարիւր կանգուն երկայն, յիսուն լայն գործեաց նա տապան,
եւ երեսուն բարձրութիւն, փայտ անփուտ խորշ հաստատական:

ՃԿԳ.

Հընչէր ի գործոյն հիւսանցն, յամենայն ականջ մեծածայն,
թէ պատրաստ լերուք մարդիկք, ջրհեղեղ հասեալ կան եւ գան:

ՃԿԴ.

Ասէ Տէր Աստուած ընդ Նոյ, ցնախահայրն իմ ազնւական,
մուտ դու եւ որդիքըն քո, եւ կին քո, հարսունքդ ամենայն:

ՃԿԵ.

Մըտեալ ի տապանն ամբողջ, սըրբութեան է այս հրբաման,
յիւանելն այսպէս չասաց, այր ընդ կին խառն կոչեցան:

ՃԾԴ. — 2. — ի երկայն, և. երկայն,
Ի. երկըայն, Յ:

ՃԾԵ. — 1. — մարդակերպք. ԹԺ:

2. — Նոյ աստուածազան, Ժ:

ՃԾԶ. — 2. — ... արքայական, ԺԱ:

ՃԾԷ. — 1. — Որ եր, Նոյ է, Ժ:

ՃԾԸ. — 2. — Կայինայն, ԶԺ:

ՃԿԲ. — 1. — նա, Նոյ, Ժ. նա տապան,
զտապան, և:

ՃԿԳ. — 2. — մարդիկք, ասէր, Զ:

ՃԿԴ. — 2. — որդիքըն, ԶԺԱ որդիքըդ,
ԻԹԻ. եղբարքըն, Ը:

ՃԿԵ. — 1. — Մըտեալ, Ֆաւ, Ժ:

2. — այլ ընդ, ԶԻՑ. ընդ, և, Թ:

ՃԿԶ.

Յանասնոց սրբոց եօթն, և ի թրուհնոցն նոյն թրական,
ընդ քեզ ի տապանն առցես, յանսրբոցն երկուս բաւական:

ՃԿԷ.

Ջանսուրբսն սակաւ ասաց, զի Տէր է յառաջ գիտական,
զի մի զսուրբան նեղեցես, մի նենգող լիցին մարդրկան:

ՃԿԸ.

Յորժամ կատարեալ եղեւ տապանին շինուածքն ամենայն,
նաւթիւ եւ կրպրածիթով արտաքս եւ ներքսն ծեփեցան:

ՃԿԹ.

Դուռն ի կողմանէ թողեալ, դիւրամուտ սեռից զգայական,
ընդ մարդոյն ի միջնատունն, կերակուր եւ պէտք զանազան:

ՃԿ.

Վերնատուն եւ միջնատուն, ներքնատուն, յոյժ խորհրդական,
վերնատունն երկնից նըման, անմարմնոց զօրաց բնակարան:

ՃԿԱ.

Միջնատունն եղեմ դրախտին, արդարոց դասուց կայարան,
ներքնատունն երկրիս նըման, ուր անսուրբք եւ սուրբք յօրանան:

ՃԿԲ.

Յետ այսր եւ ի տապանէն հոտ անոյշ խրնկոց բուրեցան,
էրէք դիմեցին առ նա, մարդիք չարք զայն ոչ իմացան:

ՃԿԳ.

Եղեւ զոր եւ Տէրն ասաց, եւ կատարեցաւ հրաման,
փակեաց Տէր Աստուած ըզդուռն արտաքոյ հնարիւք պընդական:

ՃԿԴ.

Հինգ հարիւր ամաց էր նոյ, յորժամ եւ հրաման ցասըման,
ի վեց հարիւրն ապա հեղեղն, եղ աւուրս ապաշխարութեան:

ՃԿՆ.

Բացան յորդ սահանք երկնից, յանդընդոց աղբւրք բրդխեցան,
վերին եւ ներքին ջրոյն յորդութիւնք յիրար միացան:

ՃԿԶ.

Բան ըզբարձր լերունքդ ի վեր հնգեւտասն կանգուն դիզեցան,
դրրախտըն միայն մընաց, որ չհաս ջուրն կորըստեան:

(20)

Ն. ԵՊՍ. ՆՈՒՎԱԿԱՆ

ՃԿԷ. — 2. լինիցին մարդկան, 28.

ՃԿԸ. — 2. — ... արտաքոյ ներքոյ ...

թիւ.

ՃԿԹ. — 1. — ... զգայութեան, Ժ.

ՃԿԱ. — 2. — ուր, Խ. որ, Ը.

ՃԿԲ. — 2. — Էրեֆ, անասունք. ...

չարք մարդիք ... Խ.

ՃԿԳ. — 1. — հրամանն ցասման, 2.

ցասման հրամանն, Ի.

ՃԿԴ. — 2. — ... խառնեցան, Խ.

ՃԿԵ. — 1. — ըզբարձր լերունքդ, 28.

զբարձր լերինս, Խ. զվերինս բարձանց, Ը.

դիզեցան, Ի.

ՄԵՐ ԹԵՄԵՐԷՆ

ՀԱՄԱՅՈՅՑ ՊԱՏԿԵՐ ԻՐԱՓԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Այսօր Իրաքի մէջ կը գտնուին զանազան ազգերու պատկանող գաղութներ, որոնք ի հնուց անտի տարրեր կլիմաներէ հոն եկած ու հաստատուած են:

Այս գաղութներէն մին կը կազմէ նաև հայ գաղութը. որ ունի իր ետին հիւսուած մօտաւորապէս չորս հարիւր տարուայ շահեկան պատմութիւն մը:

Ետտ ժամանակներէ ի վեր հայեր առևտրական կապեր հաստատած էին Միջագետքի հետ: Անոնք կուգային Հայաստանէն մինչև Իրաք լաստերով, Եփրատ ու Տիգրիս գետերու վրայէն ու նաև ցամաքային ուղիով, ներածելով յատուկ փարջերով անոյշ ու պտտուական հայկական գինի, ցորեն, ընկոյզ տախտակ, ձիեր, և այլն: Այս ճշմարտութիւնը կը հաստատէ նաև Հերոդոտոս՝ հելլեն պատմահայրը:

Իսկ 1605ին, Շահ Աբբաս երբ բերաւ որ հայեր Արաքսի հովիտէն քերու ու տեղաւորեց զանոնք Նոր Զուղայի մէջ, աւանցմէ ումաք սեղական սեղմ պարագաներու հետ չկրնալով հաշտուիլ, կամաց կամաց տարածուեցան մինչև Պաղատա, Պասրա, Պարսից ծոց, և նոյնիսկ Հնդկաստան և այլուր:

Այսու հանդերձ, հայեր Միջագետքի մէջ գաղութ մը չէին կազմեր պարզապէս անոր համար որ անոնք կ'ապրէին ցրիւ և փոքրաթիւ էին դեռ: Իրաքի մէջ Հայերու մնայուն գաղութ մը հաստատուելու ճշգրիտ թուականը 1639էն կը սկսի, երբ Սուլթան Մուրատ կը գրաւէ Պաղատաք, հինաւորց խալիֆաներու մայրաքաղաքը, և քաղաքակրթութեան ու մշակութիւն տարուշանը, 1638 Գեկտ. 25ին, և կ'արտօնէ իր հրետանիի հրամանատարներէն հայազգի Գօգ Նազարին որ հայեր գան ու հաստատուին Միջագետքի մէջ և երկու հողաբաժիններ ալ կը շնորհէ, մին եկեղեցի մը կանգնեցնելու և մյուսն ալ որպէս գերեզմանոց գործածուելու համար, առ ի վարձատրութիւն

անոր մատուցած ծառայութիւններուն, երբ ան մեծղի թնդանօթ մը կը շինէ՝ որուն արձակած գնդակներուն շնորհիւ Պաղատաքի ամրաշէն պատերը փուլ կուգան, և որ կը փութացնէ քաղաքին առուամը: Այս պատմութիւնը աւանդականօրէն անցած է մեզ, մեր Իրաքեան հայ պապերէն իբր խիստ արժէքաւոր պատմական իրողութիւն մը:

Արդարև, շատ չանցած, հայեր մուտք կը գործեն Իրաք Թուրքիայէն, Իրանէն և փոքր մաս մըն ալ Հայաստանէն, և ժամանակի ընթացքին կը հաստատուին Պաղատա, Պասրա, Մուսուլ և ուրիշ շրջաններ: Այս երեք երկիրներէն հասած հայութիւնը միախառնուելով կը կազմէ մի զանգուած, ուրկէ հուսկ կը ծնի Պաղատահայ և Պասրահայ ուրոյն տոհմիկ բարբառը:

Միաժամանակ պէտք է նշել որ ներգաղթող այս հայութեան մէջ կային արհեստաւորներ, ինչպէս ոսկերիչ, թրագործ, կայծքարագործ, դերձակ, հացագործ, երկաթագործ, և այլն, որոնք հեղհետէ առաջնակարգ տեղ գրուեցին հրապարակի վրայ և նոյնիսկ մրցակից դարձան ուրիշներու հետ: Իսկ որոշ հայեր ալ կը զբաղէին սեղանաւորութեամբ, վաճառականութեամբ և հողային գործերով, և որոնք ժամանակի ընթացքին դարձան անշարժ կալուածներու տէր:

Պաղատաքի մէջ, 1639էն ետքը, հայեր իրենց համար կառուցին եկեղեցի մը՝ Ս. Աստուածածին անուամբ: Սակայն այս եկեղեցին փոքր ու հայութեան մեծագոյն մասէն հեռու ըլլալուն պատճառաւ, 1852ի վերջերը ուրիշ եկեղեցի մը կառուցին Ծորճէ հողաբաժին վրայ, Պոլսեցի Մեսրոպ Ծ. Վարդապետի քրտնաթոր ջանքերուն շնորհիւ, Ս. Երրորդութիւն անունով: Այսօր այս սրբավայրը անգործածելի ըլլալուն պատճառաւ, հոգեւոր պաշտամունք չի մատուցուիր հոն: Իսկ այժմ անդ կայ նորաւերտ հայկապ եկեղեցի մը, Ս. Գրիգոր

Լուսաւորիչ անունով, որուն հիմարկէքը կատարուեցաւ մեծ հանդիսութեամբ 1954ին:

Ս. Աստուածածին եկեղեցին շատ հին աղօթատուն մըն է: Ան կը պարունակէ Քառասուն Մանկանց ոսկերտիք-մասունքէն պտղունց մը, որուն ուխտի կուգան քրիստոնեայ և այլ դաւանանքի ուխտաւորներ, առանց կրօնքի խարութեան, իրենց խնդրանքին համար: Այս սրբավայրը այժմ ճանչցուած է զօրաւոր ցանկատու հրաշափայլ մը որպէս, որուն խնդրարկուներ կը բերեն ձէթ, մոմ, խունկ, եալլն, իրր ընծայ: Երբեմն ոչխարներ ալ կը մօրթին իրր մատաղ, եկեղեցիի գաւիթին մէջ:

* *

Իգական սեռը 1901ին Պաղտատի մէջ ունեցաւ իր սեփական վարժարանը՝ Զապէլեան մակդիրով: Այսօր համայն հայ վարժարանները Իրաքի մէջ երկուսն են:

Պաղտատի Ս. Թարգմանչաց վարժարանը իր փայլուն չրջանը ունեցաւ Պոլսեցի Պր. Միհրան Զ. Սվաճեանի օրով, 1876էն սկսեալ, երբ անոր տնօրէնը կարգուեցաւ ինք: Ան հաստատեց Պաղտատի մէջ 1890ին Փուլնջ անունով շարաթաթերթ մը և 1885ին ալ Ս. Երրորդութեան եկեղեցւոյ գաւիթին մէկ կողմը ակումբ մը Ասքանազեան ընկերութիւն անուամբ: Իսկ այսօր Պաղտատի մէջ կան երեք հայ վարժարաններ, ինչպէս նաև ընտիր նորաշէն ակումբ մը և գերեզմաննոց մը:

* *

Նախ քան Առաջին Աշխարհամարտը, Պաղտատի հայ բնակչութիւնը կը յանգէր մօտ 700-800 անձերու: Իսկ այսօր Պաղտատի մէջ կ'ապրին շուրջ 8000 հայեր, ամէնքն ալ բարեկեցիկ վիճակի մէջ:

Ասկէ մօտաւորապէս երեք-չորս դար առաջ սոսկալի ժանտախտ և հնդկախտ (cholera) կը պատահին Միջագետքի մէջ, որոնք օւրիշներու կարգին, կը հնձնեն նաև շատ մը հայերու կեանքը, որոնց հետ կը կորսուին հայ համայնքին մեծագոյն մասը և իրենց հարստութիւնը:

Հին ատեններուն, Պատրա կը կազմէր առեւտուրի կարևոր մէկ կայանը արեւելքի և արեւմուտքի միջև: Ժամանակ պատահե-

ցաւ որ այստեղի հայութիւնը այնքան բազմացաւ որ հասաւ մօտ 3000-4000 անձերու: Հայեր երեք եկեղեցիներ կառուցին իրենց պաշտամունքին համար, ինչպէս նաև երեք վարժարաններ: Այսօր կայ միայն Ս. Աստուածածին եկեղեցին՝ շինուած 1736ին ողբացեալ Աղա Պետրոս Սեթաղագեանի նուիրատուութեամբ, և գերեզմանատուն մը, շինուած վերջերս, զոր նուիրած է Իրաքահայ գաղութին յայտնի բարերար Պր. Սիմոն Մ. Ղարիպեան:

Առեւտուրի չուկան, մանաւանդ մարգարիտի վաճառականութիւնը, Պատրայի մէջ հայոց ձեռքը կը գտնուէր: Հայեր իրենց առեւտրական կապը հաստատած էին մինչև Հնդկաստան գտնուող հայ վաճառականներու հետ և անոնց հետ նաւերու բաժնեւէր էին: Այդ նաւերը, ի միջի այլոց, կը յորջորջուէին Սանքա Քրուզ, Սանքա-Քրուզ, Արեակ, Հօփուէլ, եալլն, որոնք կը խաւրսէին Ծաթթիւլ Արապի մէջ, Պատրա Առաջին աշխարհային զուպարէն առաջ, Պատրայի հայ գաղութը ունէր 120 անձեր: Իսկ այսօր հոն կան մօտ 2000 հայեր, երկու վարժարաններ և ակումբ մը:

Մուսուլի մէջ հայութիւնը շատեց հաստատուած է: առաջին եկողները մեծ մասամբ Սղերդցիներ եղած են: Աւելին իրենց եկեղեցին՝ Ս. Էջմիածին անուամբ, կառուցուած 1857ին, որուն շինութիւնը կը պարտին կրկին Մեսրոպ Մ. Վրդ. ի թափած անխնայ ջանքերուն: Կայ ազգային վարժարան մը, ակումբ մը, եալլն: Առաջին աշխարհամարտի նախօրեակին, Մուսուլ կը պարփակէր 30 տուն հայ, մինչ այսօր հոն կը գտնուին 2000 հայեր:

Ժամանակին, հայը Քերքուքի մէջ մատով կը ցուցուէր: Այժմ հոն կայ հայ համայնք մը, գրեթէ 2000 համրանքով: Հայութեան մեծագոյն մասը կ'աշխատի նաւթային ընկերութեան մէջ, Ունին Ս. Աստուածածին անուն եկեղեցի մը, վարժարան մը և գերեզմանատուն մը:

Իրաքի հայութեան այս անհամեմատելի արագ աճումին անմիջական բուն պատճառն է 1915ի Մեծ Եղեռնը, երբ աւելի քան 20.000 հայեր կը մահնէն Իրաք և Անգլիական կառավարութիւնը կը տրամադրէ աւելցնել յատուկ վրաններ Պաղտատայի մէջ և կը հոգայ իրենց կարիքը: Ծառ չանցած:

1920ին, Անգլիացիք կը փոխադրեն Վրանա-
տունը Պաղուպայէն Նահր էլ Օմար, որ
Պարսպէն 17 քիլոմէթր հեռավորութեան
վրայ կը գտնուի:

1921ին, Անգլիացիք աւելի քան 7500
հայեր կը փոխադրեն Հայաստան երեք չո-
ղենաւերով: Իսկ 1200 երկսեռ որբերէն
մաս մը կը զրկուի եղբայրացու և մաս մըն ալ
երուսաղէմ: Հայաւանի հոգատարութիւնը
Անգլիացիք կը յանձնեն Պր. Լեոն Շաղոյ-
եանի: 1921-1923 թուականներուն, հայե-
րէն 500 հոգի կը թողնեն Նահր էլ Օմարը
և կ'անցնին Ապատան, նախապէս կատար-
ուած կարգադրութեամբ նախագատարանին
մէջ գործի մտնելով: Իսկ 1921ին, 1200
Պարսկահայեր ալ կը մեկնին Պարսկաստան:
Ուսանալ ալ Պարսա քաղաքը կուգան ու կը
հաստատուին: 1929ին, Պր. Շաղոյեան կը
փոխադրէ հայ հիւղաւանը Հաւրէլ, հիւսի-
սային Իրաք, 49 միլիոն հեռու Մուսուլէն:
1947ի վերջերը, 900 հայեր մեկնեցան Իրա-
քէն դէպի Հայաստան:

Իրաքի սուրիշ շրջաններուն մէջ ալ,
ինչպէս Զախո, Արւիէյմանիյէ, Էմանագին,
Խալէն, կ'ապրին հայեր: Այսօր բազմազան
Իրաքի մէջ կան շուրջ 16.000 հայեր, որոնց
մէջ կը գտնուին յայտնի մտնապաշտներ,
մեծահարուստ հոյաւաւեր, կառավարական
բարձր պաշտօնեաներ, բժիշկներ, ակնա-
բույժներ, տաաճարայիններ, գեղագործներ,
ծարտարաղէաներ, մեքենաղէաներ, փա-
տարաններ, ելեկարագէտներ, նշանաւոր
լուսանկարիչներ, սովորիչներ, և շատ մը
սուրիշ կարգի արհեստագործներ:

Իրաքի հայոց ընդհանուր վիճակը բա-
րեկեցիկ է և օրինակելի:

Իսկ ներկայ հայ եկեղեցական Պետն ու
համայնքին Առաջնորդն է Գեր. Տ. Զոսն
Ծ Վրդ. Տէր Բակրեան, որուն տուած
քարոզները ողնորիշ և շինիչ են:

Պատում

ՎԻՐԱԿԱՆ ՄԵԼԻՔԻԱՆԸ



ՎԻՐԱԿԱՆ ՄԵԼԻՔԻԱՆԸ

«ՄԻՋՆԱԲԵՐԴ»

(Վրական Տարեգիրք)

Ա. Տարի, 1957 — Խմբագիր՝ ՊՈՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

Աւելի քան սրտապնդիչ երևոյթ մըն է
սփիւռ քահայ մշակութային կեանքին մէջ
հրատարակութիւնը այս Վրական Տարեգիր-
քին, որ լիովին գոհացում կուտայ հայ
զրահանութեամբ հետաքրքրուող ունէ մէ-
կուն:

Որակով ու քանակով այսպիսի պատ-
կանելի հրատարակութիւն մը կը հաւատանք
թէ գինն է մեծ ու երկարատե ճիշդութեւ
զոհողութիւններու, զոր գովելի ջանաւոր-
ութեամբ ու հանրութեան օգտակար գործ
մը ըրած ըլլալու գիտակցութեամբ կատա-
րած է Պ. Մնայեան:

Գիրքը, 330 էջերէ բաղկացած, լոյս
տեսած է Պէյրութի մէջ, և իր զրահան
հարցերու շուրջ յարուցած նիւթերու
աշխատանքութեամբ ու բաղմաղանութեամբ
խոստում մըն է, յառաջիկայ իր թիւերով
դառնալու համար սփիւռ քահայութեան բո-
լոր գանգաւածներէն փնտռուած եզական
հրատարակութիւն մը:

Ուշադրութեւ Եւրոպայի մէջ հեղի-
նակին ըրած յայտարարութիւնը սոյն հրա-
տարակութեան մասին. «ՄԻՋՆԱԲԵՐԴ» կը հրա-
տարակենք ոչ թէ բաց մը օրացելու համար,
այլ հեղահան գոցուող դուռ մը (Վրակա-
նութիւնը) չափով մը բաց ձգելու մտքով:

Գիրքին առաջին մասը խմբագիրը յատ-
կացուցած է իր ուսուցչին՝ մեծանուն գրա-
ղէա- քննադատ Յ. Սչականի պայծառ յի-
շատակին՝ անոր մահուան տասնամեակին
առթիւ: Հոն կ'երևին հանգուցեալ գրագէ-
տին գրչէն տարրեր՝ ժամանակներու մէջ
եղած յօդուածներէն նմոշներ՝ հայ գրակա-
նութեան զգաւոր հարցերը շօշափող: Պ.
Մնայեան անհուն երախտագիտութեամբ
կ'օգտուէ յիշատակը իր ուսուցչին, որուն
հանդէպ պաշտամունքի մօտեցող սէր մը
կը առնէ:

Հետաքրքրական և միանգամայն չա-
հեկան է մանուկան Տարեգիրքի այն բաժինը՝
ուր խմբագրին կողմէ ներկայացուած հար-

ցարանի մը համաձայն, արտասահմանեան մեր գրողներու գրիմէ բոլոր առաջաւոր գէմքերը յայտնած են իրենց հեղինակութիւնը, ներկայիս հայ գրականութիւնն ու հայ գրողը շահագրգռող աւագ հարցերուն նկատմամբ, և որոնք կը կարգացունին մեծ հետաքրքրութեամբ ու հաճոյքով:

Պ. Մնացեալն այս Տարեգրքին մէկ ուրիշ առաւելութիւնը այն է որ հոն տեղ տրուած է սփիւռքահայ բոլոր արժէք ներկայացնող գրողներուն, առանց հատուածական կամ այլ խտրութիւններու:

Գովելի և օրինակելի է այս անհշուժեամբ ողջամիտ կեցումովը յարգելի խմբագրին, որ ունենալով հանդերձ իր սեփական համոզումները, գիտցած է մէկզկէ միմեկին իր գաղափարական ու հաստատական միտումները, և անաչառ ու անկողմնակալ ոգիով մօտենալ հայ գրականութեան: Այս կ'ըսենք ի տես շատ մը խմբագիրներու և գրագէտներու կողմէ յայտնուած ու հետքհետէ անտաւոր համեմատութիւններու հասնող նեղմիտ ու միակողմանի կեցումովին ու դատողութեան, իրենցմէ ու իրենց պատկանած հաստատմէն դուրս ամէն արժէք ուրանալու կամ թերզնահատելու տրտում երևոյթին: Պ. Մնացեալն լայնախոհ ոգիով ու իրաւացիօրէն կ'անգրադառնայ այս երևոյթին իր Տարեգրքին մէջ, ուր Կարօ Գէորգեանի 1957ի Աշխատանքային շուրջուած իր գրախօսականին մէջ ի միջի ալոց կ'ընէ հետեւեալ հաստատումը. «Պէտք է թոյլ տալ որ բնական դառնան անոնք (կ'աւանարկէ կուսակցական նեղմիտ հաշիւներուն գրականութենէն ներս) նաև մեր մօտ»:

Հայ մամուլը ինչպէս հայ գրականութիւնը օրագրան առաքելութիւն մը ունի և պէտք է գայն պահել իր կոչման արժանավայել բարձրութեան վրայ, իմրակցական վէճերն ու հակակրօթիւնները պէտք է որ անգրադառնան անոր վրայ, աւերիչ միջամտութիւններ գործելով ու շեղեցնելով գայն իր իսկական ու վեհ նպատակէն:

Այս տրտում երևոյթին քովն ի վեր սակայն մեծ ուրախութիւն է մեզ հաստա-

տել որ կան տակաւին հեղինակներ՝ որոնք արի ու ազնիւ կեցումով կը պարզեն հայ մամուլին հանդէպ, իրենց անկողմնակալ մերձեցումներով: Պ. Մնացեալն մէկն է այս վերջիններէն:

Հասարակ ունի Հայաստանեան արգի գրականութեան նուիրուած ընդարձակ բաժին մը, ճոխ ու ալլաղան բովանդակութեամբ, ուր տեղ ունին մեր հայրենիքին մէջ ապրող ու ստեղծագործող տկանաւոր ինչպէս նորահաս գրագէտներէն արձակ կամ ստանաւոր գրութիւններ:

Գալով սփիւռքահայ գրականութեան յատկացուած բաժինին, պէտք է ըսել որ հոն իրենց անտալ գրութիւններով կ'երևին հին թէ նոր սերունդին գրողներուն գրիմէ բոլոր կարեւոր գէմքերը: Հոն կարելի է հանգիստիլ նաև մէկ քանի նորերու ստորագրութիւններուն. նորեր՝ որոնք անմասն չեն սակայն գրական զգայարանքէն: Այստեղ ենք որ եմք կան մտոցուած գէմքեր ու անուններ, պատասխանատուն խմբագիրը է անպայման:

Ու չգրաւ է նմանապէս հատորին վերջաւորութեան տեղ բռնող գրախօսականներու շարքը, որոնց մէկ կարեւոր մասին տակ կը հանգիստիլ խմբագիրին ստորագրութեան: Հոն գրախօսուած են 1956ի ընթացքին սփիւռքի գանադան շրջաններէն լոյս տեսած գրիմէ բոլոր կարեւոր գրական երկերը, անկողմնակալ ոգիով ու հեղինակաւոր կերպով: Գրքին այս բաժինը յատակ գաղափար մը կուտայ մեզի սփիւռքահայ գրողներու նոր արտագրութիւններու մասին:

Մէկ խօսքով. Մէջ-Քէրէ Գրական Տարեգրքը արժանի է մեր ամենուն անվերապահ գնահատանքին ու քաջալերութեան: Կը յուսանք որ յառաջիկայ տարիներուն իր լոյս տեսնելիք հատորներուն մէջ ևս հաստատենք նոյն արժանիքներն ու մեր գրական աշխարհը շահագրգռող հարցերն ու տուեալները: Կը մտովինք մանաւանդ որ ան դառնայ սեփականութիւնը իր լեզուին պահպանման ու իր գրականութեան ծաղկման նախանձախնդիր ամէն սրտոցու հայր-գիր:

ԳԵՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ

ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏՕՔԹ. ԺՕԶԷ ԱԶՐԷՏՕ ԲԵՐՏԻԿԱՏՕ ԿԸ ՍՏԱՆԱՅ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԶԻ
Ա. ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ՝
Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԷ

Ն. Ս. Օծուծիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Դեկտ. 2, 1957 թ. սրբատառ Կոնդակով, Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա. կարգի շքանշան շնորհեց Տօքթ. Ժ. Ա. Բերտիկասոյի, որ Նախագահն է Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան:

Շքանշանը Դեկտ. 20ի երեկոյեան ժամը 6ին Տիար Նախագահին յանձնուեցաւ ձեռամբ Գեր. Տ. Բաբգէն Նպս. Վարժապետեանի, որ Վեհ. Հայրապետի կողմէ Լիազօր Պատուիրակ կարգուած էր Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան մօտ: Վեհ. Հայրապետի Օրհնութեան Կոնդակը հանդիսաւորապէս եւ յոտնկայս կարդացուեցաւ Պատուիրակ Սըրբազանին կողմէ, ի ներկայութեան Հիմնարկի անդամ Տիար Գէորգ Լ. Նսայեանի, Տիար Ռօպէր Կիւլպէնկեանի եւ Հիմնարկի Հայկ. Բաժնի Ընդհ. Տնօրէն եւ Քարտուղար Տիար Կորիւն Քէշիշեանի:



Զախէն աջ՝ Տեառն Կ. Քէշիշեան, Գ. Նսայեան, Գեր. Տ. Բաբգէն Նպս. Վարժապետեան, Տօքթ. Ժ. Ա. Բերտիկաս եւ Ռ. Կիւլպէնկեան:

Տիար Նախագահը զգացուած բառերով իր խորին շնորհակալութիւնը յայտնեց Ն. Ս. Օծուծիւն Վեհափառ Հայրապետին շնորհած այս մեծ պատիւին համար. ան շեշտեց թէ այս մեծ պատիւը կ'երթայ առաւել չափով Հանգուցեալ Մեծ Բարերարին, ինչպէս նաեւ Հիմնարկի միւս անդամներուն, եւ ի մասնաւորի, աւելցուց Տիար Նախագահը, սոյն պատուոյն արժանի է Տիար Գէորգ Նսայեան, որուն կը պարտինք մեր յաջողութիւնը:

Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահը Դեկտ. 21ին պատուոյ ճաշկերոյթ մը տուաւ Գեր. Տ. Բաբգէն Սրբազանի, մաղթելով բարի ճանապարհ եւ յաջողութիւն: Յանուն Վեհ. Հայրապետի, Մայր Աթոռին եւ մեր զոյգ Պատրիարքական Աթոռներուն, Դալիֆօրնիոյ նորընտիր Առաջնորդ՝ Տ. Բաբգէն Նպս., շնորհակալութիւն յայտնեց Հիմնարկի Վարչութեան, իրենց հայանպաստ եւ եկեղեցասէր գործին համար: Գ. Կ. Հիմնարկի Վարչութիւնը երկու նիստերու ընթացքին բննեց հայանպաստ գործի ընդհ. ծրագիրը: Այս խորհրդակցութիւնները անցան շատ սիրալիր եւ համախորհուրդ մթնոլորտի մէջ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Աթոռոյս Ընտրեալ Պատրիարքին եւ Միաբանական Ուխտին դէմ Տէրութեան Եպս.ի բացած դատերը անցեալ տարուան դեկտ. 4ին ինչպստ Պատրիարքարանիս վերջանալէ յետոյ՝ կը սպասուէր պատրիարքական ընտրութեան արքայական հաստատումին։

Սակայն այս արդար ակնկալութեան փոխարէն՝ Միաբանութիւնը, Յորդանանի հայ համայնքը եւ Սփիւռքի մէջ մեր եկեղեցական սրբութեանց նուիրեալ հայ ժողովուրդը իրենք զիրենք գտան ընդգծեցուցիչ անարդարութեան մը դիմաց։

Իմացուած էր արդէն՝ թէ չարեաց արմատ Տէրութեան Եպս. եւ իր անբաժան արբանեակը, նոյնքան՝ չարագործ Շահէ Վրդ. Աճէմեան, Պէյրութի իրենց դաւակնցումներուն հետ նոր ծրագիրներ մշակելէ ետք, Ամման վերադարձած եւ լծուած էին խլրդային գործունէութեան...

Եւ յունուար 30ի առաւօտեան ժամը 9ին Սրբազան Պատրիարքը հրաւիրուեցաւ քաղաքիս Կառավարչատունը՝ երուտղէմի շրջանին Ընդհ. Կառավարիչին կողմէ։ Բայց Սրբազան Հայրը հիւանդ եւ յանկոյտի լինելով՝ Կառավարչատուն զացին Պատրիարքական Փոխանորդ Տ. Սուրէն Եպիսկոպոս, Տ. Կիրեղ Վարդապետ, եւ փոքր խումբ մը քաղաքիս երեսելի տղգայիկներէն։ Ընդհանուր Կառավարիչը Սուրէն Սրբազանին յանձնեց վերջնոյս ուղղեալ նամակ մը, որով կը հաղորդէր թէ, համաձայն Ներքին Գործոց Նախարարութեան կողմէ տրուած հրահանգին, Տիրան Արքեպիսկոպոս պէտք էր հեռանար երկրէն, իր Ամերիկեան քաղաքացի ըլլալուն պատճառաւ, եւ հետեւաբար նոյն օրն իսկ, յետ միջօրէի, պէտք էր մեկնէր Լիբանան։ Նամակին մէջ վտարման իրրեւ սկզբնական պատճառ կը ցուցուէր այն՝ թէ Տիրան Արքեպիսկոպոսի պատրիարք ընտրութիւնը Վեհափառ Թագաւորը չէր ճանչցած։ Նամակը կը պարունակէր սակայն շատ մը շփոթութիւններ եւ անորոշութիւններ, որոնց մանրամասնութեանց մտնելու հարկ չենք տեսներ այստեղ։ Սուրէն Սրբազան Ընդհ. Կառավարիչին ուշադրութեան յանձնեց այն՝ թէ տրուած հրահանգով կ'անտեսուէին Պատրիարքարանի Սահմանադրութեան տրամադրութիւնները, Ս. Աթոռոյս դարաւոր կարգ մը իրաւունքները եւ ինչ ինչ կարեւոր իրողութիւններ։ Հետեւաբար Սուրէն Սրբազան եւ իրեն ընկերացողները բուռն կերպով բողոքեցին հրահանգին անարդարութեան դէմ։ Ընդհանուր Կառավարիչը պնդեց որ ինք պարտաւոր էր գործադրել տրուած հրահանգը եւ Տիրան Արքեպիսկոպոս պէտք էր որ մեկնէր նոյն օրը յետ միջօրէի ժամը երեքուկէսէն առաջ։

Երկու ժամ Կառավարչատուն մնալէ ետք՝ Սուրէն Սրբազան եւ իրեն ընկերացողները քրտաբեկ վերադարձան Վանք՝ ժամը 11.30ին։ Մինչ այդ՝ Միաբանութիւնն ու Երուսաղէմի հայ ժողովուրդը իմացած էին շանթահարիչ լուրը եւ լեցուած՝ խիստ դառնութեամբ։ Գոցուեցան հայոց խանութները քաղաքին մէջ։ Պարպուեցաւ ազգային վարժարանը։ Ժողովուրդը ինքնակամ եւ միահամուռ վազեց եւ հաւաքուեցաւ Վանքին մէջ։ Բազմութիւնը խոնուեցաւ Ս. Յակոբեանց Տաճարի բակին եւ գաւիթին մէջ, ինչպէս եւ սանդուխներէն վեր՝ Պատրիարքարանի արտաքին ընդարձակ գաւիթին մէջ։ Վանքին աւագ դուռը գոցուեցաւ։ Ամէն ոք զգաց թէ Հայոց դարաւոր եւ պանծալի Ս. Աթոռն ու վանքը քստմնելի եւ անորակելի դաւաճանութեան մը գոհ կ'ըլլար եւ թէ այս դաւաճանութիւնը ի գլուխ հանելու համար առաջին եւ կարեւոր քայլն էր միայն որ կ'առնուէր՝ Տիրան Պատրիարքի վտարումով...

Բայց Աստուծոյ անհասանելի նախախնամութեան շնորհիւ եզնաժամային վայրկեանին դարձեալ տեղի ունեցաւ դէպքերու անակնկալ դարձումաժըր, ի դերեւ հանելու համար ներսէն եւ դուրսէն գործող հայանուն այլասերածներու կողմէ նիւթուած սաղաթակաւ դաւը։

Մարդասէր եւ ազնուական արար բժշկի մօտ կը գտնուէր, ժամը 12.30ին, դարձանումի համար, Նախարարաց Խորհուրդի կարեւոր մէկ անդամը: Բժիշկը նախարարին կը պարզէր Հայոց Պատրիարքարանի կացութիւնը: Եւ արդարակորով նախարարը, պատկան պաշտօնատանց հետ հեռաձայնական հաղորդակցութեան մտնելէ յետոյ՝ Ընդհանուր Կառավարիչին կը հրահանգէր կասեցնել վտարման հրամանին գործադրութիւնը: Եւ Կառավարիչը յետ միջօրէի ժամը 1ին Պատրիարքարան կը հաղորդէր բարի լուրը՝ բաների մը միջոցաւ:

Ուժգին փոթորիկէ մը վերջ շողացող արեգակին նման՝ այս աւետիսը զուարթացուց տագնապած հոգիները, որոնք միահամուռ փութացին դէպի Տաճար, եւ լեցնելով սրբավայրը եւ դուրսը գաւիթը, գոհութիւն մատուցին Աստուծոյ: Լուսարարապետ Տ. Շնորհք Սրբազան պաշտօնապէս հաղորդեց լուրը հաւաքուած բազմութեան: Նոյն ժամուն Կանք եկաւ Երուսաղէմի Բաղաքապետը, որ առաւօտուն պատահաբար ներկայ գտնուած էր Կառավարչատան մէջ տեղի ունեցած հանդիպումին եւ ականատես եւ ականջալուր եղած էր անցուդարձերուն: Բաղաքապետը ելնելով վեր, Սրբազան Պատրիարքի ննջարանը, Ընդհ. Կառավարիչին անունով անոր հաղորդեց վտարման հրամանին գործադրութեան կասեցումը ըլլալը: Ազնուասիրտ Բաղաքապետը ապա իջաւ ու մտաւ Ս. Յակոբեանց Տաճարը, տեսաւ արտասուալից անքնիւղ աղօթքի կեցած հաւատացեալներու բազմութիւնը եւ Լուսարարապետ Շնորհք Սրբազանի խօսքէն ետք՝ ինք եւս մի բանի անդորրական խօսքեր բսելէ յետոյ՝ մեկնեցաւ: Բայց ժողովուրդէն կարեւոր բազմութիւն մը այնուհանդերձ մի բանի օր յամեցաւ Վանքին մէջ, զիշեր եւ ցերեկ, հակառակ սաստիկ ցուրտին...



Ժողովուրդ եւ Միաբանութիւն աղօթքի պահուն:

Յաջորդ օրերուն, յունուար 31ին եւ փետրուար 1ին, Երուսաղէմի ազգայիններ երեք հարիւրի չափ հեռագիրներ ուղարկեցին Վեհափառ Թագաւորին, շնորհակալութիւն յայտնելով Նորին Վեհափառութեան՝ Տիրան Սրբազանի վտարման հրամանին գործադրութեան կասեցման կապակցութեամբ Կառավարութեան կողմէ ցոյց տրուած բարեացակամութեան համար:

Համաձայն Ընդհ. Կառավարիչին յունուար 30ի հինգշաբթի օրը կատարած կարգադրութեան՝ փետրուար 1ին Պատրիարքարանի կողմէ պատգամաւորութիւն մը, բաղկացած հոգեւորականներէ եւ աշխարհականներէ զնաց Ամմանի արքայական պալատը՝ խնդրագիր ներկայացնելու համար Վեհափառ Թագաւորին եւ հայցելու Նորին Վեհափառութեան միջամտութիւնը: Սակայն այդ օր եգիպտոսի եւ Սուրիոյ միացման օրն էր եւ հնարաւոր չիլաւ Վեհափառ Թագաւորին համար, բացառիկ եւ անակնկալ զբաղմանց պատճառաւ, կարգադրուած ունկնդրութիւնը շնորհել պատգամաւորութեան: Հետեւաբար ունկնդրութեան համար նոր թուական որոշուեցաւ փետրուար 4ը:

Փետրուար 2ին, կիրակի օր, Պատրիարքական Փոխանորդ Սուրէն Արքայան եւ Դիւանապետ Զաւէն Վարդապետ Ամման գացին եւ տեսան Արտաքին Գործոց Նախարարը եւ Ներքին Գործոց Նախարարը, որոնք յայտնեցին թէ մինչեւ Թագաւորին կողմէ խնդրին նկատառումը Պատրիարքը պիտի մնայ երուսաղէմ:

Որոշեալ օրը, փետրուար 4ին, դարձեալ հոգեւորական եւ աշխարհական եօթ անձերէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը, որուն մաս կը կազմէին Պատրիարքական Փոխանորդ Տ. Սուրէն Եպս., Լուսարարապետ Տ. Շնորհք Եպս., Տօթ. Վահան Գալպեան, Տեարք Մելքոն Պապիկեան, Նուպար Արսէնեան եւ Ամմանէն՝ Տեարք Յակոբ Պէրպէրեան եւ Սերօր Անթիքաճեան, ներկայացաւ Վեհափառ Թագաւորին:

Նորին Վեհափառութիւնը ազնուական եւ իմաստուն Վեհապետի մը վայել բարեացակամութեամբ ունկնդրեց պատգամաւորութեան կողմէ ներկայացուած խնդրագրին, որուն մէջ, ի մէջ այլոց, ըսուած էին հետեւեալները. —

«Ամմանէն առաջ Զերդ Վեհափառութեան կը յայտնենք մեր ամենախորին յարգանքը, մեր անվերապահ հաւատարմութիւնը, Զեզի բոլորանուէր ծառայելու մեր պատրաստակամութիւնը, իրեւ այս երկիրը սիրող եւ անոր յառաջդիմութեանը ցանկացող բաղաբացիներ, Յորդանանի Հայ Համայնքին կողմէ եւ երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Արքեպիսկոպոսի Սիաքանութեան անուանով, եւ կը խնդրենք որ վստահ ըլլաք այս մեր զգացումներուն անկեղծութեան եւ ճշմարտութեան: . . .

«Կը խնդրենք թէ մեր սիրելի Տեղապահին դէմ կարգ մը մեղադրանքներ ներկայացուած են Զեր Վեհափառութեան: Մենք կը հաստատենք թէ այս մեղադրանքները անհիմն եւ շինծու են, եւ Զեր Վեհափառութիւնը կը վստահացնենք թէ մեր Տեղապահը պատրաստ է եւ պիտի կարենայ անկասկածելիօրէն ապացուցանելու թէ այդ կարծեցեալ մեղադրանքները եւ մեղադրանքի թուղթերը կեղծ են եւ անհիմն եւ յերիւրուած են կա՛մ մեր Պատրիարքարանի հսկաւորողներուն կողմէ, եւ կամ այնպիսի անձերու կողմէ, որոնք հոգ չեն ընեն ճշմարտութիւնը ստուգելու եւ կը տարուին մեր երկրի շահներուն հետ կապ չունեցող նկատումներէ: Զեր Վեհափառութիւնը կը վստահացնենք նաեւ որ այս զրպարտութիւնները եւ կեղծ թուղթերը շինուած են միմիայն այն նպատակով՝ որ յառաջիկային մեր Պատրիարքարանը ենթարկուի Պէյրութի Պատրիարքարանին, բաղաբական այնպիսի նպատակներով՝ որոնց վստահ ենք, Զեր Վեհափառութիւնը համաձայն չէ: . . .

«Զերդ Վեհափառութիւն, մեր Պատրիարքութեան ուրիշ ոեւէ Եկեղեցական կեդրոնի մը կապուիլը եւ օտար կեդրոնի մը ենթարկուիլը հակառակ է Ս. Երկրի սրբավայրերուն եւ կրօնական հասարակութիւններուն Սթաթուքոյին: Սթաթուքոյի այսպիսի փոփոխումը անշուշտ կը տկարացնէ եւ կը պակսեցնէ Զեր Վեհափառութեան մեր Պատրիարքարանին վրայ ունեցած հովանաւորութեան ուժը: Միաժամանակ անիկա կը խանգարէ Պատրիարքարանի դարաւոր աւանդութիւնները եւ կը պակսեցնէ անոր ազատութիւնը եւ անոր գործին արդիւնաւորութիւնը թէ՛ Սուրբ Տեղերուն մէջ եւ թէ՛ Յորդանանի հայութեան, ինչպէ՛ս նաեւ ազատ աշխարհի հայութեան մէջ: Ասկէ զատ անիկա կը վտանգէ մեր Պատրիարքարանի տնտեսական ապահովութիւնը: Տակաւին՝ անիկա արգելք կ'ըլլայ առաւելագոյն թիւով հայ ուխտաւորներ տարուէ տարի երուսաղէմ բերելու մեր ջանքերուն: . . .»

Վեհափառ Թագաւորը ըսելէ վերջ թէ իր պալատի դռները բաց են իր բոլոր հպատակներուն առջեւ անխտիր, պատգամաւորութիւնը հաւաստեացուց թէ բարեացակամօրէն նկատի պիտի առնէ իրեն ներկայացուած խնդրանքը եւ փափաք յայտնեց կրկին տեսնել նոյն անձերը, աւելցնելով՝ «Այս անգամ ձեր պատրիարքին հետ միասին, մօտիկ ապագային մէջ»: Կէս ժամուան այս ունկնդրութենէն վերջ՝ պատգամաւորութիւնը յուսալից տրամադրութեամբ վերադարձաւ երուսաղէմ, ուր Վանքի մուտքին հաւաքուած մեծ բազմութիւնը ուրախութեամբ եւ մխիթարութեամբ լսեց Վեհափառ Թագաւորին բարեացակամ տրամադրութեան մասին:

Նշանակելի է նաև հետեւեալը, որ կը վերաբերի չարեացապարտ Տէրտէրեան եպս.ին: Փետրուար 6ին, Երուսաղէմի Ընդհ. Կառավարիչը իր մօտ կանչեց Պատրիարքական Փոխանորդ Տ. Սուրէն Եպիսկոպոսը եւ պաշտօնապէս հաղորդեց Սրբազանին՝ թէ Կառավարութիւնը ի սպառ արգիլած է Տէրտէրեան եպս.ի յետ այսորիկ Վանք մուտքը: Կառավարիչը յանձնարարեց որ այս յայտարարութիւնը հաղորդուի Միաբանութեան եւ հայ ժողովուրդին:

Հաւանաբար Կառավարութեան այս որոշումին ի հետեւան՝ փետրուար 11ին, Ընդհ. Կառավարիչին եւ Պատրիարքական Փոխանորդ Տ. Սուրէն Սրբազանի համաձայն կարգադրութեամբ՝ բացուեցաւ Ս. Աթոռոյս Լուսարարապետի պաշտօնատունը, որ կնքոյ ներքեւ փակ կը մնար Տէրտէրեան եպս.ի 1956 սեպտ. 19ին Սովետական Հայաստան մեկնելէն ի վեր: Յարկաբաժինը բացուեցաւ ի ներկայութեան Երուսաղէմի Փոխ-Կառավարիչին, Ընդհանուր Ոստիկանապետին, Դաղտնի Ոստիկանութեան պետին, եւ մի քանի այլ բաղաբային պաշտօնեաներու, ինչպէս նաև Պատրիարքական Փոխանորդ Սուրէն Սրբազանի, Աւագ Թարգման Վազգէն Աբեղայի, երկու ուրիշ վարդապետներու եւ Պատրիարքարանի դիւանադպիւրներու: Տէրտէրեան եպս.ի կողմէ ներկայ էր Հայրիկ եպս. Ասլանեան: Յիշեալ անձերու ներկայութեան ամբողջապէս ցուցակագրուեցան երկու օրուան ընթացքին Լուսարարապետարանի բոլոր գոյքերը: Պատրաստուած ցուցակները ստորագրուեցան ներկաներու կողմէ: Այժմ սենեակները փակուած կը մնան՝ մինչեւ որ կատարուին Տէրտէրեանի անձնական գոյից մասին հարկ եղած կարգադրութիւնները:

Երուսաղէմի եւ շրջակայից մօտ երեք հազար հոգիւնոց հայ համայնքը կը բաղկանայ երկու տարրերէ: Մին կը ներկայացնեն այն հայերը, թիւով մօտ հազար անձ, որոնք հաստատուած են Սուրբ Քաղաքին մէջ դարերէ ի վեր, եւ առհասարակ կը բնակին Վանքին շուրջ գտնուող վանքապատկան տուններու մէջ: Ասոնք կը կոչուին «քաղաքացիներ», որոշուելով «գաղթականներէն»՝ որոնք Առաջին Աշխարհամարտէն ի վեր հետգհետէ եկած եւ ապաստանած են Երուսաղէմի մէջ եւ մեծաւ մասամբ կը բնակին Վանքէն ներս գտնուող եւ ժամանակին ուխտաւորաց յատկացեալ սենեակներու մէջ: «Քաղաքացի» հայերը դարերէ ի վեր եղած են սրբավայրերու մէջ Միաբանութեան զօրավիճ՝ եւ պաշտամանց ներկայ եղող աշխարհական ժողովուրդը: Ասոնք իրենց մէջ կուսակցականներ գրեթէ չունին եւ կապուած են ամենէն աւելի Եկեղեցիին, որուն համար զօրաւոր նախանձախնդրութիւն ունին: Նոյն այդ նախանձախնդրութիւնը փետրուարի առաջին շաբթուն արտայայտեցին անոնք՝ աւելի քան հինգ հարիւր չափահաս անձերու ստորագրութիւններով հանրագրութիւն մը ներկայացնելով Վեհափառ Թագաւորին, խնդրելով Նորին Վեհափառութեան պաշտպանութիւնը՝ Երուսաղէմի մէջ Հայ Եկեղեցւոյ եւ ազգին իրաւանց վրայ:

Երուսաղէմի եւ Ամմանի ընդհանուր հայութեան կողմէ հանրագրութիւններ՝ արգարութեան եւ ճշմարտութեան ի խնդիր, 1956ի օգոստոս ամիսէն ի վեր քանիցս պատրաստուած եւ Կառավարութեան ներկայացուած էին արդէն:

Պէտք է յիշել այստեղ՝ թէ Երուսաղէմի իսլամ եւ քրիստոնեայ արաբ բնակչութիւնն ալ, որ գիտակ է Սուրբ Քաղաքին մէջ Հայոց Պատրիարքութեան եւ Վանքին կարեւոր դիրքին եւ հանգամանքին, շատ մօտէն եւ մեծ հետաքրքրութեամբ կը հետեւի Պատրիարքարանի անցուդարձերուն եւ համակրութեամբ լի է Միաբանութեան եւ հայ ժողովուրդին արդար դատին նկատմամբ: Շատ մը ականաւոր արաբ անձնաւորութիւններ իրենց բարի խօսքը չեն զլանար լսելի ընել ուր որ անկ է:

Այժմ կը սպասուի՝ որ մեր արդարադատ, կորովի եւ իմաստուն Վեհափառ Թագաւորը ինք նայի խնդրոյն եւ միանգամ ընդմիշտ վերջ տայ Ս. Աթոռը անդամալուծող անոր ներկայ տագնապին, ի դերեւ հանելով դաւադիր ջանքերը անոնց, որոնք իրենց հոգին սատանային ծախելէ ետք՝ կ'աշխատին մեր Սուրբ Եկեղեցին ալ մատնել չար ու ժերու աւերածութեան:

Դ.Ի.ԱՆ Ս. Ա.Թ.ՈՌՈՑ

ՆՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցեալ տարի ապրիլին, Լիբանանի թերթերէն մէկուն մէջ տեսանք յօդուածաշարքի մը առաջին մասը՝ ի մասին Եպիսկոպոսական Ժողովի օրինականութեան, զբոլում Ա. Խոնդկարեանի մը կողմէ։ Առաջին յօդուածին ընթերցումը չլրացուցած մէկ կողմ դրինք զայն՝ տեսնելով որ գրողը օտարական մըն էր նիւթին։ Կը մօտենար դրուած խնդրին «գաղափարաբանական» միակողմանի տեսակէտէ։ («Գաղափարաբանական» կը կոչուին այն փաստարկութիւնները որոնք հիմնուած են գաղափարներու դրութեան մը վրայ, որ մասնաւոր կերպով կազմուած կամ շինուած է ի յառաջագունէ դրուած դատմը կամ տեսակէտ մը կամ տուեալ իրողութիւն մը պաշտպանելու նպատակաւ։)

Ա. Խոնդկարեանի յօդուածաշարքը, ինչպէս առաջին յօդուածի ընթերցումէն յայտնի էր, գրուած էր Գաճիթէի Եպիսկոպոսական Ժողովը ապօրէն ցուցնելու դիտումով։ Այլ խօսքով՝ Պր. Խոնդկարեան կանխաւ որոշած էր որ յիշեալ Ժողովը ապօրէն պէտք է ցուցուէր, եւ ապա սկսած էր իր յօդուածը գրելու։ Յօդուածագիրը, պէտք է ընդունիլ, քաւական պրպտումները եւ տեղեկութիւնները քաղած էր իր նիւթին մասին։ Բայց որովհետեւ յայտնապէս անտեղեկ էր եկեղեցական կանոններու հիմնական սկզբունքներուն, որոնք անշուշտ քրիստոնէական աստուածաբանութեան եւ եկեղեցական պատմութեան ծանօթութիւն կ'ենթադրեն, ցուցադրած էր տգիտութիւն մը, որուն ի տես՝ մէկ կողմ դրինք յօդուածաշարքն ու յօդուածագիրը միանգամայն։ Յայտնի էր որ Ա. Խոնդկարեան, որուն եկեղեցագիտական հմտութեան մասին կանխաւ երբեք լսած չէինք, եպիսկոպոս քառն իմաստին եւ տարողութեան մասին անգամ ամենատարրական տեղեկութիւն չունէր։ Կրնայ ըլլալ անշուշտ՝ որ Ա.

Խոնդկարեան հմուտ կանոնագէտ մը եւ աստուածաբան մը եղած ըլլայ։ Կրնայ ըլլալ նաեւ որ մենք յանցաւոր եւ անգէտ դուրս եկած լինինք՝ Խոնդկարեանի անծանօթ գտնուելով։ Յամենայն դէպս, նշաններ չտեսանք Խոնդկարեանի յօդուածին մէջ՝ որոնք յարգանք պարտադրէին մեզի՝ անոր ձեռնած նիւթին մասին իր հմտութեան եւ դատողութեան նկատմամբ։

Այս տողերը գրելու մտածումն անգամ չունեցանք՝ մինչեւ որ Խոնդկարեանի յօդուածաշարքին ամփոփումը տեսանք Հայկական Հանդէս - Արքեպիսկոպոս - ամսագրին մէջ, անգլերէնի թարգմանուած ու ամփոփուած՝ նիւթին նոյնքան անտեղեկ թարգմանիչի մը կողմէ։ (Տե՛ս յիշեալ Հանդէսին 1957ի դեկտ.ի թիւը, երես 17-27)։

Որքան ալ Խոնդկարեանի ձեռնած եւ Մանտալեանի թարգմանած յօդուածին նիւթը ինքնին կարեւոր եւ հետաքրքրական եղած լինի՝ մենք մտադիր չենք այդ խնդրին ընդարձակօրէն անդրադառնալու։ Վասնզի Գաճիթէի Եպիսկոպոսական Ժողովին մէջ Կիլիկիան Կաթողիկոսութեան մասին տրուած որոշումին կողմնակիցներն ու հակառակորդները այնքան դառնութեամբ եւ ատելութեամբ լեցուած են իրարու հանդէպ, որ որեւէ անկողմնակալ եւ պաղարիւն դատում այդ մասին՝ ընթերցողներուն ուշադրութենէն պիտի վրիպի։ Անոնք հարցում մը միայն պիտի ընեն. «գրութիւնը դաշնակցականներուն ի նպաստ է թէ հակառակ»։ Եւ իրենց հասկացողութեան աստիճանին համաձայն այս հարցումին պատասխան մը տալէ ետք՝ քստ այնմ պիտի դատեն գրողն ու գրութիւնը. Այսպիսի մթնոլորտի մը մէջ, որ դժբախտաբար կը թունաւորէ մեր ամբողջ հասարակական եւ եկեղեցական կեանքը ներկայիս, կարելի չէ սպասել որ լուրջ եւ պաղարիւն դատողութեամբ գրուած որեւէ բան իր

նպատակին հասնի: Ըսինք արդէն՝ թէ Խոնդկարեանի գրութեան բնութիւնը պիտի չընենք եւ այդ գրութեան մէջ խեղաթիւրուած իրողութիւնները պիտի չճշգնենք:

Պէտք է աւելցնենք նաեւ՝ թէ մենք ոչ մէկ կողմէն նախապաշարուած ենք՝ եւ ոչ միւս կողմէն: Մէկ կամ միւս կողմին ի նպաստ կամ հակառակ դիրք մը չունինք: Այս նշումները կ'ընենք տեսական հետաքրքրութիւններով միայն:

Պր. Խոնդկարեան կ'ըսէ թէ Հայ եկեղեցւոյ «ազգայնացումէն» առաջ՝ Տիեզերական ժողովներու կողմէ գրուած կանոնները ի գործու չեն Հայ եկեղեցւոյ համար:

Այս սկզբունքը յիմարական է եւ վտանգաւոր: Վասնզի այսպիսի սկզբունք մը եթէ ընդունուի՝ Հայ եկեղեցին Տիեզերական եկեղեցւոյ մաս կազմելէ կը դադրի, եւ կը դառնայ դատապարտելի աղանդ մը: Ինչ որ բաւ եւ մի լիցի: Պր. Խոնդկարեան թերեւս պիտի մերժէր նաեւ Նիկիական Հանգանակը՝ յիշելով իր դրած սկզբունքին վրայ: Մեր եկեղեցւոյ գոյութեան իրաւունքը անոր Տիեզերական եկեղեցւոյ մաս կազմելուն հիման վրայ կը կենայ մշտապէս:

Պր. Խոնդկարեան կ'ըսէ թէ Նիկիոյ ժողովէն մինչեւ 1917 Հայ եկեղեցւոյ մէջ եպիսկոպոսական ժողով գումարուած չէ:

Պատահարար կը յիշենք հետեւեալ մի քանի ժողովները՝ որոնք գումարուած են եպիսկոպոսներու կողմէ, երբեմն նաեւ ուրիշ հոգեւորականներու մասնակցութեամբ:

Մովսէս կաթողիկոսի օրով, 607 թուականին, գումարուեցաւ միայն եպիսկոպոսներէ բաղկացած ժողով մը՝ Յունաց եւ Պարսից բաժիններու եպիսկոպոսները իրարու հետ հաշտեցնելու համար (ՏԵՍ Օրմանեանի ԱԶԻԱՊԱՏՈՒՄ, հտր. Ա. հատուած 410):

Նոյն տարին՝ Աքրահամ կաթողիկոսի ընտրութեան համար գումարուած ժողովին ալ 50 եպիսկոպոսներու եւ 390 վանահայրերու եւ վարդապետներու մասնակցութիւնը յիշուած է: Աշխարհականներու մասին՝ Օրմանեան իրաւամբ կ'ըսէ թէ Դուինի մէջ պատահարար ներկայ գտնուողներ միայն մասնակցած են եւ ոչ թէ պաշտօնական հրաւերով եկածներ (Անգ, հատ. 413-414):

Ներսէս Շինող կաթողիկոսին օրով գումարուած Դուինի ժողովը, 645 թուակա-

նին, բաղկացած էր եպիսկոպոսներէ միայն, եւ աշխարհականաց մասնակցութիւնը չի յիշուիր բնաւ (Անգ, հատ. 410):

Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսին օրով, 726 թուականին, գումարուեցաւ Մանագկերտի ժողովը, որ եպիսկոպոսաց ժողով մըն էր, ինչպէս կ'ըսէ Ասողիկ Պատմիչ (Անգ, հատ. 573):

Դրիգոր Պահլաւունի կաթողիկոսի ընտրութենէն աւրի մը ետք, 1114ին, Սեւ-Լերան կամ Քեսունի ժողովը գումարուեցաւ նգովելու համար Դաւիթ Թոռնիկեանը, որ Աղթամարի մէջ անկախ կաթողիկոսութիւն մը կը հաստատէր: Այս ժողովին մասնակցեցան միայն եպիսկոպոսներ եւ վանահայրեր (Անգ, հատ. 929):

Հռոմկլայի մէջ գումարուած ժողովը, Դրիգոր Պահլաւունի կաթողիկոսի նախագահութեամբ, 1166 թուականին, կը բաղկանար եպիսկոպոսներէ, վարդապետներէ եւ վանահայրերէ, առանց աշխարհականաց մասնակցութեան: Այս ժողովը կաթողիկոս ընտրեց Ներսէս Շնորհալին (Անգ, հատ. 952):

Դրիգոր Տղայ կաթողիկոսի օրով, 1179ին, Յունաց հետ միութեան Հռոմկլայի ժողովն ալ կը բաղկանար միայն հոգեւորականներէ, եւ ժողովական որոշումը ստորագրուած է միայն եպիսկոպոսներու կողմէ (Անգ, հատ. 1009):

Դաւիթ Արքակազնեցի հակաթոռ կամ աթոռակից կաթողիկոսին Սահ մէջ գումարուած ժողովին ալ, 1208ին, ներկայ էին միայն եպիսկոպոսներ, վարդապետներ եւ երէցներ: Այս ժողովը եկեղեցական կանոններ սահմանեց (Անգ, հատ. 1081-1082):

Սիսի ժողովը, որ գումարուեցաւ 1342ին, վարդապետական խնդիրներու նկատառութեան համար, կը բաղկանար միայն եպիսկոպոսներէ, վարդապետներէ եւ վանահայրերէ, առանց աշխարհականաց մասնակցութեան (Անգ, հատ. 1291):

Երուսաղէմի ժողովին մէջ եւս, որ տեղի ունեցաւ 1651ին, հոգեւորականներ միայն կային, այսինքն՝ եպիսկոպոսներ, վարդապետներ եւ կրօնաւորներ: Այս ժողովին մէջ Ս. Էջմիածնայ եւ Սիսի կաթողիկոսներուն միջեւ հաշտութիւն գոյացաւ եւ կարեւոր կանոններ դրուեցան (Անգ, հատ. 1688):

Այս բոլորը յիրականին՝ եպիսկոպոսական ժողովներ էին: Մինչև 19րդ դար՝ Ազգային եկեղեցական ժողով բացատրութիւնը եպիսկոպոսական ժողով բացատրութեան համազօր էր: Ծիշդ է որ Ազգային ժողովներէն շատերուն մասնակցած են աշխարհական իշխաններ եւ աւագանիներ: Աւելի աչ իրաւունքներ՝ որ աւելի եպիսկոպոսական կէտերէն ժողովներէն եւ օրինաւոր չէ բարեւ, միւրեւ աւելի բարեւորներէն իրենց եւ օրինաւոր է կէտերէն ժողով բարեւ, որոնք չեն յարգէ որ աշխարհական չեն միւր չէ իւր ժողովներէն եւ աւելի չէն իւր ժողովներէն: Եւ մինչ զուտ եպիսկոպոսական ժողովը կանոնական եւ աստուածաբանական անխախտ հիմունքներ ունի, եպիսկոպոսական ժողովին աշխարհականաց մասնակցութիւնը մեր մէջ կանոնական հիմունք չէ ունեցած մինչև ԺՓ. դար: ԺՓ. դարուն է որ Պալատինիայով եւ ապա Ազգային Սահմանադրութեամբ՝ պատմական սովորութիւնը կանոնական հանգամանք ստացաւ: Այս պատճառաւ է որ ներկայիս եպիսկոպոսական ժողովը ինքնին կը զանազանուի Ազգային եկեղեցական ժողովէն՝ բնական տրամաբանութեամբ:

Եպիսկոպոսական ժողովի իրաւասութեան սահմանը պատմութիւնը եւ եկեղեցական կանոններն են որ կը զօնեն: Եպիսկոպոսական ժողովները ունին այն իրաւասութիւնները, զորս կիրարկած են անոնք անցեալին եւ զորս եկեղեցական կանոնները տուած են անոնց:

Սակայն կը շեշտենք թէ այս նշումներն ընելով մեր նպատակը չէ 1956ին Գահիրէի մէջ զուգարուած եպիսկոպոսական ժողովի իրաւասութեանց մասին կամ նոյն ժողովի որոշմանց իրաւացիութեան մասին դատումներ ընել: Այդ մասին չենք ուզեր ըսել որեւէ բան:

Ոչինչ կ'ուզենք ըսել նաեւ Ա. Խոնդկարեանի այն պնդումին մասին թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսին նախաթոռութեան «պահանջ»ը Կիլիկիոյ Կաթողիկոսին վրայ՝ «բռնաբարում» մըն է վերջնոյս «իրաւասութեան» եւ հետևաբար հակասահմանադրական է ...:

Այս վերջին կէտին մասին եթէ ըսելիք մը կայ զայն ընթերցողին կը թողունք որ ըսէ ...

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա. Գ Ի Ր Ն Ե Ր

Հետեւեալ հեռագիրը գրկուեցաւ 29 Յունիսին Ն. Վսեմ. Թագաւանի Վարչապետին:

Է. գտեմ աշխարհ մեր Պատրիարքարանը պատկանում է Ս. Եկեղի կառավարութիւններու բարեպաշտութեամբ: Ձերդ Վսեմութեան կը դիմենք պահելու համար գոյովինակը (Status-Quo): Կը խնդրենք որ չարտօնեն ոմն ապականած մարզու կործանել մեր Պատրիարքարանը: Անիկա կեղծ վաւերութիւնք եւ սուտեր մեքենայած է եւ շատ դժուար ծախսելով մեր բարեխնամ Կառավարութիւնը սխալ առաջնորդած է: Մենք պատրաստ ենք մեր դեմ ելած զգաւարութիւններ ներհեղու: Կը խնդրենք որ անկողմնակալ մարմին մը այս հարցը բնէն նախ հանկարծուր որոշման մը տալու իր, որպէս Ս. Քալաֆի ամենեւնի ինչ Պատրիարքարաններէն միայն դեմ անարգութիւն չըլլայ:

ՏԻՐԱՆ. ԱՐՔԵՊՍ.

Տեղական Հայոց Պատրիարքարանի
Ներսէսյեան

Ս. Արքեպիսկոպոս Պատր. Պաթարեոյ Գերշ. Տ. Սուրբ Սարգ. Փետր. 45ին ճեղքոյնեալ նախաբաններու գրկեց հետեւեալ հեռագիր, կարգ մը անգամաւարեան տարող վաւերացնելու մասին ձեռնակ պահելով մեր բարեխնամ Կառավարութիւնը:

Ն. Վսեմ.	Նախարար Արքայական Պալատի
»	» Գլխաւոր
»	» Վարչապետ
»	» Արքեպիսկոպոս Գործող Նախարար
»	» Ներքին
»	» Պատկանութեան
»	» Երեսօրէնի եւ Երեսօրէնի Կառավարիչ

Կ'ուզեմ Ձեր բարձր նկատման յանձնել այն իրողութիւնը թէ Ն. Վսեմապետութիւն մեր սիրեցեալ Թագաւորին հետ Փետր. 4ին մեր տեսակցութեան ետք, Երեսօրէնի մէջ կարգ մը մարդեր, ընդ որս եւ Հայեր՝

որոնք չեն պատկանիր մեր եկեղեցւոյ, սկսած են եւ կը շարունակեն ստորագրութիւններ հաւաքել, չար եւ անպիտան խնդրագրերու ներքեւ կցելու համար, որոնց պարունակութիւնը ծանօթ չէ նոյնիսկ ստորագրողներուն: Այս պարագան ճիշդ մըն է նախապաշարելու համար բարեխնամ Կառավարութիւնը՝ որ շատ ազնիւ եւ արդար վերաբերում մը ցոյց տուաւ Պատրիարքարանիս հանդէպ:

Թեեւ զիտենք թէ մեր արդարադատ եւ իմաստուն Կառավարութիւնը նմանօրինակ բուլքերը առ ոչինչ կը սեպէ, այնուհանդերձ քոյլ տուէք որ Ձեր ուշադրութիւնը հրաւիրենք այն իրողութեանց շուրջ զոր կը ներկայացնենք այս հեռագրաւ, Ձեզ տեղեկ պահելու համար իրադարձութեանց:

Կը խնդրենք որ ընդունիք անգամ մը եւս մեր շնորհակալական զգացումները:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԼԱՃՆԱՆ

Պատր. Փոխանորդ

Ներսիսեանի Հայոց Պատրիարքութեան

Ս. Արսուոյս Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Մարտին Սպա. 15 Փետր. 1958ին հետեւեալ հեռագիրը ուղղեց Ն. Վեհափառութիւն Հիւսէյն Թաղաւորին՝ շնորհաւորելով Նորին Վեհափառութիւնը եւ Յորդանանի Կառավարութիւնը, Յորդանանի եւ Իրաքի Միութեան հրաշակման առիւ:

Յանուն Սբոյ Յակոբեանց Միաբանութեան եւ յանուն Յորդանանի Հայ ժողովուրդին եւ Հայ եկեղեցիին արտաքին շնորհաւորութիւններ յայտնելու պատիւը ունիմ, Յորդանանի եւ Իրաքի միջեւ դաշնակցային կառավարութեան մը ստեղծման առիւ: Աւախ եւ երջանիկ ենք որովհետեւ այս միութիւնը կը պատանի երկու Քրիստոսեան արժանեւորութեան ժամանակ, որոնք երկու շաբաթիկներն են Հաշիմական Մարգարեական տոնին եւ Մեծն Հիւսէյն ու Ֆէյսալ Թագաւորները Արաբական Զարթոնքի ջանք կը տանին, Արաբներու մեծ ազատարարին հետեւումը վրայէն որ Արաբական անկախութեան եւ միութեան առաջին փամփուռք արձակեց:

Նորին Վեհափառութիւնը նահապետական Ալլիի Որդի Հիւսէյն Թաղաւորը, Բառասուն տարիներ առաջ Հայերը իր հովանաւորութեան

եւ պաշտպանութեան ներքեւ առաւ: Կեցցէ՛ Արաբական Դաշնակցային Միութիւնը, կեցցէ՛ Հաշիմական Կայսերական Թագաւորութիւնը որ ապահովութիւնն է Արաբներուն, իրենց հպարտութեան եւ փառքին ալբիւրը, ինչպէս նաեւ իսլամութեան եւ Բիւսոնեանութեան պաշտպանը Ս. Ներկին մէջ:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԼԱՃՆԱՆ

Պատր. Փոխանորդ

Ներսիսեանի Հայոց Պատրիարքութեան

Իրաքի եւ Յորդանանի Դաշնակցային Պետութեան մը ստեղծումին առիւով, Ս. Արսուոյս Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Մարտին Սպա. հետեւեալ շնորհաւորական հեռագիրը ուղղեց Պատր. 15 Փետր. 1958ին եւ 19 Փետր. 1958ին ստացուեցաւ վերեւ դրուած պատասխանը:

15 Փետր. 1958

Նորին Վեհափառութիւն

Մեծն Ֆէյսալ Թաղաւոր

Պալատ

Ձեր Հաշիմական Վեհափառութեան, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի մէջ ապրող Հայ ժողովուրդի կողմէ կը ներկայացնենք արտաքին շնորհաւորութիւններ՝ Յորդանանի եւ Իրաքի միջեւ դաշնակցային միութեան մը ստեղծումին ուրախալի առիւով: Այս Միութիւնը մեծ Ազատարար երկու քառերուն միջոցաւ կ'իրադարձուի, ան որ 40 տարիներ առաջ Հայերը իր հովանաւորութեան ներքեւ առած էր: Կեցցէ՛ Արաբական միութիւնը, կեցցէ՛ Հաշիմական ազնիւ Թագաւորութիւնը որ Արաբական Զարթոնքի ջանք յառաջ կը տան:

Աստուած Ձեզի հետ ըլլայ:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ.

Պատր. Փոխանորդ

Ներսիսեանի Հայոց Պատրիարքութեան

Պալատ, 19 Փետր. 1958

ԵՆՈՐՀԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՒՐԱԿ

Նորին Գերազանդության

Սուրեն Նպա. Բեմանեան

Պատրիարքարան Հայոց

Երուսաղեմ

Նորին Վեհափառության Մեծն Ֆեյսալ Թագաւորէն հրահանգում եմ Ձեր Միաբանութեան, Ձեզի եւ Ձեր Համայնքի անդամներուն մասուցանել մեր սիրեցեալ Թագաւորին շնորհակալութիւնները, Արաբական միութեան աւիրով Ձեր սխանչելի շնորհաւորութիւններուն համար:

Ձեզի կը մաղթենք առողջութիւն եւ յառաջդիմութիւն:

ԱՐՔՈՒՆԻ ԳԻՒՆԱՊԵՏ

Արաբական Զարօնքի սօնին աւիրով, Ս. Արապա Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Սուրեն Նպա. Ձեզի Փետր. 19 Փետր. 1958 թ. հրահանգէր զգից Յարգանքի Ն. Վ. Հիւսէյն Թագաւորին:

Յանուն Նորին Ամենապատուութիւն Տ. Տիրան Արքեպիս. եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան, իմ անուովս եւ յանուն Յարգանքի Հայ համայնքին, պատիւը ունենալով մեր հաւատարմութիւնը՝ անգամ մը եւս ներկայացնել Ձեզի Վեհափառութեան, Արաբական Զարօնքի սօնին աւիրով, որ սկսած է Ձեր մեծ հօրը կողմէ եւ շարունակուած է Հաշիմական Թագաւորութեան առի անդամներէն:

Կ'աղօթենք որ Աստուած պահէ Ձեզի Վեհափառութիւնը՝ որ պատշաճան է Սուրբ երկրին եւ անոր ժողովուրդին եւ բխսանեալան ինչպէս նաեւ իսլամական արքայութեան:

ՍՈՒՐԵՆ ԵՊՍ. ԲԷՄՀԱՃԵԱՆ

Պատր. Փոխանորդ

Երուսաղեմի Հայոց Պատրիարքարան

Պատահան յատուկ կարգադրութեամբ այս առաւել երեք շաբաթացի մենդեան օրերը պետական տոնական օրհանգիւսեան Ոչ առթիւ պետաւ. կան Նաւագախումբը կը Նաւագէր մենդեան Տաւ. ճարքի մեծ հրապարակին վրայ թափօրներէ առաջ: — Մեր Ս. մենդեան տանին առթիւ, որ քայական Նաւագախումբը Հիւսէյնի 16 Յուն. աւարէն մինչեւ ճարքի առաջ վանքին հիւրը եւ զաւ. եւ Նաւագեց առաջին գիշերը վանքարանէ ժողովուրդին համար: Իրենց արուեստը Ս. թաւ. մանչաց վարժարանի արաւը հանգիստը համար եւ երկիցս ճաշ: Նոյն հիւրատրութիւնը կրկնուեցաւ ի թեմիցէն Նաւագախումբը շատ քան որ արաւ վեր սպարմաւ Ամանն Ոչ առթիւ, Նաւագախումբին պետը շնորհակալութեան հետեւեալ Նաւ. մակը աւելած է Ամեն. Որրապան Պատրիարքին:

21 Յունիս 1958, Ամանն

Նորին Ամենապատուութիւն

Տ. Տիրան Արքեպիս. Երուսաղեմ

Տեղապան Հայոց Պատրիարքարան

Երուսաղեմ

Ձեզի Ամենապատուութիւն

Կը վստահանք որստին շնորհակալութիւններս յայնչեւ Ձեր սխանչելի եւ մեծանն հիւրատրութեան հիմար եր Ս. մենդեան սօնին աւիրով, իրեւ Ձեր հիւրը մեծ, Յարգանքի բանակին նաւագախումբը, մեծ գնդ երջանիկ զգացին, վստահ զգացին հանքէ մեր ազգականներս: Երջանակին մէջ կը գտնուէին: Ձեր հիւրատրութիւնը այնպիսի սպասարարին մը ներգործած է մեր մեքեան եւ արեւուն մէջ որ ժամանակի ընթացին պիտի չմոռցուի:

Կ'աղօթենք որ Տէր պատշաճան եւ ազաւ կոյտցանէ Ձեզ փորձանքներ: Աստուած Ձեզի երկար կեանք պարգեւէ որպէս Ձեր ժողովուրդը բարգաւաճ օրեր ապրի: Իրապէս դաւ քարէ ճովին: Էք մեր սիրեցեալ Յարգանքի յարգելի Հայ ժողովուրդին:

Շատ երջանիկ պիտի ըլլանք երբ պատիւը բնէ մեզի այցելելու, որպէս Ձեր օրհնութիւնները ստանալու առիթը անգամ մը եւս ունենանք:

Վերջապէս կ'աղօթենք որ Ձեզի Ամենապատուութեան հովանին ներեւ Հայոց ժողովուրդը բարգաւաճ եւ յառաջդիմէ:

Աստուած Ձեր բոլորին հետ ըլլալ:

Ձեզ անկէ յօրէն

ՍԱՆԱՀ ՊԱՐՏԱՍԻ

Զարդանանի Արաբական Բանակի
Նաւագախումբը Պետ

նաստիպեցաւ Գորգանանի ռատիօ կայանէն ի տիրուած աշխարհի: Կարգապահեցաւ Ս. Թննդեան Աւետարան, երգութեան «Փառք ի բարձունս» և այլ շարականներ, որոնցմէ ետք Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը տուաւ հանուար հայութեան ուղղուած իր Ս. Թննդեան պատգամը ու վերադարձաւ Երուսաղէմ: Այս արարողութեան ներկայ էին Ս. Այրիւն մէջ, Երուսաղէմի Վսեմ. Կառավարիչը, իր փոխանորդը, Ռատիկանապետը և Բեթղեմէմի Կառավարիչն ու Ռատիկանապետը: Ասկէ անդին մատուցուեցան զոյգ Ս. Պատարագներ: Վերջինը մատուց Ս. Այրիւն մէջ Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան, որ կատարեց նաև «Զորքնէք» արարողութիւնը: Հանդիսութիւնները աւարտեցան արևածագին, երբ Միաբանութիւնը թափօրով Ս. Թննդեան մեր վանքը բարձրացաւ, և տեղւոյն Ս. Յակոբայ եկեղեցիին մէջ կատարուած Աւետարանի ընթերցումով վերջ գտան գրեթէ ամբողջ գիշերը ընդգրկող Ս. Թննդեան այս արարողութիւնները:

Աւանդական նախահաշին ետք, Միաբանութիւնը ինքնաշարժերով ճամբայ ելաւ դէպի Երուսաղէմ, ուր հասաւ ժամը 9ին և բարձրացաւ Պատրիարքարանի լուսազարդուած մեծ դռնիցը: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Ս. Թննդեան աւետիսով օրհնեց ու արձակեց ամէնքը:

ԱՆՈՒՄՆԱԿԱԶՈՒԹԻՒՆ

26 Յունուար Կիրակի, Սեւանախոյուքեան տունին առթիւ, առաւօտեան ժամը 8.30ին, Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանեանի զխաւարութեամբ, «Հրաշափառ»ով հանդիսաւոր մուտք կատարուեցաւ Ս. Գարութեան Տաճարէն ներս, ուր Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ հանդիսաւորապէս պատարագեց Գեր. Տ. Սուրեն Սրբազան. Ս. Պատարագի ընթացքին, ժառնգ. Վարժարանի բովանդակ աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւնը: Ս. Պատարագի երգեցողութիւնները կատարուեցան Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանէ ղեկավարուած երկսեռ խումբի կողմէ: Վանք վերադարձին, Միաբանութիւնը «Լոյս ի լուսոյ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Տնօրնէք» արարողութիւնը: Օրհնուեցան Ս. Աթոռայ բարիքները: Ապա, թափօրը մեկնեցաւ վանքի մասունը, փութը, խոհանոցն ու սեղանատունը, շոն ևս կատարելու համար յոյն արարողութիւնը: Օրհնուեցաւ նաև, ի միջի այլոց, օրուան ճեղքայի աւանդական ճաշը:

ՏՈՆ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ

Զորեքշաբթի, 19 Փետրուարի կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ հանդիսաւորապէս պաշտուեցաւ Վարդանանք նախատօնակը: Հանդիսապետն էր Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանեան:

Յաջորդ օր, Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց, ըստ ընկալեալ սովորու-

թեան, ժառնգ. Վարժ. և Ընծայարանի Տեսուչը՝ Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան և քարոզեց: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրեն Եպս. նախագահեց հոգեհանգստեան պաշտամունքին:

21 Փետր. Ուրբաթ օրը, ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Քաղաքիս Ասորոց Ս. Մարկոս եկեղեցւոյն մէջ. Պատարագեց Հոգ. Տ. Լեւոն Արդ. Արշիւան և քարոզեց Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուկեան: Ս. Պատարագէն ետք Միաբանութիւնը պատուաւորուեցաւ Ասորոց Եպս. Թոմասուրդէն Երթ ու դարձի թափօրեւրոն նախագահեց Գեր. Տ. Սուրեն Սրբազան:

Շաբաթ, 22 Փետրուարի երեկոյեան ժամերգութեանէն ետք, ըստ սովորութեան, Մայր Տաճարի խորաններն ու զխաւար օրբանկարները վարագուրուեցան:

23 Փետր. Կիրակի, Բուն բարեկեցեացի առթիւ, փակեալ-խորանի Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ:

Զորեքշաբթի, 26 Փետրուարի առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Արեւազայ» առաջին ժամերգութիւնը:

ՏԵՍՈՒՆԸՆԴԱՌԱՋ

Նոյն օրը կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Տեառնընդառաջի հանդիսաւոր նախատօնակը: Ապա կատարուեցաւ «Անդառան»:

Դիւնրասկիզքին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Հսկման» արարողութիւնը:

Յաջորդ օր, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մեծ հանդիսաւորութեամբ Ս. Պատարագը մատուց և քարոզեց Գեր. Տ. Նորայր Եպս. Պաղարեան, «Ապաքէն զուք Տաճար Աստուծոյ կենդանւոյ էք» բնարանով:

Աւր. 28 Փետրուարի կէսօրէ վերջ, Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ (Զեռագրատուն Ս. Աթոռոյ) պաշտուեցաւ տօնին նախատօնակը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Եւ. 2 Յունուարի կէսօրէ առաջ ժամը 11ին, Քաղաքիս նոր նշանակուած Պապական Նուիրակ Դեր. Թօզէֆ Սէնթի իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

Աւ. 6 Յունուարի կէսօրէ առաջ ժամը 10ին, Արար Անկիլքաններու Հոգեւոր ներկայացուցիչ՝ Նորին Գերապատուութիւն Նահնկ Ա. Գրպէլէի եպիսկոպոսական ձեռնադրութեան արարողութեան, յանուն Պատրիարք Հօր ներկայ գտնուեցաւ Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանեան, իր հետ սենեակով Հոգ. Տ. Կիրակ Վրդ. Գարիկեանը: Արարողութիւնը տեղի ունեցաւ Քաղաքիս Անկիլքան եպիսկոպոսարանին մէջ. Զեռնադրութեանէն անմիջապէս ետք տեղի ունեցաւ մասնաւոր հիւրասիրութիւն:

ԴՆ. 8 Յունուարի առաւօտեան ժամը 10ին, Յունաց Ս. Դննդեան տօնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Սրբաբանութեան, Հնորձաբարութեանց զմայ Յունաց Պատրիարքաւորն, որով հար շարի խօսմամբ մը այցիկեց Դպարոն, Ասորոց և Հայկէաց Սեմաւորներուն:

Ուր. 10 Բռնեռ. արվես. Ա. Աթոռ զերադարձաւ
Ա. Ուխտիս Միտրաններէն Հոգ. Տ. Զատէն Վրդ.
Զինչինեան՝ Խ՝ Ա. Ինչեղեան արարողութեանց
Նախադասէրս հասարակ երկու շարաքներէ ի վեր
կը գտնուէր Այգեքսանդրիս:

Դոյն օրը, Բեթղեհէմի Դալմադամ Տիար
Համարի Խալաֆ, Լ. Իրնեղեան Վանուց Տեսչին
Հետ, այցելեց Սահման. Լ. Պատրիարք Հօր:

Երոյն արք. Ամիրաւոյի Բողոքանանի Ներկայա-
ցուցիչ Պր. Դաւթբ. Ամիրաւոյի պաշտօնեայ Պր.
Անդրանիկ Պաղբաճեանի հետ, այցիկեց Ամեն. Ս.
Պատրիարք Հօր:

Եղյն օրը կէսօրէ փերջ ժամը փին, ԱՆԵՆ. Ո.
Պատրիարք Հայրը ընդառաջելով Անկիլքան Գեր.
Տ. Մաքիմէնէս Արքեպս.ի հրաւերին, ներկայ
շնորհակցեալ եղիսկոպոսական ժողովի անդէ՛րն
յիստինքն Անկիլքան եղիսկոպոսարանին մէջ:

ԴՆ. 14 Զօհուարին, քսա շին Տոմարի հոր
Տարւոյ աթիւ, Պատրիարքարան շնորհաւորու-
թեան եկաւ քաղաքիս վսեմ. Գաղաքագետը
Ռաուհի էլ-իսթիլոյ, ընկերակցոյ թեմար քաղա-
քագետարանի կողմին. եկան նաեւ լիբանան-
եան, իրաքեան եւ եգիպտական շիյադաւանները

Դոշն օրը կէսօրէ միւրջ ժամը 2ին, քստ աւան-
դահան սովորութեան, Աւեն, Սրբ. Պատրիարք
Հայրը, Տեօքէն ժողովոյ անդամներուն հետ, կա-
ղանդի առթիւ պաշտօնապէս այցիւից ժառանգ.
վարժարան՝ ուր շքեղօրէն զարդարուած սրահին
մէջ կատարուեցաւ մասնաւոր հանդիսութիւն:
Վարդան Սրբ. օւղեքմ մը կարգաց: Պատրիարք
Սրբազան Հայրը խրատական մը խօսեցաւ աշա-
կերտութեան, օրիշ ետք Տեսչարանին մէջ տեղի
ունեցաւ հրապարտութիւն:

ԴՆ. 15 Բուռնուարին, Արարական իրաւի տօ-
նին առիթով, Քաղաքիս վսեմ. Մուհաթթըղի կողմէ
եղած հրաւերին ընդառաջելով, ի գրմաց Ամեն.
Ս. Պատրիարք Հօր, Գեր. Տ. Սուրէն եղաւ. Բէմ-
հանձնան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Վազգէն
Արղ. Դըպրըսլեանի և Տիար Կարպիս Հիդլիեանի,
շերկայ գտնուեցաւ օրուայ հանդիսութեանց*
Հարամ Եկրֆի մէջ՝ օրուն յաջորդեց մասնաւոր
հիւրասիրութիւն Այգաթի տան մէջ:

ԲՆ. 20 Գուճուտյարին, Ս. Ծննդեան տոնին առի-
թով, առաւօտեան ժամը 1 (էն սկսեալ, յաջոր-
դաբար Պատրիարքարան այցելութեան եկան
Յուճայ Պատր. Փոխանորդը, Յրանչկահեան Սիա-
րանութեան Կրթութոր, Լատինաց Ամեն. Ս.
Պատրիարքը, Դպտոց և Աստուոց եպս. Փոխա-
նորդները և Հապէշաց եպ. ք^ր իրենց Սիրաբանու-
թեան անդամներով, Անկիբեան Արքեպս. Սա-

բռնիթեկնութեամբ Դար. Փոխանորդը, Պապական Տոմարակը, Հայ և Յոյն Կաթողիկոսներու Փոխանորդները, Լուսաւորականներու Երէջը, Դոմինիկեաններու վանահայրերը, Քաղաքիս վսեմ. Մուհաֆիզը՝ Հասան Էլ-Քէթիօղ, ընկերակցութեամբ վսեմ. Մաթթաւորքիին և Զինուորական ու Ստանկանական ընդհանուր պետերուն, Սէտաի Սարաիոյ Բնդէ. Հիւպատոսը, Քաղաքիս վսեմ. Մի. ֆիթին, Երասապէմի և Երիքոյի Երեսփոխաններ Տեսարք Քաթիկ Սրայքաթ և Իկոբ Պարաւն, Տիար Լուծֆի Մուղրապի, Հին Քաղաքի Ստիկանապետն ու իր զօրանորդը, Լիէզոնի Տնօրէն Տիար Իմադիլ Նաշաշիպի, և այլ Սրար և Հայ ազնաւոր անձնաւորութիւններ:

Եր. 8 փետրուարի կէսօրէ վերջ ժամը 3.30ին,
Հոգ. Տ. Տ. Թորգոմ և Զուէն վարդապետներ
ներկայ եղան Քաղաքիս Հնազանդական Տնօրէ-
նութեան կողմէ երկօրօրի պեղումներու մասին
ստուած դասախոսութեան:

Ուր. 14 Փետրուարին, Յորդանան և Իրաք
կադմէիկն միացեալ զանկակոյթիւն մը, Ոյս
ուրախ առիթով, անմիջապէս Պատրիարքարանի
վրայ բարձրացեցաւ պիտակն զորք և կ. վ.
ժամը 2-30ին մօտ քսան վաղկեան տեղի ունե-
ցաւ օրուայ ուրախ լուրը ծանուցանող զանգա-
կահարուսթիւն՝ միւս քոյր համայնքներու հետ:

Եր. 15 փեսացուսին, յանուն Պատրիարքութեան, Ռաբանութեան և Երզնանի հայ համայնքին, շնորհատրութեան հետադիրներ յղուեցան Երզնանուի Ն. Վ. Հրաչէին և Իրաքի Ն. Վ. Ֆէյսայ թաղապետութեան:

Դոյն առաջ տա ժամը 10ին, Գեր. Տ. Սուրէն
Եղաւ, հետեւ ունեկնարդ Հոգ. Տ. Վաղգէն Աբեղան
և Տիար Կ. Հինգիսանը, յանուն Պատրիարքա-
րանի, Միաբանութեան և Զորղանանի մերազն
ժողովուրդին, շնորհաւորութեան զեպս Վսեմ.
Մուսաֆըղին, ներկայացնելու խնդակցութիւնը
Զորղանան - Իրաքեան միապետն առթիւ :

Շարաթ և կրթակի օրերը պետական տօն հռչակուեցաւ։ Այս առթիւ չքեղօրէն դարդարուեցաւ և զրօշազարդուեցաւ վանքի աւագ դուռը, եկեղարական լոյսեր ազուցուեցան և վանքի զրան ճակատը դեռեղուեցան իրաքի և Զորքականի գոյգ Հաշիմական թաղաւորներու նկարները, երբք գիշեր տեղի ունեցաւ լուսավառութիւն։

ԴՆ. 19 փետրուարի կէսերէ առաջ ժամը 11ին, Գեր. Տ. Սուրէն Եպս. և Տիրար Կարպիս Հինգըլ-եան շնորհաւորութեան գացին Բաղաքիս Իրաք-եան Ընդհանուր Հիպատոս Վսեմ. Հիքմէթ Պէշ Սիւլէյմանին. Տ. Սուրէն Սրբազան յայտնեց իր անկեղծ շնորհաւորութիւնները յանուն Պատ-րիարքարանքիս և առջիւրդին, Իրաքի և Յոր-դանանի միացման ժողովուրդին:

**«ԱՌՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒՂՈՒՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱՅԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ,
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

«Նոր էջ» Գրական Խմբակցությունը (Թէրան) ստացանք. — ա) ԱՄԲՈՂՋ ՍՐՏՈՎ — Գ. Խաննեց: ք) Եթէ ԱՊՐԻ — Ա. Սալբն: գ) ՉՈՐՍ ՀՈՂՄԵՐԸ ԵՒ ԵՍ — Ա. Մկրտիչ: ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ — Ա. Ֆրանկիւբան (նուիրատու): ԹՈՒՂԹ ԱՌ ԵՐԵՒԱՆ (Ը. Տպաղթ.) — Ա. Մառուկեան: Հրատ. և նուէր էտփանի: ԱՆՅԲԵՐ ՈՒ ԱՆՁԵՐ — Յովհ. Ս. Ալիքսանեան: Նուէր Տիկ. Ա. Ալիքսանեան: ՍՐԵԱՆ ՎՐԷԺԸ — Ա. Չիլիկիբեան (նուիրատու): TREASURES OF WISDOM — Jack Madaghian (donor). ՉՈՒՍԹԵՆՈՅ — Ա. Օրագեան (նուիրատու): ԱՏԼԱՍ ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՍՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ: Նուէր Օնիկ Սարգիսեան: READER'S DIGEST — Condensed Books. Նուէր Գառնիկ Տէտէեան: ՅԵՂՈՓՈՒԵԱԿԱՆ ԱԼՊՈՄ (Բ. Շարք, Թիւ 6) — Հրատ. և նուէր Աւոյի: ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳՐԱՆ — Նուէր Կ. Տօնիկեան: Տ. Գարեգին Վրդ. Սարգիսեան կը նուիրէ. — ա) ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ: ք) Ս. ԳՐԻԳՐ ԼՈՒՍԱՆՈՒԹԻՒՆ ՍՋՆ ՈՒ ԻՐ ԴՈՒՐԸ: ՆՈՅՆԱՆ ՏԱՊԱՆԸ — Սարգիս Ս. Ֆրանկեան (նուիրատու): Տիգրան Զէյթունցեան կը նուիրէ. — ա) ՖԻԼՅՏԷՐԻ ԾՈՒԷՆ — Տպ. Գառնիկ, 1950: ք) ՆՈՐ ՄԵԹՈՏ ԵՐՈՎՇՏՈՒԹԵԱՆ (Ա. Շրջան) — Գառնիկ, 1938: ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. - Ի ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ: ԱՐԺԷԹԻՆԱՀԱՅ ՍԿՈՒՏԱԿԱՆ ՕՐԱՅՈՅՑ — Նուէր Կ. Տէր Մարտիկեան: ԱՂՕԹ Տ. ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱՆՈՅ — Հատուով Խոստովանիմ (6 լիգուներով): Նուէր ԱՄԲՈՂՋ ՍՐՏՈՎ — Գ. Խաննեց (նուիրատու): [Յովհ. Նալպանտեան: ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԴՐՈՇԻՆ — Յովհ. Պապէսեան (նուիրատու): Ֆրէզնո, 1956: ԾԱՂԿԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ — Յարութիւն Յ. Վրդ. Մուշեան (նուիրատու): ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՑԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ — Դպրոցաց և ընտանեաց համար: Կ. Պոլիս, 1889: ՔԻԹԱՊԸ ՄՈՒԴՈՏՏԷՍ — Պէյրուի, 1927: ԵԶՈՎԸՍԸՆ ՄԻՍԱԼԼԱՐԸ — Հալէպ, 1931: ՄՕՆԹԷ ԳՐԻՍՕ (Թրքերէն) — Ա. Բ. և Գ. հատորներ: ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՐԴԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ — 1946: ԱՅԿԵՍԱՆ — Մասն Բ. — Հ. Անանիա Կոնտագեան: Վենետիկ, 1914: ՀՐՈՇԱՆՈՐԾ ՀԱՅԸ — Նշան Պէշիկթաշլեան: Հրատ. և նուէր էտփանի: ԿԱՐԳ ՆՈՒԱԿՍԵՆՈՅ ԵԿԵՂԵՑՈՅ — Արտահանեալ ի մեծ Մաշտոցէ: ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՅԻՆ — Ա. Տէր Միհասեան (նուիրատու): [Բաշի: ԱՏՏՈՒԱՅՈՇՈՒՆԸ ԵՒ ՈՇԽԱՐՀԱՐԸ — Յ. Մարթեան: Հրատ. և նուէր «Մարմա-ՀԱՅՐԷՆԷ ԳԵՐԱՆԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ — Դոկտ. Տիրայր Ֆրոնցեան (նրա): Միւնիխ: ՄԱՀՈՒԱՆ ՇՈՒՔԻՆ ՏՕԿ — Անուշաւան Սիմոնեան (նուիրատու): ԵՐԱԳԻՐ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ THE FACULTY OF COMMERCE ՈՒՍԱՆՈՂԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ — Նուէր Անուշաւան Սիմոնեան: [«Էջմիածին» Ամսագրէն: ՄԵՐ ՎԵՐԱՇՆՈՒՆԻՐ ԵՒ ԱՆԹԻԼԻԱՍ — Խօսք Տիար Յ. Խաչմանեանին: (Արտատպուած ԶԱՌԹՈՒԹԻՆ ՎՐԱՅ (Պատմութեան) — Տիգրան Վարժապետեան (նուիրատու): ՍԵՒ ԿԱԿՈՁԸ — Ա. Տիւմա: Թարգմանեց Գէորգ Իփեան (նուիրատու): ՈՐԻ ԿԵՐԹԱՆ ԵՐԻՏԱՍԵՐԴՆԵՐԸ — Սարգիս Ս. Ֆրանկեան (նուիրատու): MONNAIE DE BRONZE INEDITE (Extrait) — Նուէր Պերճ Մ. Կարապետեան: MONNAIES QUADRILINGUES AU NOM D'ABAGHA — Նուէր Նոյնէն: [Միւնիխ: ՔՐԻՍՏԻԱՆՈՍԻ ՃՍՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ — Յովհ. Պրնեան: Հրատ. և նուէր Գրիստ. Զանից (Շարունակիկ)

1958-ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ԵՐՈՒՍԱՊԷՆԵՆ

Ամեն. Ս. Պատրիարք Հայր՝
Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանեան՝
Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան՝

Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան՝
Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան՝
Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան՝

Հոգ. Տ. Կլարեղ Վրդ. Գաբրիկեան՝
Հոգ. Տ. Յովսէփ Աբղ. Մամուր՝
Հոգ. Տ. Դաւիթ Աբղ. Սահակեան՝
Հոգ. Տ. Արիս Աբղ. Շիրվանեան՝

Հոգ. Տ. Օհան Աբղ. Գապագեան՝
Բար. Յակոբ Աբղ. Թաշճեան՝
Միաբան Ռաֆայէլ Ճէնաղեան՝
Տիար Նորայր Արսէնեան՝
Տիար Սահակ Գալաճեան՝
Տիար Կարապետ Յակոբեան՝

Տիար Մուրատ Մանուկեան՝
Տիար Մովսէս Ճանոյեան՝
Տիար Պետրոս Հինդիեան՝
Տիար Յակոբ Թաղուորեան՝
Տիար Թաղուոր Մանուկեան՝
Տիար Նշան Ինկիլեան՝
Տիար Յարութիւն Յակոբեան՝
Տիկ. Արսինէ Քաջախեան՝
Տիկ. Զապէլ Օհանեան՝
Օր. Ասրինէ Շէօմէլեան՝

ԱՄՖԱՆԵՆ

Տիար Արթուր Բանքաշեան՝

Ս. ԷՉԸԻԱԾՆԵՆ

Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արթուրեան՝

ՊԵՂՈՐԵՆ

Հոգ. Տ. Գէորգ Աբղ. Նազարեան՝
Հոգ. Տ. Գիւտ Աբղ. Նազգաշեան՝

ՓԱՐԻՂԵՆ

Գեր. Տ. Սերոփէ Եպս. Մանուկեան՝

ԱԴԵՐԻԿԱՅԵՆ

Արթ. Տ. Վարդան Քհ. Աւագեան՝
Տիար Կարապետ Հովսէփեան՝
Օր. Խանըմ Սարգիսեան (Ֆրէզնո)

Տիար Գէորգ Ներսոյեանին (Հալէպ)՝
Տիար Գեղամ Տանձիկեանին (Պէյրութ)՝
Պողարեան Գրատան (Հալէպ)՝
Տիար Հարօտ Ագամեանին (Տօրքէսթըր)՝
Տիար Սարգիս Ենիգոմէնեանին (Անթիլիաս)՝
Տիար Անդրանիկ Մանուկեանին (Պաղատ)՝
Արթ. Տ. Խ. Քհ. Գերմանիկեանին (Հալէպ)՝
Տիար Մովսէս Բարիլուսեանին (Էջմիածին)՝
Տիար Մովսէս Խաչիկեանին (Նիւ Ճըրգի)՝
Տիար Միսիթար Գաբրիկեանին (Նիւ Եօրք)՝
Կարապետ Էօմէն Թիսսէրեանին (Հոմ)՝
Տիար Վահան Ստեփանեանին (Կալկաթա)՝
Տիար Յովհաննէս Շիրվանեանին (Պէյրութ)՝
Տօքթ. Պահրի Քիթիէի (Հալէպ)՝
Տիար Կարապետ Փաթանեանին (Հալէպ)՝
Տիար Գրիգոր Թաշճեանին (Պէյրութ)՝
Տիար Մարգար Հէքիմպաշեանին (Պոլիս)՝
Տիար Ղազարոս Գարակէօղեանին (Պոլիս)՝
Ազգային Մարգական Միութեան (Ամման)՝
Տիար Սահակ Յակոբեանին (Լոս Անճէլըս)՝
Տիար Վարդան Վարդանեանին (Թօրոնթօ)՝
Տիար Միհրան Գալպիեանին (Լոնտոն)՝
Տիար Յակոբ Ճանոյեանին (Տիթրոյթ)՝
Տիար Յովհաննէս Պապալեանին (Պոլիս)՝
Տիար Նշան Առաքելեանին (Աղեքսանդրիա)՝
Տիար Սարգիս Մանուկեանին (Վիեննա)՝
Թոշնոց Բոյնին (Ճիպէյլ՝ Լիբանան)՝
Տիար Դաւիթ Գարաշեանին (Գալիֆօրնիա)՝
Տիար Արտաշէս Քաջախեանին (Պէյրութ)՝
Տիար Վահան Օհանեանին (Տիթրոյթ)՝
Տիար Սարգիս Ասլանեանին (Քուէյթ)՝
Գոնեալեան եղբայր (Պէյրութ)՝


Տիար Կարապետ Միհրանեանին (Նիկոսիա)՝

Տիար Հայկ Օհանէօսեանին (Գահրէ)՝
Տիար Անուշաւան Սիմոնեանին (Պէյրութ)՝

Տիար Գրիգոր Նազարեանին (Թէհրան)՝
Տիար Ստեփան Քիւրքճեանին (Դամասկոս)՝

Տիար Մ. Յովհաննէսեանին (Մօնթէգլիտէօ)՝
Տիար Արշակ Սարգիսեանին (Ֆրէզնո)՝

Տիար Տիգրան Պապալեանին (Նիւ Եօրք)՝
Տիար Պարսամ Պարսամեանին (Տիթրոյթ)՝
Տիար Մ. Գաբրիէլեանին (Սան Ֆրանչիսկօ)՝
Ֆրէզնոյի Հանրային Մատենադարանին՝
» Ս. Երրորդ. Եկղ. Մատենադարանին՝



ՄԵԾԱՆՈՒՆ ԳՐԱԳԷՏ-ՔՆՆԱԳԱՏ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳԱՍՏԱԳԻՐՔԸ

(Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱՅ ՎԱՍՏԱԿԸ
(1850 - 1950)

Ազգային վարժարաններու բարձրագոյն կարգերուն եւ երկրորդական վարժարաններուն համար կարեւոր դասագիրքը:

Բազմաթիւ կենսագրական ծանօթութիւններ, հարխրաւոր գրական վերլուծումներ, վարստի շարագրական նիւթեր եւ բացատրութիւններ:

ՄԱՔՈՒՐ ԹՈՒՂԹ Եւ ՇՔԵՂ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Էջ՝ 688

Գին՝ ՄԷԿ Արեւիկ

Սուրիա - Լիբանան 10 Լ. Ոսկի, Ամերիկա 5 Տոլար, Ֆրանսա 1500 Ֆրանկ:

ՏՊԱԳՐԱՆ ՍՐԵՈՑ ԵԱԿՈԲԵԱՆՑ

ՀՐԱՆԳ Ք. ԱՐՄԷՆԻ

ՊԱՊ ԱՐՇԱԿՈՒՆԻ

(Պատմա-Բանասիրական երկասիրութիւնը)

Էջ՝ 318

Գին՝ 250 Ֆիլլ

تصدرها - بطريركية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النياحة الاسقف هايكازون أبراهاميان
يناير - فبراير ١٩٥٨ تطبع في مطبعة دير الارمن - القدس العدد ١ - ٢

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.